Azg
Ազգ
6 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2008 ՇԱԲԱԹ 227 (4121)

Սոչիսակի երկրաշարժի 20-րդ տարելիցի միջոցառումներ

Սոչիսակի աղեսալի երկրաշարժի 20-ամյակի միջոցառումներին մասնակցելու նպատակով Հայաստան կժամանեն ավելի քան 20 երկրների պատվիրակություններ: Ինչպես «Արմենպրեսին» տեղեկացրին երկրաշարժի 20-ամյա տարելիցին նվիրված միջոցառումների կազմակերպման պետական հանձնաժողովից, հրավիրված էին բոլոր այն պետությունների ներկայացուցիչները, որտեղ արհավիրքի օրերին օգնության ձեռք մեկնեցին Հայաստանին: Հյուրեր կլինեն նախկին ԽՍՀՄ պետություններից, Հունգարիայից, Վատիկանից, Շվեյցարիայից, այլ երկրներից: Սերբիայից եւ Ռուսաստանից կժամանեն նաեւ այդ օրերին օդանավի վթարի հետեւանքով զոհված օդաչուների հարազատները: Դեկտեմբերի 7-ի միջոցառումներին ներկա կլինեն Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական ավելի քան 35-40 ներկայացուցիչներ: Պատվիրակությունների անդամները դեկտեմբերի 6-ին կայցելեն Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի Ծիծեռնակաբերդ հուշակոթող, Ս. Փարաջանովի թանգարան, Մատենադարան, Մայր աթոռ Սբ Էջմիածին: Հայաստանի պատմության թանգարանում կբացվի «Քո ցավն իմ ցավն է՝ 20 տարի անց» վավերագրական նյութերի ցուցահանդեսը: Արամ Խաչատրյան մեծ համերգասրահում «Մոսկվայի վիրտուոզներ» կամերային նվագախմբի կատարմամբ կհնչի Մոցարտի «Ռեքվիեմը»:

Դենիել Ֆրիդը կրկնում է՝ Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը կարգավորման գլխավոր սկզբունքն է

Էդվարդ Նալբանդյանը ընդգծում է երկու այլ սկզբունքներ՝ ինքնորոշման իրավունք եւ ուժի գործադրումից հրաժարում

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ
«Արմենիան օիփորթերի» մեկնաբան, «Ազգի» համար
Հելսինկի

Միացյալ Նահանգների պետքարտուղարի տեղակալ Դենիել Ֆրիդը երեկ Հելսինկիում հայտարարեց, որ Ադրբեջանի տարածքային ամբողջականության սկզբունքը կարգավորման հիմնական սկզբունքն է: Ամերիկացի բարձրաստիճան դիվանագետը մամուլի ասուլիսում մեր հարցին ի պատասխան բառ առ բառ կրկնեց այն, ինչ նախօրեին ասել էր Մինսկի խմբի համանախագահ Մեթյու Բրայզան:

Պարոն Բրայզայի հայտարարությունից հետո, ինչպես տեղեկացրել էին «Ազգի» երեկվա համարում, հայ լրագրողներին մոտեցավ նախարար Էդվարդ Նալբանդյանը եւ կասկածի տակ դրեց, թե ամերիկացի համանախագահը կարող է նման բան ասած լինել:

«Ես կցանկանայի հավատալ, որ

Մեթյու Բրայզան այդպիսի հայտարարություն չի արել, որովհետեւ դա համանախագահի մակարդակի հայտարարություն չէ, այլ այնպիսի մի մարդու, որը չի ցանկանում, որ ճիշտ եւ բնական հունով ընթանան, շարունակվեն բանակցությունները: Հուսով եմ, որ նման հայտարարություն նա չի արել, բայց պետք է նորից նրան հարցնել, երբի որիշ բան է ցանկացել ասել, այդպես է ստացվել: Կամ՝ կցանկանայի նորից հավատալ, որ ինքը նման հայտարարություն չի արել», ասել էր Նալբանդյանը եւ հեռացել:

Մեթյու Բրայզան, հավանաբար հայկական կողմի հորդորների արդյունքում, մոտեցավ հայ եւ ադրբեջանցի լրագրողներին ասաց, որ կարգավորման հարցում կարեւոր են Հելսինկյան ակտի բոլոր երեք սկզբունքները՝ ազգերի ինքնորոշում, տարածքային ամբողջականություն եւ ուժի գործադրումից հրաժարում:

Երեկ սակայն Ֆրիդը Հայաստանին նյարդայնանալու նոր առիթ տվեց: Շահարկումներից խուսափելու նպատակով ներկայացնենք մեր հարցը Ֆրիդին եւ նրա պատասխանը:

Տես էջ 4

20-ՐԴ ՏԱՐԵԼԻՑ

Երկրաշարժի 20-ամյակի առթիվ

Վաղը լրանում է երկրաշարժի 20 տարին: Այս առթիվ գյումրեցի խորհրդարանական **Հովհաննես Մարգարյանը** հիշեց 2006, 2007 թվականների «**Ազգի**» հրապարակումները, երբ գրվել էր, թե չի կարելի զարգացման գոտի համարել մի տարածաշրջան, որտեղ շուրջ 7 հազար անօթեւաններ կան: Նրա կարծիքով՝ 2008-ին կարեւորագույն քայլ կատարվեց աղետի գոտի հասկացությունը վերացնելու առումով՝ վերջերս, ամիսներ առաջ, որպես կոալիցիոն քաղաքական առաջնահերթություն, մեր երկրում ընդունվեց աղետի գոտու բնակարանաշինության խնդիրը, եւ նախագահի հանձնարարականով կառավարությունը մշակեց հայեցակարգ աղետի գոտու վերաբերյալ, որը թույլ կտա առաջիկա 3-4 տարիներին աղետի գոտում վերջնականապես լուծել անօթեւանության խնդիրը: 7 հազար անօթեւանից 4 հազարը դեռ Գյումրիում է՝ 2009 թյուրեղով 400 բնակարան կառուցելու միջոցներ են հատկացված, որի շնորհիվ 1000 ափսատեղ էլ կստեղծվի:

Հ. Մարգարյանին թողնենք իր՝ հույսերով լի խոհերի հետ, իսկ մեր կողմից ավելացնենք, որ «Ազգը» թեեւ սեւ ակնոցով նայելու սովորույթ չունի, բայց Գյումրիում եղած ամեն ոք տեսնում է թե՛ փոփոխությունը, թե՛ այն բազմաթիվ թերացումները, որ պատասխանների բարեխղճության ու ուրացավության դեպքում հասատ կպակասեին, ու առավել կթեթեւանար երկրաշարժի խանամյակ թեւակոխած ու բազմաթիվ հոգսերի տակ կքած հասարակ գյումրեցու վիճակը: Մ. Խ.

Խոնարհումի երեկո

Երեկ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնում տեղի ունեցավ Սոչիսակի երկրաշարժի 20-ամյակին նվիրված խոնարհումի երեկո: «Մարգարտահատիկներ» թատերախմբի եւ «Գառնի» վոկալ կվինտետի մասնակցությամբ ներկայացվեց «Բարձրաձայն լռություն» գրական-երաժշտական կոմպոզիցիան, որի սցենարը հեղինակել էր Մարգարիտա Մնացականյանը: Խոնարհումի երեկոն կայացել է Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության հովանավորմամբ, զույգ կազմակերպությունների նախագահ Արա Աբրահամյանի մասնակցությամբ:

Վախճանվեց Համայն Ռուսիո պատրիարք Ալեքսիյ Բ-ն

Դեկտեմբերի 5-ին Պետերբուրգի իր նստավայրում, կյանքի 80-րդ տարում վախճանվեց Մոսկվայի եւ Համայն Ռուսիո պատրիարք Ալեքսիյ Բ-ն: Անանուն աղբյուր վկայակոչելով՝ ՌԻԱ գործակալությունը հաղորդում է, որ մահվան պատճառը եղել է սրտի գոտեւորության խանգարումը:

Նախնական տեղեկությունների համաձայն, պատրիարքի հոգեհանգիստը տեղի կունենա Քրիստոս Փրկչի տաճարում (Մոսկվա): Ինտերֆաքսի տվյալներով, հոտարկավորությունը տեղի կունենա Մոսկվայի Աստվածահայտնության Ելոխովյան տաճարում: Հոգեհանգստյան եւ հուղարկավորության կարգը կորոշվի դեկտեմբերի 6-ին՝ Սրբազան Սինոդի նիստում:

Միտրոպոլիտ Ալեքսիյը Մոսկվայի եւ Համայն Ռուսիո պատրիարք էր ընտրվել 1990-ի հունիսի 7-ին: Նրա պատրիարքության տարիներին եկեղեցին դարձավ ռուսաստանյան հասարակության կարեւորագույն կառույցներից մեկը, լայն տարածում ստացավ կրոնական, հանրակրթական եւ բարեսիրական գործունեությունը, կառուցվեցին ավելի քան 20 հազար տաճար եւ վանք, բացվեց հարյուրից ավելի հոգեւոր ուսանողական հաստատություն: 2007-ի մայիսի 17-ին ստորագրված Կանոնական շփման արձանագրությամբ վերջ դրվեց Ռուս ուղղափառ եկեղեցու գրեթե մեկդարյա պառակտմանը:

ՌԴ Պետդումայի երեկ 1 րոպե լռությամբ հարգել է Ալեքսիյ Բ-ի հիշատակը: Ցավակցական ուղերձներ են հղել բազմաթիվ երկրների պետական, քաղաքական, հոգեւոր եւ հասարակական գործիչներ, այդ թվում՝ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, Ամենայն հայոց հայրապետ Գարեգին Բ կաթողիկոսը:

Ձերբակալվել է արդարադատության փոխգնդապետը

Արդարադատության նախարարությունից հաղորդում են, որ ձեռք բերված օպերատիվ տեղեկություններով պարզվել է, որ «Սեւան» քրեակատարողական հիմնարկի գլխավոր մասնագետ, արդարադատության փոխգնդապետ Արսակ Ազիզյանը պատրաստվում է դատապարտյալներից մեկին փոխանցել թմրանյութ: Արսակ Ազիզյանի մոտ հայտնաբերվել եւ առգրավվել է թմրանյութման զանգված: Արսակ Ազիզյանը ձերբակալվել է: Միաժամանակ տեղեկացվում է, որ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունում 2008-ի ընթացքում կարգապահական պատասխանատվության են ենթարկվել 128 քրեակատարողական ծառայողներ: Նրանցից 74-ի նկատմամբ կիրառվել է նկատողություն, 44-ի նկատմամբ՝ խիստ նկատողություն եւ 1-ի նկատմամբ՝ պատշոնի իջեցում, կարգապահական տույժեր:

«Ռուսաստանի եւ Հայաստանի համագործակցությունը հաջողությամբ զարգանում է»

Ռուսաստանի վարչապետ Վլադիմիր Պուտինը հայտարարել է, որ Ռուսաստանի եւ Հայաստանի համագործակցությունը հաջողությամբ զարգանում է բոլոր ուղղություններով: «Կցանկանայի գոհունակությամբ նշել, որ մեր երկրների հարաբերությունները շատ հաջող են զարգանում, ընդ որում՝ գործնականում բոլոր ուղղություններով», ասել է Պուտինը Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանի հետ կայացած հանդիպմանը: Ռուսաստանի կառավարության ղեկավարն ասել է, որ էներգետիկայի բնագավառում եւ մի շարք այլ ճյուղերում խոշոր նախագծեր են իրականացվում, եւ «վատ չեն իրականացվում»: «Մենք համագործակցության մեծ ծավալ ունենք, եւ ես վստահ եմ, որ ձեր այցը կլինի շատ գործնական, օգտակար, կառուցողական, եւ խոսելու բան կունենանք», ասել է Պուտինը, հաղորդում է «Արմենպրեսը»:

Սոչիսակի երկրաշարժի 20-ամյա տարելիցի առթիվ Վ. Յանուկովիչը ԲՀԿ ղեկավարության հետ այցելեց աղետի գոտի

ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանն ու «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ղեկավար Գագիկ Ծառուկյանը Սոչիսակի աղեսալի երկրաշարժի 20-ամյա տարելիցի առթիվ Հայաստան են հրավիրել այն մարդկանց, ովքեր իրենց աջակցությունն են ունեցել երկրաշարժից հետո Սոչիսակում, Գյումրիում, Վանաձորում տարվող վերականգնողական աշխատանքներին: 88-ի արհավիրքից անցել է 20 տարի, սակայն նախկին խորհրդային Միության երկրների ժողովուրդների սրտերում դեռեւ մնացել է Սոչիսակի երկրաշարժի օրերի, դրա հետեւանքների դառը հիշողությունը: Սոչիսակի աղեսալի երկրաշարժի օրերին 6 ամիս շարունակ իր մարդասիրական աջակցությունն է ցուցաբերել նաեւ հայ ազգի բարեկամ, Ուկրաինայի նախկին վարչապետ, ներկայումս՝ «Ռեգիոնների» կուսակցության ղեկավար Վիկտոր Ֆեոդորի Յանուկովիչը:

Երեկ **Վիկտոր Յանուկովիչը** այցելեց Գյումրի, որտեղ վերջինիս դիմավորեցին ԲՀԿ ղեկավար **Գագիկ Ծառուկյանը**, ԱԺ փոխխոսնակ **Արեւիկ Պետրոսյանը**, առողջապահության նախարար **Հարություն Քուրկյանը**, Ուկրաինայում Հայաստանի դեսպան **Արմեն Խաչատրյանը**, ՀՀ-ում Ուկրաինայի դեսպան Ալեքսանդր Բոժկոն, Շիրակի մարզպետը, Գյումրիի քաղաքապետը եւ պաշտոնատար այլ անձինք:

Գյումրիում Վ. Յանուկովիչը, ԲՀԿ ղեկավար Գագիկ Ծառուկյանը ծաղկեպսակներ դրեցին Սուրբ Հակոբ Մծբնեցի եկեղեցու հարեւանությամբ տեղակայված հուշարձանին՝ հարգանքի տուրք մատուցելով 88-ի երկրաշարժի զոհերի հիշատակին: Այնուհետեւ ուղեւորվեցին Լոռու մարզ՝ Սոչիսակ քաղաք:

Տես էջ 3

Գիշերային ակումբները, հյուրանոց-մոթելները՝ ոստիկանության ուշադրության կենտրոնո՞ւմ

Թրաֆիկինգի, թմրամիջոցների առումով բացահայտումների ոստիկանական տվյալները

Հայաստանում ՊՈՆՈՐԻԶՆԵՍ չկա, առայժմ չկա նաեւ մարմնավաճառությունն օրինականացնելու նախաձեռնությամբ հանդես գալու մտադրություն, այս տարի չկա երեխայի վաճառքի գրանցված դեպք, իսկ վերջերս հայտնաբերված պոռնկության ոչնչությամբ էլ որեւէ պատշաճության հետ կապ չի հայտնաբերվել: Լրագրողների հետ հանդիպմանը երեկ հայտարարեց Հայաստանի ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության պետ, ոստիկանության գնդապետ Հունան Պողոսյանը, ըստ որի, ամեն ինչ պետք է անել, որ Հայաստանում պոռնոբիզնեսի երեւույթը չլինի:

Ըստ նրա, Հայաստանում չկան նաեւ մարմնավաճառության, աղջիկի զենքի ձեռքբերման, ներկրման եւ թմրամիջոցների աղջիկի շրջանառության ոլորտը վերահսկող կազմակերպված հանցավոր խմբեր: Միեւնույն ժամանակ գնդապետը չի բացառում պոռնոբիզնեսի առաջացման հնարավորությունը, եթե դրա դեմ տարվող կանխարգելիչ բնույթի աշխատանքները չշարունակվեն:

2007-ի ընթացքում Հայաստանի իրավապահ մարմինները թրաֆիկինգին առնչվող համապատասխան քրեական հոդվածներով հայտնաբերել են հանցագործության 8 դեպքեր, որոնցից մեկը աշխատանքային թրաֆիկինգի, իսկ 7-ը՝ սեռական շահագործման դեպքեր են եղել: 2008-ի 10 ամիսների ընթացքում նույնատիպ հանցագործությունները 10 են եղել, որոնցից 1-ը աշխատանքային թրաֆիկինգի եւ 9՝ սեռական շահագործման:

2007-ի ընթացքում այս առնչությամբ որպես մեղադրյալ են ներգրավվել 10 անձ, որոնցից դատապարտվել են 3-ը, հարուցված քրեական գործերով տուժող է ճանաչվել 12 անձ: 2008-ի 10 ամիսների ընթացքում որպես մեղադրյալ են ներգրավվել 17 անձինք, որոնցից դատապարտվել են 7-ը, տուժող են ճանաչվել 37-ը: Նույն ժամանակահատվածում հայտնաբերվել են նման 12 հանցագործություններ, որոնցով պատասխանատվության են ենթարկվել 6 անձինք, հայտնաբերվել են այդ հանցագործության համար հետախուզման մեջ գտնվող 7 անձանցից երկուսը:

Այս տարվա 10 ամիսների ընթացքում իրենց համաձայնությունը տված թրաֆիկինգի 20 զոհեր ողողորդվել են «Հույս եւ օգնություն» եւ «ԱՄՔՈՐ» կազմակերպություններ: ՀՀ ԱԳՆ հետ համատեղ ձեռնարկված միջոցառումներով թրաֆիկինգի մեկ զոհ Արաբական Միացյալ Էմիրություններից վերադարձել է Հայաստան:

2008-ի 10 ամիսների ընթացքում վարչական պատասխանատվության են ենթարկվել մարմնավաճառությամբ զբաղվող 357 անձինք, որոնց մեծ մասն ուղարկվել է Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների կենտրոն, նրանցից 110-ի մոտ հայտնաբերվել են վեներական հիվանդություններ: Հ. Պողոսյանը պարզաբանեց, որ մարմնավաճառությունը ՀՀ-ում զանցանք է եւ պատժվում է վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի 179 պրիմ մեկ հոդվածով, որը նախատեսում է տուգանք նվազագույն աշխատավարձի կեսից մինչեւ կրկնակի չափով:

10 ամիսների տվյալներով, բացահայտվել են պոռնկությամբ զբաղվող «որջեր»՝ «Դուստր Օլյա» ՍՊԸ-ին պատկանող կեսգիշերային ակումբում, «Դինուլիկ» ակումբում, «Գոռ եւ Անգելինա» ՍՊԸ-ին պատկանող հյուրանոցային համալիրում եւ եւս մեկ «որջ» Շենգավիթի համայնքի տարածքում: «Մոտ ապագայում կլինեն նոր բացահայտումներ», խոսացավ կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության ղեկավարը:

Ինչ վերաբերում է թմրամիջոցների հետ կապված հանցագործություններին, ապա 2007-ին այդպիսիք բացահայտվել են 1084-ը, քրեական պատասխանատվության է ենթարկվել 537 անձ, որոնցից 20-ը՝ կին, 2-ը՝ անչափահաս: Այս տարվա 10 ամիսների ընթացքում բացահայտվել է թմրամիջոցների հետ կապված հանցագործությունների 614 դեպք, քրեական պատասխանատվության է ենթարկվել 362 անձ, որոնցից 7-ը՝ անչափահաս: Այստեղ դիտարկվող դեպքերի թվի նվազեցումն էլ կապված է նույն հանցատեսակի համար ներկայումս վարչական պատիժ նշանակվելու հանգամանքով:

ԿՀԴՊ-ի գլխավոր վարչության ղեկավարի խոսքերով, դեռեւս անելիքները շատ են մտավոր սեփականության ոլորտին առնչվող հանցագործությունների բացահայտման ոլորտում. անկասկած է օրենսդրական դաշտը, վարչական պատասխանատվության նորմերը բացակայում են, մեղմ են քրեական պատժաչափերը, ցածր է բնակչության իրավագիտակցությունը եւ այլն: Ամեն դեպքում, այս ոլորտում այս տարի նախապատրաստվել է 26 նյութ, 23-ով հարուցվել է քրեական գործ:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Տարավորություն պոռնիկի ջրօգտագործումը դադարեցնելու համար

Մինչեւ փետրվարի 1-ը ընտրում է «Երեւան ջուր»

«Երեւան ջուր» ընկերության առեւտրային տնօրեն **Գագիկ Մարգարյանը** երեկ լրագրողների հետ հանդիպման ժամանակ ներկայացրեց ընկերության հայտարարած ակցիայի մասին՝ մինչեւ փետրվարի 1-ը կոչ անելով բոլոր այն բաժանորդներին, որոնք, շրջանցելով ջրաչափը, պոռնիկի ջուր են օգտագործում, վերացնել այդ խնդիրը: Այդ ժամանակահատվածում «Երեւան ջուրը» խոստանում է սանկցիաներ չկիրառել եւ տուգանքներ չգանձել: Առեւտրային տնօրենը տեղեկացրեց, որ պոռնիկի ջրօգտագործումն ընդամենը 1000-2000 դրամի խնայողություն է բերում, բայց երբ դրա պատճառով ջրամատակարարման խնդիրներ են առաջանում եւ այն ընդհատվում է, խանութից խմելու ջուր գնելիս ավելի շատ գումար է ծախսվում: Ուստի կոչ արվեց այդ բաժանորդներին գիտակցել խնդրի էությունը եւ կարգավորել իրենց ջրասպառման օրինականությունը:

Մինչ այս ակցիայի մասին հայտնելը Գագիկ Մարգարյանը ներկայացրեց պոռնիկի ջրօգտագործման իրենց հայտնաբերած փաստերը, որտեղ ջրաչափը կամ շրջանցվում էր այլ խողովակով, ջրաչափի վրա ասես էր դրվում կամ մագնիս, կամ ջրաչափերի կնիքն էր լինում վնասված: Ըստ ընկերության առեւտրային տնօրենի, բաժանորդների 13 տոկոսի մոտ ջրասպառման ցուցանիշը 0 է, 36 տոկոսի մոտ՝ մինչեւ 6 խմ ամսական: Այս ցուցանիշի մեջ մտնող բաժանորդներն են հիմնականում պոռնիկի ջրասպառողները, որովհետեւ 1 անձի միջին սպառումն այստեղ կազմում է օրական 50 լիտր: Իրականում միջին ցուցանիշը պետք է կազմի 100-120 լիտր: Եվս 25 տոկոսը սպառում է ամսական 6-11 խմ ջուր, 26 տոկոսը՝ 11 խմ-ից ավելի:

«Ինչպե՞ս են պատժվում նման բաժանորդները առաջին եւ կրկնակի խախտում կատարելու դեպքում», մեր հարցին պատասխանելով, Գագիկ Մարգարյանն ասաց, որ խախտումը հայտնաբերելու դեպքում հաշվարկվում է նախորդ 6 ամսվա ընթացքում խողովակի թողունակության չափով սպառված ջրի չափը: Սակայն կրկնակի խախտման դեպքում, ըստ առեւտրային տնօրենի, տուգանքը նույնն է լինում: Նա նաեւ տեղեկացրեց, որ իրականացված գործողությունների շնորհիվ, նոյեմբեր ամսին վաճառված ջրի քանակն ավելի է եղել 15 տոկոսով, իսկ ջրաչափական սարքերով արձանագրվածը՝ 20 տոկոսով:

Գագիկ Մարգարյանը երեկ հայտնեց նաեւ, որ 2008-ին Երեւանում ջրամատակարարման միջին տեւողությունը 20 ժամ է, ինչը 5 տոկոսով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը: Միաժամանակ նա նշեց, որ կան տարածքներ, որտեղ ջրամատակարարումը բարելավվել է 55-57 տոկոսով:

Ա. Մ.

ԱՍՈՒԼԻՍ

10 տարվա ժամկետը սահմանվել է ընդառաջելով տաքսիստներին

Տրանսպորտի եւ կապի նախարարն անդրադարձավ տաքսիների լիցենզավորման օրենքին եւ գործընթացին

Տրանսպորտի եւ կապի նախարար **Գուրգեն Սարգսյանը** երեկ հրավիրած մամուլի ասուլիսի ժամանակ անդրադարձավ իր ներկայացրած ոլորտի մի քանի կարեւոր իրադարձություններին: Դրանցից առաջինը Բաքվում տեղի ունեցած ՏՐԱՍԵԿԱ-ի հոբելյանական նիստն էր, որին մասնակցում է նաեւ Հայաստանի տրանսպորտի եւ կապի նախարարության ներկայացուցիչը: Նշելով, որ այս կազմակերպությունը ստեղծվել է 10 տարի առաջ, նախարարը խոսացավ հոբելյանական նիստի ընդունած որոշումների եւ հաչակագրի մասին մանրամասներ հաղորդել Հայաստանի պատվիրակի վերադարձից հետո:

Հաջորդ հարցը հայկական երկաթուղու՝ «Հարավկովկասյան երկաթուղի» ընկերության գործունեությանն ու լրատվամիջոցներում դրանց անդրադարձին էր վերաբերում: Գուրգեն Սարգսյանը փաստեց, որ ընկերության կատարած ներդրումներ են համարվում կոնցեսիոն պայմանագրում նշված ներդրումները, այլ ոչ թե ընկերության կատարած բոլոր ծախսերը: Ըստ պայմանագրի, ընկերությունն իր կատարած ներդրումների մասին յուրաքանչյուր տարեվերջին պետք է տեղեկություններ ներկայացնի նախարարություն, որտեղ էլ պետք է ուսումնասիրեն դրանց համապատասխանությունը պայմանագրին:

Թերեւս ամենից մեծ հետաքրքրություն առաջացնող հարցն առնչվում էր տաքսիների լիցենզավորմանը: Այդ մասին օրենքում կատարված փոփոխությունը ուժի մեջ է մտնում դեկտեմբերի 6-ից: Տրանսպորտի եւ կապի նախարարը հայտնեց, որ օրենքում անհատ ձեռնարկիչների համար, որոնք սեփական ավտոմեքենաներն են օգտագործում որպես տաքսի, կատարվել է փոփոխություն, ըստ որի լիցենզավորման համար նրանք պետք է վճարեն 25 հազար դրամ պետական նախկին 200 հազար դրամի փոխարեն:

Անհատ տաքսիստներին ընդառաջ կատարված կառավարության մեկ այլ քայլն էլ տաքսիներում ՀԴՄ-ների տեղադրման պահանջի վերացումն է: Սահմանվել է, որ մեքենայում պետք է լինեն միայն սակաչափիչներ: Բացի այդ, լիցենզավորման ժամկետը թեեւ 1 ամիս է, բայց, նախարարի հավաստմամբ, այդ խնդիրը լուծվում է 3-5 օրվա ընթացքում: Գուրգեն Սարգսյանը տեղեկացրեց նաեւ, որ վերջին օրերին 32 չլիցենզավորված տաքսի ծառայություններ 270 մեքենաներով դիմել են լիցենզիա ստանալու համար: Ներկա պահի դրությամբ լիցենզավորված են 460 կազմակերպություններ, իսկ լիցենզավորված մեքենաների թիվը մոտ 5600 է:

Ինչպես հայտնի է, դեղին համարներով տաքսի մեքենաները չեն կարող Հայաստանից դուրս գալ: Այս առնչությամբ տրված հարցին Գուրգեն Սարգսյանը պատասխանեց, որ խնդիրը դրվելու է հայ-վրացական միջկառավարական հանձնաժողովի նիստում, որպեսզի թույլ տրվի այդ երկրի տարածք հայկական միայն դեղին համարանիշներով մեքենաների մուտքը:

«Ազգի» հարցն այն էր, թե հնարավոր չէ՞ անհատ տաքսիստների համար վերանայել 10 տարուց ավելի վաղեմության ժամկետ ունեցող մեքենաները որպես տաքսի շահագործելու արգելքը, քանի որ այդ դեպքում նրանք մղվելու են դեպի ստվերային գործունեություն: Նախարարն ասաց, որ այդ հարցն առնչվում է մարդկանց կյանքին ու անվտանգությանը եւ ուսումնասիրված բոլոր երկրներում տաքսիների համար թույլ տված ժամկետը 3-5 տարի է: Հայաստանում սահմանվել է 10 տարին, ընդառաջ գնալով տաքսիստներին: Այդուհանդերձ, Գուրգեն Սարգսյանն ավելացրեց, թե չի բացառում, որ որոշ ժամանակ հետո անդրադարձ կատարվի այս հարցին:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Եվրոբանկը 8 մլն դոլար տրամադրեց «ԱԳԲԱ լիզինգին»

Դեկտեմբերի 2-ին Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) եւ «ԱԳԲԱ լիզինգ» վարկային կազմակերպության միջեւ կնքվել է 8 մլն ԱՄՆ դոլարի չափով վարկային պայմանագիր: Նշված գումարի ներգրավումը նոր հնարավորություններ է ընձեռում «ԱԳԲԱ լիզինգին»՝ ընդլայնելու իր գործունեության շրջանակները եւ իրականացնելու Հայաստանի տնտեսության զարգացման ֆինանսավորումը: Այս նախագիծը ՎԶԵԲ-ի կողմից լիզինգային ընկերության ֆինանսավորման առաջին փորձն է Հայաստանում եւ վկայում է «ԱԳԲԱ լիզինգի»՝ տարիների ընթացքում կուտակված փորձի, բարձրակարգ լիզինգային ծառայությունների տրամադրում եւ ընկերության վարկանիշի մասին, ինչպես ներքին, այնպես էլ՝ միջազգային շուկաներում:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ժէ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահություն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենյակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայություն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայություն / հեռ 529353
Համակարգչային շարուածը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ

Մեկնաբանություն

Խորհրդարանականները հելսինկյան հայտարարության մասին

Երեկ Ազգային ժողովի վերջին քառօրյայի վերջին ճեպազրույցներն էին, որոնցում հնչած տեսակետներից առանձնացրել ենք միայն Հելսինկիում ՌԴ եւ Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարների եւ ԱՄՆ-ի պետքարտուղարի տեղակալի ստորագրած եւ ղարաբաղյան հակամարտության կողմերին ուղղված հայտարարությանը մեր խորհրդարանական ուժերի ներկայացուցիչների անդրադարձները:

«Ժառանգությունը» ներկայացնող **Սյոռքա Սաֆարյանի** նախնական գնահատականով՝ եվրոպական հանրության համար ղարաբաղյան խնդիրն այլեւս օրակարգային հարց է, այնպես որ իմիջայիններ ժամանակն անցել է, եւ արդեն իսկ եկել է կոնկրետ որոշումներ ընդունելու ժամանակը: Ըստ նրա՝ կողմերի հանդեպ կիրառվում է փոքր պարավորություններ կորզելու տեխնոլոգիա, այսինքն՝ յուրաքանչյուր մայրաքաղաքում ստորագրվում է հնարավորության սահմանում փոքր-ինչ այլ փաստաթուղթ, որն առաջ է տանում բանակցային գործընթացը, եւ ինչի արդյունքում շուտով մեզ պարտադրվելու են փաստաթղթեր, որոնց վերաբերյալ տարաձայնություններ չկան: Այսինքն՝ տարբեր պատառիկներով պարավորություններ կորզելով կողմերից՝ վերջում գործընթացն առաջ է գնալու, եւ մենք կարող ենք կանգնել բավականին տհաճ վերջնահանգրվանի առաջ: Հելսինկյան հայտարարությունն ու դրա ընդունումից առաջ ԵԱՀԿ գործող նախագահի հայտարարությունը, թե հելսինկյան այս հավաքի ընթացքում կընդունվի հռչակագիր կամ հայտարարություն ղարաբաղյան խնդրի վերաբերյալ, ցույց տվեց, որ մոսկովյան հռչակագիրը, որ այդպես բուռն քննադատություններ եւ գովասանքների արժանացավ Հայաստանում՝ միակը չի լինելու եւ դրան հաջորդելու են այլ փաստաթղթեր: Հելսինկյան հայտարարության հետ կապված՝ Ս. Սաֆարյանը մտահոգիչ է գտնում այն հանգամանքը, որ ԼՂ-ն այդպես էլ չի հիշատակվում որպես հակամարտության անմիջական կողմ, եւ մոսկովյան հռչակագրից մեզ մնացած ծանր բեռը եւ մեր ռազմավարական դաշնակցից մեզ թողնված ժառանգությունը մնաց այն, որ հակամարտությունը տեղափոխվեց Ադրբեջան-Հայաստան հարթության վրա, բանակցությունների ուղղակի երկկողմ ձեւաչափ հիշատակվեց՝ նախագահների եւ արտգործնախարարների մակարդակով: Իսկ ողջունելին, ի տարբերություն մոսկովյան հռչակագրի, որտեղ ընդամենը խոսք էր գնում խաղաղ ճանապարհով հակամարտությունը լուծելու մասին, հելսինկյան հայտարարության մեջ տեղ գտավ նաեւ ռազմական ճանապարհի դատապարտման եւ անհնարինության հանգամանքը, սա հայտարարության միակ լուսավոր կետն է, ըստ Սաֆարյանի:

Մեթյու Բրայզայի լավատեսությունը, թե Հայաստանն ու Թուրքիան մոտ են դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը, Ս. Սաֆարյանը չի կիսում:

Այս պահին դրանք տակավին ձեւային հարթության վրա են եւ ոչ բովանդակային. բաց խնդիրներ ղարաբաղյան կարգավորման հետ կապված՝ կապված են հայ-թուրքական հարաբերությունների հետ:

«Բարգավաճ Հայաստանից» **Ավետ Ադոնցը** դրական համարեց հելսինկյան հանդիպումն ու հայտարարությունը ղարաբաղյան կարգավորման գործընթացի առումով: Ինչ վերաբերում է հայ-թուրքական հարաբերություններին՝ ապա դիվանագիտական հարաբերությունների հաստատումը միանշանակ դրական կազդի կարգավորման գործընթացի վրա: «Ես Բրայզային ուշադիր լսեցի, ներկայացված երեք սկզբունքները հավասարաչափ պետք է ներկայացված լինեն հակամարտության կարգավորման վերջնական համաձայնագրում՝ տարածքային ամբողջականություն, ազգերի ինքնորոշման իրավունքը, ուժի չկիրառում. թե իրենց մոտ ո՞նց կստացվի, էդ արդեն խնդիր է: Եթե վտանգ կա, ապա կար նույն վտանգը մեկ տարի, երեք տարի առաջ, այսօր վտանգների առումով մեկ տարի առաջվա իրավիճակի հետ կապված ոչ մի տարբերություն ես չեմ տեսնում: Նրանք գիտեն մեր կոմպրոմիսների նշածողը՝ համանախագահողները գիտեն, միջազգային հանրությունը գիտի, ադրբեջանական կողմը գիտի, որ մենք դրանցից ներքեւ չենք իջնի երբեք»:

ՀՅԴ-ից ներկայացած ԱԺ փոխխոսնակ **Հրայր Կարապետյանը** չի կարծում, որ հելսինկյան հայտարարությունն արտաքին դրույթներ է պարունակում, որոնց նախկինում ծանոթ չենք եղել՝ դրանք հաստատում են վերջին Մոսկովյան հռչակագրի դրույթները: Նրան զարմացրել էին Հելսինկիում Մեթյու Բրայզայի իրարամերժ ելույթները, որովհետեւ դա առաջին դեպքը չէր եւ կարելի էր բոլոր գործիչների մեջ իրարամերժ հայտարարություններ անելու տեսակետից ռեկորդային համարել Բրայզային: ԱՄՆ-ի պես գերտերություն ներկայացնող պատասխանատու գործիչը պետք է ավելի լուրջ վերաբերվի իր պարտականություններին, մինչդեռ նրա լրջության բացակայության մեջ համոզվել ենք արդեն բազմիցս:

Իսկ որ Հայաստանն ու Թուրքիան մոտ են դիվանագիտական հարաբերություններ հաստատելուն, ըստ Հ. Կարապետյանի, ցանկությունը ներկայացվում է իրականության փոխարեն, քանի որ այդ հարաբերությունների հաստատումը Թուրքիան պայմանավորում է ԼՂ խնդրի ադրբեջանամետ լուծումով, ցեղասպանությունը մերժում է եւ շարունակում է Հայաստանի տնտեսական շրջափակումը:

ՀՀԿ-ից **Էդվարդ Շարմազանովի** կարծիքով՝ հայտարարության հիմնական կետն այն է, որ մոսկովյան հռչակագրի սկզբունքները պետք է պահպանվեն եւ ռազմական լուծումը պետք է բացառվի: Այնտեղ առաջարկություն կա, որ դիպլոմատներին հանեն կրակակետերից, բայց հիմնականում մոսկովյան հռչակագրի սկզբունքները պահպանվում են, նշվում է, որ բազային սկզբունքների վերաբերյալ համաձայնության չեն եկել, սակայն մեզ համար կարեւոր է, որ Մինսկի խմբի ձեւաչափը պահպանվում է, եւ ավելի կարեւոր՝ որ ռազմական լուծումը բացառվում է: Այսինքն, ըստ Շարմազանովի, ամեն ինչ գնում է հայկական դիվանագիտության տրամաբանության ներքո:

Իսկ Բրայզան իր ոճի մեջ է, եւ երբ գա Հայաստան, կասի, որ կամ լրագրողները լավ չեն հասկացել, կամ սխալ են թարգմանել, բայց դա այնքան էլ կարեւոր չէ՝ ըստ Շարմազանովի: Կարեւորն այն է, որ Բրայզան եւ մյուս համանախագահները պետք է գիտակցեն, որ ԼՂԻՄ-ն ինքնավար մարզի կարգավիճակով եղել է Խորհրդային Ադրբեջանի կազմում, եւ այդ ինքնորոշման ասպիրանտը չի բավարարել ԼՂ բնակչությանը: Իսկ ԼՂ-ն երբեք եւ ոչ մի օր չի եղել անկախ Ադրբեջանի սուբյեկտ:

ՕԵԿ-ից **Հովհաննես Մարգարյանն** էլ Հայաստանի վարած արտաքին քաղաքականությունը հավասարակշռված եւ նախաձեռնողական է համարում, անառարկելի՝ երկրի նախագահի «ԼՂ ինքնորոշման իրավունքը ճնշարկման ենթակա չէ» ձեւակերպումը, իսկ Լեռնային Ղարաբաղը բանակցային կողմ պետք է դառնա:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երեւանի վերելակների վերականգնման ծրագիրն ավարտվեց

Ինչպես երեկ հրավիրված մամուլի ասուլիսի ժամանակ հայտնեց Երեւանի փոխքաղաքապետ **Վանո Վարդանյանը**, սահմանված ժամանակացույցի համաձայն՝ շուրջ մեկ տարում ավարտվեց մայրաքաղաքի վերելակային տնտեսության վերականգնման կառավարության ծրագիրը: Նա հիշեցրեց, որ վերականգնման համար, Երեւանում առկա 4261 վերելակներից ծրագրում մասնագիտական հանձնաժողովներին ընդգրկել էին 2464 առավել վտանգվածները: Վերելակներից շատերը սպառել էին շահագործման ժամկետը: 355 վերելակներ էլ ընդհանրապես չէին աշխատում:

Վերելակների վերանորոգման ու արդիականացման նպատակով պետական բյուջեից հատկացվեց 3 միլիարդ դրամ եւ 2007-ի վերջին աշխատանքները սկսվեցին: Նախ վերանորոգվեցին վերելակների մեքենայական սրահները ու դրանց տանիքները: Անհրաժեշտ պահեստամասեր ներկրելու նպատակով պայմանագիր կնքվեց Բելառուսի Մոգիլյով քաղաքի «Մոգիլյովլիֆտ» գործարանի հետ: Որոշ պահեստամասերով էլ ապահովեցին տեղական արտադրողները՝ «Էլեկտրաապարատ», «Մարս» եւ «Էլեկտրաշարժիչ» գործարանները: Ըստ փոխքաղաքապետի, հիմնականում նորերով են փոխարինվել վերելակի անվտանգությունն ապահովող սարքերը՝ կարգելակները, ճոպանները, փոխանցման տուփը, հակակշռի զսպանակները, խցիկը, կանչի սեղմակները եւ այլն:

Սակայն Վանո Վարդանյանն ընդգծեց, որ վերելակների անխափան աշխատանքն ապահովելու եւ կատարված աշխատանքը ջուրը չգցելու համար անհրաժեշտ է դրանք սպասարկել: Մինչդեռ առկա է վերելակներ սպասարկող մասնագետների խնդիր՝ եթե տասնյակ տարիներ առաջ մայրաքաղաքում աշխատում էր 1000 մասնագետ, ապա այսօր նրանց թիվը 200-ից էլ չի անցնում: Այդ կապակցությամբ Երեւանի քաղաքապետի հանձնարարականով «Երվերելակ» ընկերությունում կազմակերպվել են հատուկ դասընթացներ:

Իսկ ի՞նչ աշխատանքներ են նախատեսվում ծրագրում չընդգրկված վերելակների համար: Այդ հարցին էլ Վանո Վարդանյանը պատասխանեց, որ քաղաքապետի նոյեմբերի 6-ին ընդունած որոշման համաձայն, Երեւանի վերելակների շուրջ 40 տոկոսը կվերանորոգվի թաղային համայնքների միջոցներով:

Ա. Մ.

Հույսի ավանում կիրականանա եւս 21 ընտանիքի երազանք

Մաղթանքներով, երջանկության արցունքներով, լավատեսությամբ ու հույսով «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի նախաձեռնությամբ երեկ «Հույսի ավան» թաղամասում 21 անապահով ընտանիք բնակարանամուտ տոնեցին: «Ընդամենը չորս պատ էր պակասում կատարյալ երջանկության համար», ասում է 48-ամյա **Բորիս Մարտիրոսյանը**, որ երկար տարիներ զինվորական նվագախմբի դիրիժորն է եղել: Այժմ երաժշտական գործիքներ է վերանորոգում: Արդեն մի քանի տարի Բորիսի բազմանդամ ընտանիքը վարձով է ապրում՝ տեղափոխվելով տնից տուն: Մի քանի տարի առաջ դստեր սիրտը վիրահատեցին ու Մարտիրոսյանների ընտանիքն էլ ընդգրկվեց «Հույսի ավան» նախագծում: Եւ բարեկեցիկ կյանքով ապրելու հնարավորություն: Շուտով կլրանա երկրաշարժի 20-ամյակը, եւ կարծում եմ, «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի օրինակը խթան կհանդիսանա, որ մեր մնացած բարերարներն էլ իրենց աջխատանքով թեթեւացնեն անօթեւան մարդկանց կյանքը», իր ելույթում ասաց Կամո Արեյանը:

«Հույսի ավան» նախագծի իրականացումը նման էր երազանքի: Հանգիստ թաղամասում, ապահովված պայմաններում պետք է մեծանան հայ մանուկները: Շատերը չհասկացան, չընկալեցին «Հույսի ավանի» նպատակը: Սակայն կցանկանայի, որ դուք, ձեր երեխաները հետագայում հպարտությամբ ասեիք, որ «Հույսի ավանի» բնակիչ եք: Այս թաղամասի դեմը դուք եք, մենք ընդամենը շինարարություն ենք անում, սակայն դուք պետք է շենացնեք այս թաղամասը, որ ձեր երեխաները առողջ մեծանան ու լավ մարդիկ դառնան» ասաց «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի նախագահ **Պարույր Ջամբազյանը**:

Տիկին Սիլվան թոռնուհու հետ

«Հույսի ավան» ծրագիրը գործում է 2001-ից: Թաղամասում արդեն բնակվում է 58 ընտանիք: ճանապարհների, սիզամարգերի, ցանկապատման, կոյուղու, ասֆալտապատման, էլեկտրամատակարարման եւ հեռախոսակապի աշխատանքները նույնպես ավարտված են: «Մենք էլ ենք երջանկանում, որ կարողացանք եւս 21 ընտանիքի ապահովել բնակարանով, ովքեր իսկապես օգնության կարիք ունեն: Դեռ ծրագրի 50 տոկոսն էլ չենք կառուցել: Շուտով կսկսենք դպրոցի, եկեղեցու ու մանկապարտեզի շինարարությունը», անդրադառնալով ապագա ծրագրերին ասաց տնօրեն **Վազգեն Համբարձումյանը**:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Կյանք չէր, որ անցկացնում էինք: Հիմա գոնե գիտեմ, որ տուն ունեմ: Ջմռանը չենք սառչի: Կաշխատենք, մեր երեխաներին կպահենք», ասում է Բորիս Մարտիրոսյանը:

67-ամյա Սիլվա տատիկն էլ գոնե **օր ծերության կարիք հարմարավետ տանն ու ձմռանը գրից ոտքերն այլեւս չեն ուտի: Տիկին Սիլվան արդեն վեց տարի աղջկա ու թոռնիկի հետ ապրել է Հանրապետական հիվանդանոցի պալատներից մեկում: Այժմ երջանիկ է: 14-ամյա թոռնուհին կարիք բարեկեցիկ կյանքով, նորմալ դպրոց կհաճախի: «Առանց այն էլ խեղճ երեխան շատ տառապեց», ասում է Սիլվա տատն ու արցունքները խեղդում են կոկորդը: Զրկանքներ կրած կինը ընդամենը կարողացավ շնորհակալություն հայտնել՝ շշնջալով. «Երեխայիս կյանքը փրկեցիք»:**

Բնակարանամուտի կապակցությամբ «Հույսի ավան» էր այցելել նաեւ փոխքաղաքապետ Կամո Արեյանը. «Հույսի ավանը մարդուն տալիս է կյանքը վերսին դասավորելու ղամասի դեմը դուք եք, մենք ընդամենը շինարարություն ենք անում, սակայն դուք պետք է շենացնեք այս թաղամասը, որ ձեր երեխաները առողջ մեծանան ու լավ մարդիկ դառնան» ասաց «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի նախագահ Պարույր Ջամբազյանը:

«Հույսի ավան» ծրագիրը գործում է 2001-ից: Թաղամասում արդեն բնակվում է 58 ընտանիք: ճանապարհների, սիզամարգերի, ցանկապատման, կոյուղու, ասֆալտապատման, էլեկտրամատակարարման եւ հեռախոսակապի աշխատանքները նույնպես ավարտված են: «Մենք էլ ենք երջանկանում, որ կարողացանք եւս 21 ընտանիքի ապահովել բնակարանով, ովքեր իսկապես օգնության կարիք ունեն: Դեռ ծրագրի 50 տոկոսն էլ չենք կառուցել: Շուտով կսկսենք դպրոցի, եկեղեցու ու մանկապարտեզի շինարարությունը», անդրադառնալով ապագա ծրագրերին ասաց տնօրեն **Վազգեն Համբարձումյանը**:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Սպիտակի երկրաշարժի 20-ամյա տարելիցի ...

1-ին էջից

Սպիտակի հրապարակը, որն անվանակոչված է Վիկտոր Յանուկովիչի անունով՝ մարդաշատ էր: Հրապարակում ներկա գտնվողները Ուկրաինայի նախկին վարչապետին գովասանքի պաստառներով ու ծափողջույններով դիմավորեցին: Վ. Յանուկովիչն ու ԲՀԿ անդամները այստեղ նույնպես հարգանքի տուրք մատուցեցին երկրաշարժի զոհերի հիշատակին:

«Սրտի կսկիծով եմ հիշում այն ամենը, ինչ տեղի էր ունենում մեր աչքի առջեւ: Չկար որեւէ մի տուն, որտեղ կարող էիր ապրել. ամեն ինչ փլատակի էր վերածվել: Մի քանի վարկյանների ընթացքում զոհվեցին տասնյակ հազարավոր մարդիկ, 100 հազարները մնացին անօթեւան: Այսօր տեսնում եմ բոլորովին ուրիշ դեմքեր, բայց այդ ցավալի հիշողությունները դեռեւս մնացել են. մնացել են օդում կախված», նշեց Վ. Յանուկովիչը՝ հավելելով, որ աղետը հայ ժողովրդի ողբերգությունն էր, եւ հայերին ցավակցում էին ԽՍՀՄ բոլոր հանրապետությունները: Գրեթե բոլոր հանրապետություններն էլ մասնակցեցին աղետի գոտու վերականգնման աշխատանքներին: Վ. Յանուկովիչին շնորհվեց նաեւ Սպիտակի պատվավոր քաղաքացու կոչում:

ԲՀԿ ղեկավար Գագիկ Ծառուկյանն էլ լրագրողների հետ հանդիպման ժամանակ նշեց, որ աղետալի երկրաշարժը մինչեւ այսօր խոր սպի է թողել տեղի բնակչության սրտերում: Իսկ երկրաշարժից տուժածները, ովքեր բնակարաններ չունեն, մինչեւ 2013-ը կառավարության որոշման համաձայն պետք է ապահովված լինեն բնակարաններով: Առաջնայինը, որն ընդունվել է աղետի գոտու վերականգնման հայեցակարգով, 6985 ընտանիքներին մինչեւ 2013-ը բնակարաններով ապահովելն է, ընդ որում միայն Գյումրիում՝ 3500 բնակարան: Դա իրականացվելու է ՀՀ քաղաքաշինության ուժերով, ԲԳԿ ծրագրի ու նոր բնակարանների կառուցման ճանապարհով:

ՆԱՐԲԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Լոռի-Փրակ-Երեւան

Ֆրանսիական կառավարության խնդիրը հայ-թուրքական երկխոսությունը չէ

Այլ Հարավային Կովկասում Թուրքիայի դերի ընդլայնումը եւ թուրքական գործոնի ակտիվացումը

Ինչպես օրերս տեղեկացրել է «Ազգը», Փարիզի առվարձաններից հայաբաս Ալֆորվիլի փոխքաղաքապետ Ռենե Ռումեն կոչ էր արել Ֆրանսիայի Սենատին հասաստելու Հայոց ցեղասպանության ուրացման համար պատիժ սահմանող այն օրինագիծը, որը 2006-ին ընդունել էր երկրի խորհրդարանը: Հակառակ դրան, տեղական ինքնակառավարման նախարար Ալեն Մաղեյխը նշել էր, որ կառավարությունը դեմ է օրինագծի քննարկմանը Սենատում, պատգամավորների ուշադրությունը հրավիրել էր Թուրքիայի հավանական հակազդեցության վրա եւ ավելացրել. «Թող խորհրդարանականները չխառնվեն պատմաբանների գործին»: Նրա այս մոտեցումը պատճառաբանվել էր Հայաստան-Թուրքիա երկխոսությունը խրախուսելու Ֆրանսիայի կառավարության ցանկությամբ:

Ինչո՞վ բացատրել այս ամենը: Մինչ հարցին պատասխանելը հիշեցման կարգով նշենք, որ 1998-ի մայիսի 29-ին Ֆրանսիայի Ազգային ժողովը միաձայն ճանաչել էր Հայոց ցեղասպանությունը, 2000-ի նոյեմբերի 8-ին ցեղասպանության ճանաչումը ամրագրվել էր ֆրանսիական Սենատի ընդունած օրինագծով: Այսինքն, խորհրդարանականները նախքան Հայոց ցեղասպանության ուրացման համար պատիժ սահմանող օրինագծի 2006-ին ընդունումը, հարցը նաեւ 1998-ին եւ 2000-ին քննարկելիս, ավելին, ցեղասպանության ճանաչման օգտին քվեարկելիս ամենեւին չէին խառնվել պատմաբանների գործին:

Այլ կերպ չէր էլ կարող, որովհետեւ Ֆրանսիայի Ազգային ժողովը կատարել է մարդկության դեմ կատարված հանցագործությունը դատապարտող օրինագծի քննարկում, ոչ թե հայերի ցեղասպանության պատմության ուսումնասիրություն: Քանի որ օրինագիծը ատենախոսություն չէ, ուստի քվեարկության համար ներկայացվել է խորհրդարանականներին: Եթե մարդկության դեմ կատարված հանցագործության դատապարտումը չլիներ քաղաքական ակցիա, ապա Ցեղասպանության կոնվենցիան ՄԱԿ-ի փոխարեն կընդունվեր պատմաբանների հանձնաժողովում:

Հետեւաբար, միանգամայն անիմաստ է խորհրդարանականներին պատմաբանների գործին խառնվելուց հետ պահելու միջոցով նրանց ակնկալմամբ նախարար Մաղեյխի ցուցաբերած անզուսպ հոգատարությունը: Ինչ վերաբերում է Թուրքիայի հավանական հակազդեցությանը, ապա 1998, 2000 եւ 2006 թվականների փորձերը ոչ միայն երեւան են հանել դրա սնանկությունը, այլեւ ծիծաղելի կացության մեջ են դրել թուրքերին եւ վնասել թուրքական պետության միջազգային հեղինակությանը, այն առումով, որ երկրում հակաֆրանսիական հիստերիա բորբոքելուց եւ հոխորտալուց հետո Անկարան ինքնակամ հրաժարվեց Ֆրանսիայի դեմ հակամայլերի դիմելու մտադրությունից:

Թերեւս կարելի էր համակերպվել Հայաստան-Թուրքիա երկխոսությունը խրախուսելու ֆրանսիական կառավարության ցանկության հետ, եթե երկխոսության հիմքում չդրվեր նախագահ Աբդուլլահ Գյուլի երեւանյան այցով պայմանավորվող այսպես կոչված հայ-թուրքական մերձեցումը, Հայաստանի հետ մերձենալու Անկարայի բարի կամքի դրսեւորումները չհանգեցնեին կամք թելադրելու դրսեւորումներին, վերջինը չփորձեր այդ մերձեցումը օգտագործել իբրեւ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը կանխարգելելու միջոց, չծառայեցներ Հայաստանի հետ նաեւ Ադրբեջանի հարաբերությունները կարգավորելու նախաձեռնությունը ղարաբաղյան հիմնահարցին միջամտելու նպատակին, ոչ էլ ի լուր աշխարհի հայտարարեր Երեւանի մերձեցման պատասխանատվության մասին, մասսայականացներ այդ «պատասխանատվությունն» ու միջազգային հնչեղություն հաղորդեր դրան, որպեսզի փաստի առջեւ կանգնեցնի Հայաստանին:

Ակնհայտ է, որ մերձեցման հարցում ընդառաջել Թուրքիային կնշանակի ընդլայնել մերձեցումը որպես միջոց Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը կասեցնելու, ինչպես նաեւ դարաբաղյան հիմնահարցին միջամտելու նպատակներին ծառայեցնելու նրա հնարավորությունը, որովհետեւ դա, հատկապես մասսայականացման դեպքում, ենթադրում է նաեւ թուրքական նպատակների ակամա ընդառաջում:

Մինչդեռ Ֆրանսիայի նախագահի պաշտոնում Նիկոլա Սարկոզիի ընտրությունը, որը թուրքական քաղաքական շրջանակներում «հակաթուրքի» համբավ ուներ, լուրջ մտահոգության պատճառ էր դարձել ինչպես թուրք-ֆրանսիական հարաբերությունների եւ Եվրոմիություն-Թուրքիա բանակցությունների, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի հարցում Փարիզի առանց այդ էլ «հայանպաստ» դիրքորոշման բարելավման եւ Հայոց ցեղասպանության ուրացման համար պատիժ սահմանող օրինագծի ֆրանսիական Սենատում հաստատման առումներով:

Օրինագծի պարագայում ֆրանսիական կառավարության խնդիրը, ինչ խոսք, հայ-թուրքական երկխոսության խրախուսումը չէ, այլ Մերձավոր եւ Միջին Արեւելքում Թուրքիայի դերակատարության ընդլայնումն է եւ թուրքական գործոնի ակտիվացումը Հարավային Կովկասում, որպեսզի հնարավոր լինի կանխել Ռուսաստանի ազդեցության հետագա աճն այնտեղ եւ վերականգնել ուժերի հավասարակշռությունը, որի հարավսական պատերազմից հետո հօգուտ ռուսների խախտումը ռուս-ամերիկյան մրցապայքարում բացասաբար է անդրադառնում ԱՄՆ-ի եւ այդ մրցապայքարում Վաշինգտոնին աջակցող Եվրոմիության վրա:

ՀԱՅՈՐ ՉԱՔԱՐՅԱՆ

Ադրբեջանական քարոզչահնարքները Ղարաբաղը կորցնելու գիտակցումից են

Ադրբեջանական քարոզչամեքենան դարձյալ շարունակում է բազմալեզու կայքերում տարփողել հայկական զինուժի կողմից իբր հրադադարի խախտման մասին: Հատկապես մոսկովյան հռչակագրի ստորագրումից հետո, թվում է, ռազմաքարոզչության ոլորտում պետք է որոշակի զսպվածություն լիներ: Կա խաղաղամտական գրավոր համաձայնություն, որի վերաբերյալ ակնկալումները հակամարտ կողմերում թող որ նույնիսկ տարբեր են: Դա այլ խնդիր է, բայց հարեւան երկրում հակված են մոգոնելու հայերի սահմանային խախտումների նորանոր «փաստեր»:

Օգոստոսյան դեպքերից հետո Ադրբեջանում թերեւս մտահոգված էին վրացական սցենարի կրկնության տեսլականից, ուստի Իլհամ Ալիեւը շտապեց հավաստել իր «խաղաղասիրությունը»՝ ստորագրելով ՌԴ նախագահի առաջարկած հռչակագիրը: Այլապես նա Մայնդորֆից հրաժարվելու պատճառներ կարող էր գտնել:

Փոխզիջումն ըստ Ադրբեջանի՝ նշանակում է ազատագրված տարածքների լրիվ վերադարձ, դրան ածանցյալ՝ Լեռնային Ղարաբաղի ինքնավար գոյություն Ադրբեջանի կազմում: Համենայն դեպս, առ այսօր հարեւան երկրում ոչ մի տրամաչափի քաղաքական գործիչ չի արտահայտել որեւէ ձեւով Ղարաբաղին անկախություն տրամադրելու իր պատկերացումները: Ընդհակառակն, նրանք հղումներ են անում իրենց սոսկական ցանկություններից՝ պահեստում ունենալով այն մտայնությունը, թե բանակցությունների հնարավոր ձախողումից հետո օրակարգային կդառնա ուժային լուծումը: Իսկ եթե ոչ պատերազմ, ուրեմն Ադրբեջանը պետք է վերանայի կանխակալ դիրքորոշումը եւ հրաժարվի Ղարաբաղն իր սեփականությունը տեսնելու գաղափարաբանությունից: Նկատենք, սա արդեն պարտվողականություն կհամարվի կաղապարային դիրքորոշման տեսանկյունից, ինչը Ադրբեջանում ցավագին են ընկալում:

Ինչ սկզբունքով էլ որակենք լուծումների ուղին, մարդիդյան, թե՝ այլ, հանգելու ենք նույն հանգույցին. Ադրբեջանը համաձայն չէ Ղարաբաղի կորստին, իսկ Հայաստանի համար ընդունելին Լեռնային Ղարաբաղի անջատվածությունն է Ադրբեջանից: Այս գլուխկոտրուկը ոչ մի մաթեմատիկական դիվանագիտություն չի կարող լուծել, եթե հաշվի չառնվի երրորդ, եւ ամենագլխավոր կողմի՝ ԼՂՀ-ի կարծիքը: Բայց, որպեսզի թերացվի ԼՂՀ-ի դիրքորոշման չափազանց կարեւոր նշանակությունը՝ Ադրբեջանը փորձում է մշակել լարվածության պատրանք ստեղծել շփման գոտում, անշուշտ, դրանում գտնելով միայն «հայկական հետք»:

Իրականում, եթե խաղաղասիրական կամքը կա, ապա գոնե տվյալ փուլում Ադրբեջանը պետք է զերծ մնա սահմանային միջադեպերի թեմայի ինքնանպատակ արծարծումներից: Ղարաբաղն իր ժողովրդի համար ծանր ազատագրական պատերազմով գծել է անվտանգության գոտին, սահմանադրորեն ամրագրել այն, եւ անտրամաբանական կլիներ իր իսկ անվտանգության շուրջը լարվածություն հրահրելը: Իսկ Հայաստանը, որ ավելի քան 14 տարի հուսալիորեն երաշխավորում է հրադադարի ապահովումը, ըստ էության, մոսկովյան փաստաթղթի ստորագրմամբ վերահաստատել է այդ առաքելությունը: Ստացվում է, որ Ադրբեջանն իր իսկ ամբիցիաների ծուղակն է ընկել:

Ադրբեջանական այսօրինակ քարոզչահնարքները հիշեցնում են հայտնի բանաձեւը՝ խաղաղությո՞ւն ես ուզում՝ պատրաստվիր պատերազմի: Եթե սա, իհարկե, ընդամենը Ղարաբաղը վերջնականապես կորցնելու հուսահատ գիտակցում չէ:

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

ՀԵԼՍԻՆԿԻ

Դենիել Քրիդը կրկնում է՝ Ադրբեջանի տարածքային ...

1-ին էջից

Մեր հարցը Քրիդին. «Երեկ Ադրբեջանի պատվիրակությունը տարածել է գրավոր փաստաթուղթ, որտեղ ասվում է, որ «հակամարտությունը կարող է լուծվել Ադրբեջանի միջազգայնորեն ճանաչված սահմաններում եւ տարածքային ամբողջականության հարգման հենքով»: Պարոն փոխքեքարտուղար, որպես ամերիկյան բարձրաստիճան դիվանագետ, ով մոտիկից հետեւում է ղարաբաղյան խաղաղ կարգավորման գործընթացին, համաձա՞յն եք, որ մադրիդյան փաստաթղթում խորհրդային Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը հիմնական սկզբունքն է: Այդ փաստաթղթում այլ սկզբունքներ չկա՞ն»:

Քրիդի պատասխանը. «Տարածքային ամբողջականությունը գլխավոր սկզբունքն է եւ փաստորեն դա այն սկզբունքն է, որից մենք սկսել ենք: Կան այլ սկզբունքներ, եւ Մինսկի խմբի աշխատանքն է համատեղել այդ սկզբունքները, այնպես որ խուսափենք բանավեճերից, այլ իրականում հասնենք այն բանին, որին ձգտում ենք՝ կարգավորմանը: Մինսկի խումբը առաջարկել է սպեցիֆիկ գաղափարներ... Մենք պետք է խուսափենք բոլոր տեսակի սպառնալիքների հոսքերությունից, եւ փոխարենը ես հորդորում եմ եւ Մինսկի խումբն է հորդորում Ադրբեջանի եւ Հայաստանի կառավարություններին՝ աշխատել հասնելու կարգավորմանը, որը երբեք մոտ չի եղել»:

Երեկ Հայաստանի արտգործնախարարը ճեպազրույց տվեց Հելսինկիում աշխատող հայ լրագրողներին: Երբ մեջբերեցինք Քրիդի մեկնաբանությունները, նախարար Նալբանդյանը այսպիսի պատասխան տվեց. «Ես հասկանում եմ, որ կարելի է տարբեր ըմբռնումներ ունենալ հայտարարություններից եւ կարելի է ենթատեքստից հանել հայտարարությունները, բայց մեկ բան դրմ պետք է իմանաք. եթե մինչ հիմա չէր խոսվում ընդհանրապես մյուս սկզբունքների մասին եւ չէր խոսվում ինքնորոշման իրավունքի մասին, այսօր բացահայտ խոսվում է: Երբ ես զարմանք հայտնեցի եւ ասացի, թե չեմ հավատում, որ Բրայզան կարող է նման բան ասած լինի, հետո ես իմացա, որ Բրայզան ինքը ժխտել է, ասել է, որ ինքը նման բան չէր կարող ասել... Հստակ է, որ այդ (ղարաբաղյան) բանակցությունները միջազգային իրավունքի նորմերի եւ սկզբունքների հիման վրա են (ընթանում): Եթե ադրբեջանցիներն ասում են, որ դա ճիշտ է, եւ պետք է լուծվի տարածքային ամբողջականության հիման վրա, ուրեմն դա նշանակում է, որ սկզբունքները եւ նորմերը պետք է կենտրոնական մեկ սկզբունքի վրա: Ներողություն, այդ ամենը ոտքերից գլխի վրա դնել է նշանակում: Կան սկզբունքներ, կան միջազգային օրենքի նորմեր եւ այդ սկզբունքների եւ նորմերի մեջ կա նաեւ ինքնորոշման իրավունքի սկզբունքը: Եվ դա վրա ենք մենք աշխատում, եւ աշխատում ենք նրա վրա, որ ուժ չգործադրվի, ուժի գործադրման սպառնալիք չլինի: Սա է մեր բանակցությունների հիմքում»:

Մեր կողմից նկատենք, որ 1998-ից ի վեր, երբ միջնորդները հակամարտության կողմերին ներկայացրին «Ընդհանուր պետություն» առաջարկը, այդ եւ դրանից հետո արված ղարաբաղյան կարգավորման բոլոր ոչ պաշտոնական առաջարկները եւ նախագծերն այս կամ այն կերպ ներառել են նաեւ ինքնորոշման սկզբունքը: Եվ ընդհանրապես, վերջին տասը տարիներին անդադար խոսք է գնացել միջազգային իրավունքի երկու սկզբունքները՝ տարածքային ամբողջականությունը եւ ազգերի ինքնորոշումը «հաշտեցնելու» մասին, այդ թվում՝ ղարաբաղյան հակամարտության կարգավորման համար:

Նախարար Նալբանդյանը, անդրադառնալով մադրիդյան սկզբունքներին, ասաց. «Երբ խոսում ենք Մադրիդի սկզբունքների մասին, դա չի նշանակում, թե Հայաստանը ընդունել է, այդպես չէ: Ադրբեջանը ամիսներ շարունակ ձեւացնում էր, որ այդպիսի առաջարկներ գոյություն չունեն: Այսօր նշվում է, որ այդպիսի առաջարկներ կան»:

Նալբանդյանը Ադրբեջանին մեղադրում է գերզինվելու եւ Մոսկվայի հռչակագիրը կամայական մեկնաբանելու մեջ

ԵԱՀԿ նախարարական հանդիպման երկու օրերի ընթացքում կազմակերպության անդամ բոլոր 56 երկրների ներկայացուցիչներին ելույթի հնարավորություն է տրվում: Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովի ելույթը համեմատած նախորդ տարիների ելույթների հետ, պակաս ագրեսիվ էր: Փոխարենը, այս անգամ Ադրբեջանը ղարաբաղյան կարգավորման իր պատկերացումներն էր տարածել գրավոր փաստաթղթի տեսքով:

Այդ փաստաթղթում Ադրբեջանը ներկայացրել է կարգավորման իր պատկերացումները. Հայաստանը պետք է ամբողջությամբ դուրս բերի իր զինուժը Ադրբեջանի «գրավյալ բոլոր շրջաններից», տեղահանվածները պետք է «անվտանգ եւ արժանապատվորեն» վերադառնան իրենց բնակավայրերը՝ «Լեռնային Ղարաբաղ եւ հարակից շրջաններ», անհրաժեշտ է հաշտության եւ հանդուրժողականության հատուկ ծրագիր՝ «Լեռնային Ղարաբաղի շրջանի երկու համայնքների միջեւ համագործակցություն» հաստատելու նպատակով, տարածաշրջանի բոլոր հաղորդակցությունները պետք է բացվեն երկկողմանի օգտագործման համար:

Երեկ նախարար Նալբանդյանը իր ելույթում ննդատեց Ադրբեջանին, ասելով, որ այդ երկիրը կամայականորեն է մեկնաբանում Մոսկվայի հռչակագիրը եւ բանակցությունների ողջ գործընթացը: Նախարարը հիշատակեց ԵԱՀԿ-ում Ադրբեջանի տարածած գրավոր տեքստը, ասելով, թե չի ցանկանում անգամ մեկնաբանել:

Նալբանդյանը ափսոսանքով նշեց, որ Ադրբեջանի գերռազմականացումը, որը հակասում է նրա ստանձնած միջազգային պարտավորություններին, համարժեք պատասխան չի ստանում Եվրոպայում սովորական զինված ուժերի պայմանագրի անդամ պետությունների մեծ մասի կողմից:

ԵԱՀԿ նախարարների խորհուրդը հայտարություն է ընդունել Լեռնային Ղարաբաղի հակամարտության մասին

Ինչպես նախորդ՝ Մադրիդի 15-րդ նախարարական հանդիպմանը, Հելսինկիում եւս ընդունվեց հայտարարություն Լեռնային Ղարաբաղի հակամարտության մասին: ԵԱՀԿ նախարարների խորհուրդը ողջունել է ղարաբաղյան կարգավորման «կառուցողական եւ դրական» ընթացքը, ինչը հաջորդել է Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների՝ 2008-ի հունիսի 6-ի Սանկտ Պետերբուրգում եւ նոյեմբերի 2-ին Մոսկվայում կայացած հանդիպումներին:

ԵԱՀԿ նախարարների խորհուրդը Ռուսաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների ստորագրած Մոսկվայի հռչակագիրը համարել է «խոստումնալից փուլ» կարգավորման բանակցություններում: Նախարարների խորհուրդը հակամարտության կողմերին հորդորել է լրամշակել Մադրիդում առաջարկված հիմնարար սկզբունքները եւ սկսել համապարփակ խաղաղ համաձայնագրի մշակումը:

6 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2008 ԷՋ Ա

ՀԱՎԵԼՎԱԾ

Պարբերականությունը՝ երկշաբաթյա

Թիվ 22(65)



ՅՈՒՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վիլյամ Սարոյանի լուսանկարային սագան*

...Վիլյամ Սարոյանը 1976-ին եւ 1978-ին եկավ Հայաստան: Հայաստանի ու հայ մարդկանց համար Վիլյամ Սարոյանի այցելությունները տոն էին, համաժողովրդական ցնծություն եւ ուրախություն: Իր անձով ու ներկայությամբ Սարոյանը՝ մեր էպոսի վիթխարի լեռնազանգվածից պոկված հսկա մի ժայռաբեկոր, տարածություն ու ժամանակ էր լցնում...

Սարոյանը եկավ, գնաց եւ գարնանային մի օր էլ ընդմիշտ հեռացավ մեզնից դեպի անմահություն: Իրենից հետո Հայաստանում մնաց իր ոգեղեն տեսիլը, իր լեգենդական գեղեցկության հմայքը եւ իր ձայնը... Իրենից հետո բազում հուշեր ու գրեր գվեցին, մարդիկ բանավոր ու գրավոր անվերջ վերապատմեցին Սարոյանի օրերն ու ժամերը, ասես ջանալով վերստացնել դրանք, վերադարձնել ու երկարաձգել Սարոյանի ներկայությունը Հայաստանում... Սարոյանը հայ ժողովրդի եզակի այն զավակներից մեկն է, ում անունը, անձը, կյանքը եւ գործը արյուն ու ավիշ են ներարկում ժողովրդին, նոր կենսականություն են հաղորդում նրան, երկարացնում ժողովրդի կյանքն ու գոյությունը... Եվ ժողովուրդը, պարզ ժողովուրդը ներհայեցողականորեն-ներքնատեսորեն-ինտուիտիվ զգում եւ հասկանում էր դա: Եվ այսօր էլ հենց դա՛ է Վիլյամ Սարոյանի հանդեպ համաժողովրդական սիրո եւ խանդաղատանքի նախահիմքն ու աղբյուրը:

Երբեք ոչ մի արքա չի ունեցել այնպիսի արտառոց ու տպավորիչ շախմատ, որպիսին ուներ Վիլյամ Սարոյանը Հայաստանում: Այստեղ նրան ամեն օր եւ ամենուր սպասում եւ ուղեկցում էր բազմաբղեսս մարդկանց վիթխարի մի բազմություն՝ դպրոցականներ եւ ուսանողներ, պատանիներ ու երիտասարդներ, հասուն ու տարեց, ամենատարբեր զբաղմունքի մարդիկ՝ գրողներ, գիտնականներ, արվեստագետներ եւ ճարտարագետներ, բանվորներ, արհեստավորներ եւ այլն, եւ այլն:

Վիլյամ Սարոյանի՝ Հայաստանում անցկացրած ամեն մի օրը, առանց չափազանցության, վերածվում էր մի մեծ տոնախմբության, որին մասնակից էին տասնյակ ու հարյուրավոր մարդիկ: Եվ բնականաբար, դժվար պիտի լիներ բառերով նկարագրել ու պահել այդ օրերի ցնծությունը, ուրախությունը, ջերմությունը:

Բայց, ի բարեբախտություն մեզ, այդ օրերին Վիլյամ Սարոյանին մշտապես ուղեկցել է նաեւ մեր տաղանդավոր արվեստագետներից մեկը՝ լուսանկարիչ Պողոս Պողոսյանը: Այն, ինչ կարող էր չնկատել մարդկային անգամ ամենասուր աչքը, տեսել է նրա լուսանկարչական գործիքը, եւ այն, ինչ ժամանակի ընթացքում կարող էր ջնջվել մարդկային հիշողությունից, մեկընդմիշտ դրոշմվել է լուսանկարչական ժապավենին: Լուսանկարիչն արել է Վիլյամ Սարոյանի մոտ հազար լուսանկար՝ այդպիսով առարկայացնելով Վիլյամ Սարոյանի հայաստանյան այցելությունների անկրկնելի պահերն ու խոսուն մանրամասները:

Լուսանկարիչը հարմար ու գեղեցիկ կադր չի որոնել, ազդեցիկ տեսարան չի փնտրել. նա լուսանկարել է Սարոյանին այնպես, ինչպիսին որ նա եղել է այդ պահին, այդ վայրկյանին: Եվ Սարոյանը այդ լուսանկարներում բազմազան է ու անվերջավոր:

Մի տեսեք, թե ի՞նչ լրջությամբ է խոսում Սարոյանը երեխաների ու պատանիների հետ եւ ի՞նչ ուշադրությամբ է լսում նրանց, ի՞նչ է մտածում Պարույր Սեւակի գյուղական տանը, բանաստեղծի լուսանկարներով լեցուն սենյակում նստած գրողը, հարազատի ժպիտով ի՞նչ գաղտնիք է ասում գեղջկուհի կանանց, ի՞նչ է խոսում դաշտում աշխատող պարզ գյուղացիների հետ՝ մենք երբեք այլեւս չենք իմանա... Նկարիչների ու գրողների հետ նա ուրիշ, ա՛յլ Սարոյան է, խաչքարի առջեւ կանգնածը՝ ուրիշ Սարոյան, Զվարթնոցի ավերակներում մոլորվածը՝ ուրիշ: Վեհափառ կաթողիկոսի հետ զուցողը վեհափառ գրողն է, իսկ, այ, ծիրանի ծառի տակ նստած այս մտածկոտ ու անդորր հոգով մարդը հո իսկական բիթլիսցի այգեպան է...

Պողոս Պողոսյանի լուսանկարներում Վիլյամ Սարոյանը ե՛ւ Զոնի է, ե՛ւ Բեն Ալեքսանդր, ե՛ւ Զասփեր Մըֆ-Գրեգոր... Այս լուսանկարները ներկայացնում են մի հորդահոս կյանք, մի մեծ ներկայացում-պիես, որի գլխավոր դերակատարը ինքն է՝ Վիլյամ Սարոյանը, իսկ մնացյալ դերերը խաղում են լուսանկարներում եղած բոլոր մարդիկ: Հայաստանում Վիլյամ Սարոյանը խաղում էր իր մեծագույն դերը՝ Վիլյամ Սարոյան: Ինչ նուրբ հումոր ու հեգնանք կա իր կեցվածքների մեջ. նա երբեմն հատկապես է դիրք ընդունում՝ իր կեցվածքով հեգնելով ե՛ւ ինքն իրեն, ե՛ւ իրեն շրջապատողներին, ե՛ւ նույնիսկ իր սիրելի բարեկամ լուսանկարչին... Բայց ահա խաչքարի կողքին ինքը խաչքար է (մի լուսանկարում թեւերը տարածած Սարոյանը կարծես ասում է՝ նայեք, մի խաչքար էլ ես եմ), բարձրաքանդակի կողքին՝ իրոք բարձրաքանդակ... Որքա՜ն ներդաշնակ է Սարոյանը Հայաստանի բնանկարին. Արարատյան լուսավոր դաշտը գրողի անվախճան տարածությունն է, Արարատ լեռը եւ Վիլյամ Սարոյանը մի են, Ջարենցի կամարը նաեւ իր լուսապսակն է, այս մի լուսանկարում բահը ձեռքին այս հողագործը աշխարհահռչակ գրողը չէ, այլ հայկական հողի պարզ աշխատավոր...

Լուսանկարներում Սարոյանը ընդունել է խաղի բարձրաձայն չասվող կանոնները՝ Վեհափառ Հայրապետ Վազգեն Առաջինը նրան Նոյի լեռան ստորոտում ածած խաղողի հատիկ է հրամցնում, Գրիգոր Գուրզադյանի հետ գրկախառնվում է հազար տարի եղբորը չտեսած եղբոր պես, համակ ուշադրությամբ լսում է ինչ-որ մեկի ճառը թե ելույթը, մարշալ Հովհաննես Բաղրամյանի հետ զրուցում է չգիտես՝ գրականության մարշա՞լը, թե՞ մարշալի հերոսական նկարագրի հանդեպ ակնածանք ու սքանչացում ունեցող հայը...

Այսպես, Պողոս Պողոսյանի լուսանկարչական գործիքը կաթիլ առ կաթիլ, կադր առ կադր ամբողջացնում է Սարոյանի էպիկական նկարագիրը. նա կարծես իրոք մեր էպոսից ելած կերպար լինի՝ նորօրյա մի Ջենով Օհան կամ Քեռի Թորոս...

Ինչն է ամենաբնորոշը եւ ընդհանրականը այս լուսանկարներում. Պողոս Պողոսյանի տեսածն ու նկարածը, որ իր հայացքն է, տեսնելու իր կերպը, լի է Սարոյանի հանդեպ անսահման սիրով ու ջերմությամբ: Բայց դա միայն Պողոսի վերաբերմունքը չէ. նա արտահայտել է մեր համաժողովրդական սերն ու հիացումը Սարոյանի հանդեպ:

Եվ եթե ուշադիր դիտենք, ապա կտեսնենք, որ այս լուսանկարներում Սարոյանի շուրջը եղած, Սարոյանին շրջապատած բոլոր մարդիկ՝ մեծից փոքր, ժպտում են, ծիծաղում են, ուրախ են ու երջանիկ եւ, կարծես, մի մեծ սիրո լույսի մեջ են, Սարոյան գրողի սիրո մեջ: Պողոսյանի լուսանկարչական գործիքը նաեւ սա է արձանագրել:

Ինչ սիրով են մեծ գրողին շրջապատել Հայաստանի գրողները, նկարիչները, արվեստագետները, մշակույթի մարդիկ՝ Հրանտ Մաթեւոսյանը, Վահագն Դավթյանը, Սերո Խանզադյանը, Սեյրան Խաթլամաջյանը, ուրիշներ, շատ-շատերը...

Պողոս Պողոսյանի լուսանկարներում Վիլյամ Սարոյանը շատ վառ, հարափոփոխ, անորսալի ու անբռնելի էություն է: Եվ թվում է, թե ահա, այս մի լուսանկարում է իսկական Սարոյանը, բայց հաջորդ լուսանկարը այլ բան է ասում, իսկ իսկական Սարոյանը երբեմն մեզ թվում է անիրական ու հեռավոր... Բայց նա այստեղ է, այս բոլոր լուսանկարների մեջ, իր հարուստ նկարագրի եւ բարդ էության դրսեւորումների միասնական ամբողջությամբ:

Թախծոտ ու ողբերգական մի շեշտ կա ե՛ւ այս լուսանկարներում ընդհանրապես, ե՛ւ Սարոյանի կերպարի մեջ. բիթլիսցի հին հայը համառորեն ամենուր իր Բիթլիսն է որոնում, «ծառը իր արմատն է փնտրում», եւ գրողը հանդիպում է տասնյակ տարիներ իրենից հեռու եղած իր Հայրենիքին... Սա շատ հուզիչ է ու մարդկային...

Պողոսյանը Վիլյամ Սարոյանի կողքինքրա հետ պատկերել-լուսանկարել է մեր մարդկանց՝ կոշտ ու կոպիտ գյուղացիներ, պարզ գեղջկուհի կանայք, ծերեր եւ երեխաներ, իր լեռնաշխարհի նման չհոգկված ժողովուրդ... Եվ այդ ժողովուրդը,- ինչպես դա հստակ երեւում է լուսանկարներում,- սիրում-պաշտում է Սարոյանին եւ Սարոյանն էլ սիրում է այդ մարդկանց: Սա լուսանկարչի ազնվությունն է ու անկեղծությունը. չգունազարդել, չգեղեցկացնել ոչ մի բան, տեսնել այն, ինչ որ կա, ինչ որ իսկությունն է ու ճշմարտությունը:

Սարոյանը մեկ իսկ վայրկյան հանգիստ չէ այս լուսանկարներում, մեկ իսկ վայրկյան ստատիկ վիճակում չէ: Նա ապրում է, իր կյանքը հոսում է, տեւում է ու շարունակվում...

Տաղանդավոր լուսանկարիչը, կարծում եմ, գտել է Վիլյամ Սարոյանի հոգին կադրալու բանալին: Իր հարյուրավոր լուսանկարների շարքով, որոնց միայն մի մասն է ներկայացված այս ալբոմում, նա ստեղծել է մեծ գրողին ներկայացնող, նրա կյանքը պատմող մի իսկական ասք, սագա: Այդ լուսանկարներից յուրաքանչյուրը ոչ միայն Սարոյանի կյանքի այլեւ անդարձելի որեւէ մեկ պահն է, այլեւ մեծ Մարդասերի, Տեսանողի, Գրողի՝ առ Հայաստան եւ առ Մարդը առհասարակ ունեցած մեծ սիրո վկայությունը...

Ժամանակին Վիլյամ Սարոյանը նկատել է արվեստագետ-լուսանկարչի ձիրքը, մարդու ներաշխարհը լուսանկարչական գործիքով տեսնելու եւ կադրալու կարողությունը եւ գրավոր վկայել է իր բարձր վերաբերմունքը՝ Պողոս Պողոսյանին համարելով «իր ընկերը» եւ կոչելով «ֆոտոխցիկի բանաստեղծ»...

For my friend one of the great poets of the Camera in the world
Boghos Boghossian of Yerevan & the World
with profound admiration
William Saroyan
1978

(*) «Saroyan. His Heart is In The Highlands», Armenian Technology Group, Inc., Armenian Heritage Museum, խմբագիր՝ Վարուժան Տեր-Սիմոնյան, առաջաբանը՝ Համլետ Սարոյանի, Ֆրեզնո, Կալիֆոռնիա, 128 էջ, 100 լուսանկար: ■

ԱԶԳ-ՆԵՐԴԻՐ

Տպավորություն

Լոնդոնյան թանգարանների գրավչությունը նրանց մատչելիությունն է նաեւ: Դրանք զբոսաշրջիկների եւ ընտիր խավի համար չեն միայն, այլեւ ու մանավանդ երիտասարդների ու պատանիների, անգամ երեխաների համար: Տեսել եմ, ասենք, Ազգային պատկերասրահում կամ Վիկտորիա եւ Ալբերտ արվեստի թանգարանում, համազգեստավոր դպրոցականների հոծ խմբեր, նստոտած տարբեր ցուցասրահների հատակին, թուղթ ու մատիտ ձեռքներին, նկարչության կամ պատմության ուսուցչուհու առաջնորդությամբ, ասենք Դյուրերի կամ Թըրների մեծ կտավի առաջ դաս են անցկացնում, բացատրություններ լսում ու փորձում վերարտադրել պատկերվածը: Փաստորեն գեղագիտական ճաշակ ու գիտելիք, այլեւ, անզգալաբար, բրիտանական ազգային-կայսերական հզորանքի մասին «պատգամներ» են ստանում:



Նախկին էլեկտրակայանը՝ այժմ Թեյթ թանգարան

Լուիզ Բուրժուայի «Սարդը», այստեղ առանց ձվերի

Թեյթի ելքերից մեկը՝ ուղիղ Թեմզայի վրա

Tate

(Երեւի այդ պահին միայն ինձ նմանների մտքով է անցնում, որ ցուցադրված այդ հարստությունների մեկ մասը Բրիտանական կայսրությունը դարերի ընթացքում կողոպտել-բերել-լցրել է այստեղ): Ու քանի որ լոնդոնյան քաղաքային միջավայրը, իմ տպավորությամբ, եվրոպական գործնապաշտության ու խնայողասիրության, հանրօգուտ մտածելակերպի ամենակատարյալ հայելին է, արդա իշխանություններն ամեն ինչ արել են, որպեսզի թանգարան-պատկերասրահի այցելությունը լոնդոնաբնակների համար դառնա օգտակար ժամանցի, նույնիսկ ընտանեկան հանգստի ձեւ՝ ամեն իմաստով մատչելի ու հարազատ բոլորի համար: Կարիք կա՞ հիշեցնելու, որ մշակութային ցուցադրություններ մուտքն այս քաղաքի թանգարաններում անվճար է:

Բացառություն չէ նաեւ Թեյթ ժամանակակից արվեստի պատկերասրահը (Tate Modern Art Gallery), որտեղ օրերս եղա առաջին անգամ: Անշուշտ, հարուստավոր տահիներ ունեցող այս հսկայական կառույցի դիմաց մեր «պատկերասրահ» բառն անհեթեթ է թվում: Բացումը կատարվել է նոր հազարամյակի սկզբին՝ նշանավորելու կամ խորհրդանշելու համար մտքային որոնումների, ստեղծագործունեության եւ երեւակայության թռիչքի անսահմանությունը: Արվեստի եւ արվեստագործության ճանապարհով:

Առավել հատկանշականը պատկերասրահ-թանգարանի ծննդոցն է: Թեմզայի ափին, 3-դ հազարամյակ մուտքը խորհրդանշող «Լոնդոնի աչք» (London Eye) հսկա ճախարակակառուսելի դիմաց, 34000 քառ. մետր օգտագործելի մակերեսով, 5 հարկանի այս կառույցը եղել է էլեկտրակայան՝ գորշ, անհրապույր, այլանդակ ծխնելույզով մի զանգված՝ կառուցված 1940-ականներին: Էկոլոգիական եւ այլ նկատառումներով 1981-ին էլեկտրակայանը փակվել է՝ ազդանշան տալով ամեն տեսակի ներդնողներին կոիվ մղել գեսափնյա տարածքին տիրանալու: Սակայն եղել են տեսիլք ու տեսլական ունեցող մարդիկ, որոնց հաջողվել է Մեծ Բրիտանիայի արդյունաբերական այդ սիմվոլը վերածել ժամանակակից արվեստի պատկերասրահի: Գտնվել են մտքի թռիչքը երկաթ-բետոն-ապակիով անշարժացնող ճարտարապետները՝ շվեյցարիացի Ժակ Հերցոգը եւ Փիեռ դը Մյուրոնը, որոնք, ի դեմ, հետագայում նախագծեցին Պեկինի օլիմպիական գլխավոր մարզադաշտը՝ Թռչնաբույնը: Քառասային, ապակե բրգաձեւ կառույցի շինարարությունը սկզբնապես արժեցել է 68 մլն ֆունտ ստեռլինգ, հայթայթված պետբյուջեից եւ, մերոնց ականջը խաբելով ասեմ, ազգային վիճակախաղի եկամուտներից: Ու դեռ շարունակվում են հանգանակությունները: Բացումից ի վեր 35 մլն մարդ է այցելել, մինչդեռ սկզբնապես Թեյթը կառուցված է եղել տարեկան 1.8 մլն այցելուի նախատեսությամբ: Դա գերխնդրում է առաջացնում, հատկապես շաբաթավերջերին: 2002 թ.-ին, օրինակ, Պիկասոյի եւ Մատիսի հատուկ ցուցահանդեսները դիտելու ցանկությունն այնքան մեծ է եղել, որ ցուցահանդեսը բաց է պահվել ամբողջ գիշեր եւ ընդունել է կես միլիոն այցելու...

Հինգ մակարդակների կամ հարկերի վրա գործող պատկերասրահ-թանգարանը ցուցասրահներից բացի ունի, անշուշտ, հարակից հատակագծեր՝ ճաշարաններ, սրճարաններ, գրախանութ, դասախոսությունների համար մեծ ու փոքր դահլիճներ, անգամ՝ երեխաների տակը փոխելու սենյակներ, որտեղ, արեւելցուհ համար խիստ տարօրինակ, այդ գործով հիմնականում զբաղվում էին հայրիկները: Առավել ուշագրավն ամեն հարկի վրա գտնվող բարձրադիր կամ ցածր սեղաններն են՝ ջրաներկի, պաստելների, մատիտների ու նկարչական թղթի պաշարով: Դրանք նորահաս սերնդի ներկայացուցիչների համար են, որոնք ջանասիրաբար ու խիստ կենտրոնացած նկարում են ու գծում, երբեմն հատուկ վարժտիների հսկողությամբ: Թանգարան-պատկերասրահը ոչ միայն դիտելու, այլեւ ստեղծագործելու վայր է հատկապես նրանց համար, ովքեր եկել են ընտանիքներով՝ անգամ մայր բառի ֆրանսերենը: Նրա սամոսից կախված ցանցի մեջ սրիտակ քարե հավկիթներ են: Հեղինակը 95-ամյա արձանագործ Լուիզ Բուրժուան է: Այդ սեւ սարդը սկզբում սարսափեցնում, հետո իր մայրականությամբ ողողում է քեզ, զգաստացնում եւ լարում հետաքրքրությունդ, ու միաժամանակ հուզում, որ այդ շենքում միայն գեղեցիկ ու գեղակերտ բաներ չես տեսնելու, որ իրականությունը, երբեմն կամ հաճախ, ավելի իրական է, քերեւս ոչ գեղեցիկ, բայց ամեն պարագայում ավելի՛ կարեւոր, ավելի՛ ճշմարիտ...

Իմ այցելած օրն այդպիսի երկու ցուցահանդես կար Թեյթում: Առաջինը բրազիլացի արվեստագետ Ջիլդո Մեյրելեզի (Cildo Meireles) ինստալացիաների, երկրորդը՝ ամերիկացի նկարիչ-դիզայներ Մարկ Ռոթքոյի (Mark Rothko) գործերի: Կոնցեպտուալ արվեստի առաջամարտիկ Մեյրելեզը, օգտագործելով կենցաղում հանդիպող հազիվ քայլել սովորած կամ սայլակի մեջ ընած երեխաներով:

Ես այնքան էլ լավ չհասկացա, թե կառույցի գլխավոր մուտքին, որտեղից սկսվում է դեպի ներս ասփիճաններին փոխարինող բավական երկար զառիվայրը, ինչո՞ւ է տեղադրվել երկաթբետոնյա հսկա սարդը, որի անունը Maman է, պող հասարակ առարկաներ, փորձում է խուզարկել անհունությունը, անվերջությունը, եւ հասնում է բացարձակ խստության, մեծագույն պարզության- մեր չափումներն անհեթեթ են տիեզերական չափերի համեմատ:

Բրազիլացի արվեստագետ Ալֆրեդո Ֆոնտեսին նվիրված նրա ինստալացիան, որը հենց այդպես էլ կոչվում է՝ «Ֆոնտես», 6x8 մ տարածքի վրա տարված կոմպոզիցիա է, բաղկացած պատերին անկանոն կոցրած 1000 ճերմակ եւ կլոր ժամացույցներից ու նույնպես ճերմակ 6000 փայտյա ծալովի մետրերից, որոնք առաստաղից կախված են պարույկաձեւ: Մտնում ես պարույկի ավելի լայն անցքից ներս եւ սրիռալաձեւ առաջանում հետզհետե խտացող այդ մետրերի արահետով մինչեւ... անվերջանալի անսահմանություն: Ժամացույցը՝ իբրեւ ժամանակի, քանոնը՝ ծավալի չափման գործիքներ, երկուսն էլ անիմաստ են դառնում տիեզերական չափումների համար: Մարդիկ իզուր են փորձում չափել անչափելին, բայց, միաժամանակ, կարետվում է հենց որոնման այդ ակտը...

Նրա մյուս՝ 8 ինստալացիաներից ինձ դուր եկավ շուրջ 7 մետր բարձրությամբ իրար վրա դասված տարբեր «տարիքի» 800 ռադիոների աշտարակը՝ բոլորն էլ միացված անորոշ տյուլինգով, եւ բոլորի լամպերն էլ վառ: Հեղինակն այս գործը մկտրել է «Բաբելոն-2001»: Աստվածաշնչից հայտնի աշտարակը, որը խորհրդանշում է հաղորդակցվելու անկարողությունից առաջացած մարդկային հակամարտությունները, շեշտում է չհամակարգված մեր արարքների անհեթեթությունը: Եվ Ջիլդո Մեյրելեզն այն կոչել է «Դեմքերի հնագիտական նմուշ»:

Բոլորովին տարբեր տպավորություն է թողնում մեկ այլ հարկում բացված Ռոթքոյի ցուցահանդեսը: Հաջորդական 9 սրահներում ներկայացվող ամերիկացի արվեստագետի գործերը մեծամասամբ հսկայական մյուռալներ են, որնանկարներ, որոնք որեւէ պատկեր չեն ներկայացնում, այլ պարզապես՝ գույների, բացառապես կարմիր, սեւ եւ գորշ գույների տոնայնություններ: Թեեւ մասնագետներն այդ որնանկարների ստեղծման տեխնիկայի, օգտագործված նյութերի՝ ներկերի, սոսինձների, վրձինների գործածման եւ շերտային խվաթների մանրամասնություններում շատ բան են տեսնում-նկատում, սակայն իմ տպավորությամբ դրանք առանձին-առանձին վերցրած ոչ մի բան էլ չեն նշանակում, անգամ դեկորատիվ իմաստով: (Ինքը՝ Ռոթքոն, խուսափելու համար քննադատների դեկորատիվության մեղադրանքներից, ավելի ուշ ստեղծագործություններում նվազեցրել է գույների օգտագործումը եւ սահմանափակվել կարմիր-սեւ-մոխրագույնի երանգներով): Այստամենայնիվ, որնանկարների հաջորդական-դասավորված դիտումից զգալի է դառնում, որ ինչ-որ մթնոլորտ եւ տրամադրություն ստեղծվել է: Ռոթքոն ինքը մի տեղ խոստովանել է. «Եթե որեւէ բան արժի մեկ անգամ անել, ապա արժի այդ բանն անել կրկին ու կրկին՝ զարգացնելով, փորձարկելով, պահանջելով դրա կրկնությամբ, որ հանրությունն ուշադրություն դարձնի դրան»: Ըստ երեւույթին Թեյթը հենց դա՛ է արել, մղելով մարդկանց, որպեսզի ուշադրություն դարձնեն արվեստագետի ամեն մի փորձարկության վրա, նույնիսկ եթե դա պոետականության հետ չունի որեւէ աղերս:

Բոլոր դեմքերում, որպես իրեն նորմալ համարող մարդ, ես նախընտրում եմ պոետականը: Եվ Թեյթի մյուս հարկերում ու հատկապես երրորդում ես հանդիպեցի պոետականության իսկական հրավառության: Դա աբստրակցիոնիզմի, էքսպրեսիոնիզմի, աբստրակտ-էքսպրեսիոնիզմի, կուբիզմի, ֆուտուրիզմի, պոպ-արտի եւ այլ՝ իմ հասկացած եւ չհասկացած բոլոր տեսակի իզմերի շերթ էր, տոնախմբություն, որտեղ սրահից սրահ իրար էին հոշտում՝ որտան էլ որ առաջին սրահի պատին փառավորապես նստած Մոնեի մեծադիր «Ջրաշուշանները» իր աղջամղջային տիեզերական գույներով քեզ թելադրեր ոգու խաղաղությամբ ու փիլիսոփայորեն մոտենալու ամեն ինչի, Կանդինսկին, Պիկասոն, Մատիսը, Միոն, Ֆրանսիս Բեյքոնը, Ալբերտո Ջակոմետտին, Ջեքսոն Պոլոքը, Մառլեն Դյուման, Անիշ Կապուրը եւ ուրիշները՝ մեզնից պահանջելով տագնապել իրենց հետ: Մեր անհանգիստ, հակասական, պրպտուն, պահանջկոտ, ճշմարտախույզ դարաշրջանն է ներկայացված նրանց գործերում: Իրենց ձեւերով ու գույներով բոլորովին տարբեր իրարից, բայց ճշմարտության որոնման ջանքերով բոլորը նման իրարու: Առաջին անգամ «կենդանի» տեսա այնտեղ Պիկասոյի բնորդ-հոմանուհիներից Դորա Մաարի դիմանկարներից երկուսը՝ մեկը սիրատենչ գորվանով, մյուսը ասելավառ ծամածռությամբ: Մատիսի միջերկրականյան կապույտը տեսա ու արեւելյան շքեղ կանաչները: Կանդինսկու խորհրդավոր լճերը եւ Միոյի հանելուկային մանրամասնությունների համադրությունը՝ երկրորդ տպավորությամբ դաշն ու ներդաշնակ:

Բայց ինձ հետ հաստատ մի բան պատահեց թիվ 3 ցուցասրահում: Մուտքից ներս, հակառակ որ դեմքս դիմացի պատի նկարներին էր, աջ թեփս ուղղությամբ հետեւիցս մի բան ինձ քաշեց դեպի իրեն: Հեղակարծ թեքվեցի. Արշիլն էր,

Տես էջ 9

ԱԶԳ-ՆԵՐԴԻՐ

Հոգեհարազատություն...

Իմ Սարոյանը

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՍԱՀԱԿՅԱՆ

Վիլյամ Սարոյանին նվիրված այս գրությունը գուցե տեղ-տեղ տարակուսելի թվա մեր ընթերցողներից ոմանց. հեղինակը հիշողական ադրումներով այնպես է համաձուլվել մեծ գրողի հերոսների հետ, այնպիսի հոգեհարազատությամբ է շաղվել «Սպիտակ ձին», «Նարինջները», «Փախուստ դեպի լուսին» եւ այլ գործերի պայծառ կերպարներին ու նրանց միջոցով՝ սարոյանական հոգեկերտվածքին, որ երբեմն նրա խոսքն անանջատելի է թվում այդ բոլորից ու կարծես շարունակում է նրանց կյանքն իրեն իր մեջ: Իսկապես հազվագյուտ է մեզ տրվում այսպիսի եւ այսքան հոգեհարազատություն գրողի եւ ընթերցողի միջեւ... Խմբ.

Այսօր մենք ազգովին նշում ենք մի շատ նշանակալից եւ հրաշալի հոբելյան: Համաշխարհային գրականության պատմության ընթացքի՝ ամենազարմանալի, ամենա արտիստիկ, իսկ մեզ համար՝ ամենասիրելի գրողի՝ Վիլյամ Սարոյանի 100-ամյա հոբելյանը փառաղանծ, որի բովանդակության մեջ խտացված է մեր ժողովրդի իղձերի, երազների՝ ճիշտ է անկատար, բայց նաեւ լավատեսական ուղին: Աշխարհին բարի հայացքով նայելու, մարդկանց հիշեցնելու, որ նրանք եղբայրներ են, ահա մեծ մարդասերի նրա կոչումը: Եվ կյանքիս ամենահիշարժան օրն եմ համարում, երբ մի գեղեցիկ դեկտեմբերյան օր, բախտ եմ ունեցել լինել Ֆրեզնոյում: Վերջապես, մտածում էի ես, վերջապես սեփական աչքերով կտեսնեմ այն նվիրական եւ հարազատ վայրերը, որոնց մասին միշտ կարդացել եւ «ագահությամբ» կարդում էի: Ֆրեզնոն գտնվում է Սան-Խոակին կոչվող ընդարձակ հովտի կենտրոնում, որի մասին իմ ընկեր չաղ խաշխաշի եղբայր Լեոնը 19, թե 20 թվին երգեց Լոնգֆելլոյի անվան միջնակարգ դպրոցի ասակերտության առաջ:

Սան Խոակին, կանաչ հովիտ սմանչելի
Ցինաղագույնն իմ այցելած վայրերից
Այստեղ արեւն իր շողերն է սփռում
Եվ ամենուր ծաղկած նարինջն է բուրում:

Եվ իսկապես արեւշատ մի մրգաստան էր Ֆրեզնոն, հաճելի բույրերով, մի փոքր մեր Մեղրին հիշեցնող: Մենք քշում էինք մեքենան Սան Խոակին հովիտով, եւ ես հիշում էի այն փողոցների անունները, որոնք այնքան հարազատ էին ինձ: Մենք գտանք Սանտա Կլարա փողոցը եւ կանգ առանք: Ինձ թվում էր, թե կտեսնեմ նրան տան աստիճաններին նստած, երազկոտ... Ինձ թվում էր հիմա մի անկյունից դուրս կգա իր հեծանիվով եւ կանցնի այդտեղով, կժպտա մեզ: Ինձ համար նա չէր մահացել եւ չի մահացել: Անմահ է իր հերոսների պես: Ինձ թվաց, որ հիմա այստեղից դուրս կգան Հոմերմաղոլին՝ փոքրիկ Յուլիսիսի ձեռքը բռնած, Մերին եւ Բեսը, իսկ մայրիկը կհսկի նրանց իր բարի հայացքով՝ պատուհանից: Ես տեսա խոտրով քեռուն իր խեղճ ու կարոտակեզ արաբին թեւանցուկ, ահա եկավ ասորի ագարակատեր Ջոն Բայրոն իր սայլով, որի ձին գողացել էր իմ հորեղբորորդի Մուրադը, որին բոլորը խելառ էին համարում մեր ցեղում, բացի ինձանից: Ես գիտեի, որ իմ զարմիկը կարողանում է կյանքն ավելի լավ վայելել, քան ուրիշ որեւէ մեկը, բայց այս մեկին չէի կարող հավատալ նույնիսկ ես: Իմ զարմիկ Մուրադը հեծել էր մի սպիտակ գեղեցիկ ձի: Մենք աղքատ էինք: Մենք փող չունեինք: Ղարաղլանյանների գերդաստանի բոլոր ճյուղերը ապրում էին անհեթեթ չքավորության մեջ: Ոչ ոք չէր կարող հասկանալ, թե մենք որտեղից ենք բավարար փող ճարում մեր փորը ուտելիքով լցնելու համար: Սակայն մենք հոչակված էինք մեր ազնվությամբ, 11 դարեր ի վեր, նույնիսկ այն ժամանակ ամենահարուստն էինք մեր երկրում: Իմ զարմիկ Մուրադը մեր գերդաստանի խենթ երակի բնական շառավիղն էր: Այդ հարցում նա զիջում էր միայն իմ խոտրով քեռուն, որը մի վիթխարի, սեւ մազերով ծածկված եւ հուժկու գլխով եւ Սան Խոակին հովտի ամենահաստ բեղերով մարդն էր, բնավորությամբ այնքան վայրագ, այնքան դյուրաբորբոք, որ կտրում էր ամենքի խոսքը բղավելով՝ «վնաս չունի, ուշադրություն մի՛ դարձրու»: Ֆրեզնոյի այգեպանները իրենց զբոսախնջույքի համար գնում էին Սան Խոակին եւ Քինգս գետի ափերը:

Ֆրեզնոյի այգեպանների համար գետ գնալը Հայաստան վերադառնալու պես, կամ էլ երիտասարդության օրերին դառնալու նման մի բան էր: Սան Խոակին հովտի յուրաքանչյուր փողոց մի հուշ եւ ուրախություն էր պատճառում ինձ, բայց երբ անցանք հերթական փողոցով, խնդրեցի կանգնեցնել մեքենան եւ դուրս նետվեցի: Բեն Ալեքսանդր: Սան Բենիտո պողոտա, 2226, Ֆրեզնո, Կալիֆոռնիա: Նամակը քեզ է հասցեագրված, ինչո՞ւ բաց չես անում, պա...- Ես վախեցած եմ: Այդ բանաստեղծությունները հոյակապ էին: Ինչպե՞ս կարող է, որ ես ահաբեկվեմ: - Մի՛ հուսահատվիր, պապա, ո՞վ է այդ գրողի տարած Ալանտիկ ամսագիրը:

- Հեռացիր Ջոնի, գնա այստեղից: Դուք ողորմելի ապուշներ: Առաջ, թող որոտան ձեր անզոր թնդանոթները, դուք ոչինչ չեք կարող անել, աշխարհում բանաստեղծներ միշտ էլ կլինեն:

Մենք հասանք Այ սթրիթը, ուր հսկա, հուժկու ըմբշամարտիկ Արամ Ջոզեֆը, Արամ Հովսեփյանը, որն իհարկե բիթլիսցի էր, այստեղ մեռնելուց մի քանի տարի առաջ կանգնեցրեց Սարոյանին եւ ասաց. «Վիլլի, ուզում եմ ասել, որ Բիթլիսում հայրդ եղել է իմ ուսուցիչը: Արմենակ Սարոյանը լավագույնն էր այս աշխարհում ճանաչածս մարդկանցից»: Այդ պահը կյանքումս ապրած ամենահպարտ պահերից էր: Մենք անցնում էինք այդքան հաճելի եւ հարազատ վայրերով եւ կարծես վաղուց ծանոթ փողոցներով: Աչքիս առջեւով կինոժապավենի պես անցնում էին Սանգրի տանող ճանապարհը, նոնենիների պուրակը, երկաթգիծը, հայտնվում էին հորեղբայր Մելիքը, Կարո քեռին, իմ զարմիկ հոտոտոր Տիգրանը, Վահան Մինասյանը, Հովակիմ Սարոյանը, Սեդրակ հորեղբայրը, Այչի Մինասյանը, ծերուկ եպիսկոպոս Գալֆայանը, Թագուհի մայրիկը, Հենրին, Կոզետը, եւ Ջաղելը, Լուսանթագ Ղարաղլանյանը, բիթլիսցի Արմենակը:

Ուզում էի գոռալ. հեյ բիթլիսցիներ, ես Ձեզ մոտ եմ եկել: Հովիկը, որին պարտական եմ այս ուղեւորության համար եւ իր մեքենայով էինք, առաջարկեց գտնել եկեղեցին: Մենք գտանք հայոց եկեղեցին. օրը կիրակի էր, ժամերգության ժամ էր, եւ մենք մոտեցանք սպասավորներին եւ հարցրինք իր տան հասցեն եւ ասացինք, թե որտեղ ենք եղել: Հայոց եկեղեցու սարկավագն ասաց, որ մենք սխալ երթուղով ենք գնացել, ես մտքումս ասացի, որ ամենաճիշտ երթուղին դա էր: Ասաց, որ Սարոյանի տները գտնվում են Գրիֆֆիսվեյ փողոցի վրա, վերջին 2 տները իրենն էին եւ հանդիմանանքով ավելացրեց, որ որդին հոր մահից հետո եկավ վաճառեց տներն օտարներին: Գոնե հայերի վաճառեր... Ես ասացի, որ նա չի մահացել, հոգեւորականը ապշած նայեց երեսիս, եւ մենք դուրս ելանք: Դա 1989 թվականն էր, եւ ես 30 տարեկան էի: Մեքենան կանգնեց, ես իջա եւ զգուշավոր քայլեցի դեպի այն տունը, որի պարտեզը արդեն երեւում էր: Իր ձեռքով խնամած եւ աճեցրած ծառերը... նարնջի բուրմունքը արբեցնող էր... Ես պոկեցի ծառից երկու նարինջ, բարձրացրի գլխիցս վեր եւ հիշեցի. նրան ասված էր երկու ամենախոշոր նարինջներ ձեռքդ բռնած կանգնիր փողոցի անկյունում եւ երբ մոտովդ մեքենա անցնի, ժպտա եւ մեկնիր նարինջները: Մեկ հատը 5 սենթ, 2 հատը 10 սենթ, երեքը՝ 25 սենթ: Կժպտաս, չէ, Լյուկ, հասկացիր, մարդկանց դուր է գալիս, երբ նարինջ վաճառող տղան ժպտում է: - Կժպտամ, թեեւ դրանից այստեղ ցավում էին: Ինչ միտք ունի ապրել աշխարհում, երբ նույնիսկ հրեջ ծորակին չես կարող նայել առանց լաց լինելու ցանկության: Ինչ միտք ունի դպրոց գնալ, բարդիջան կամ նման անպետք բաներ նկատել, իսկ նախաճաշին հացի փոխարեն նարինջներ ուտել: Նրան թվաց, թե այն բանի համար է ծնվել, որ կանգնի այստեղ, փողոցի անկյունում մինչեւ աշխարհի վերջը, նարինջներ մեկնի մարդկանց ու ... ու արցունք թափելով ժպտա: Ես նարինջները մեկնեցի Հովիկին, եւ շրջում էի այգում, որտեղ նույնիսկ ծիրանի ծառ կար, երբ եկավ տան տերը, որը երկայնահասակ հնդկացի էր, բարեհամբույր մի տղա: Նա մեզ հրավիրեց ներս, եւ ես տեսա գրասեղանը, գրամեքենան, իրերը, խոհանոցի անկյունում դրված սափորները, որտեղ թորշի էր դնում ձմեռվա համար: Ես հուզված էի, նա լուսանկարում էր մեզ: Հետո նա նարինջներ նվիրեց մեզ ճանապարհի համար: Մենք հրաժեշտ տվինք այդ պատմական տանը եւ գնացինք Հին Սարաս գերեզմանատուն, այցելեցինք Սողոմոն Թեյլերյանի գերեզմանհուշարձանին: Նրա մոտ չգնացինք, քանզի 1981-ի մայիսի 18-ը չէր եղել: Ուխտագնացությունը շարունակվեց Սարոյան թաղամասով, որը հոյակապ էր եւ կանգ առանք Վարազ Սամվելյանի Սասունցի Դավթի արձանի մոտ: Ես չէի ուզում հեռանալ, բայց արդեն ուշ էր: Լոս Անջելեսի ճանապարհին, տուն վերադառնալիս՝ ես անընդհատ արտասվում էի: Հիշում էի մի լուսանկար, ուր նա 12 տարեկան էր եւ գլխարկը գլխին, հպարտ կանգնած էր երկաթգծի մոտ: Երբ նրան հարցրել են՝ ինչո՞ւ է այդ կեցվածքով, պատասխանել է, թե մենք Ֆրեզնոյի կայարանում 20 թվին Զորավար Անդրանիկին էինք դիմավորում: Այդպես կարող էր կանգնել ապագա հանճարը՝ հպարտ ու համոզված նրա անմահության մեջ, եւ նա ինձ հրամայեց այլեւս լաց չլինել: Ես ենթակվեցի եւ ժպտացի, այդպես եղավ: Այդպես կլինի: Ինչպես մեր մեծ բանաստեղծն է ասել՝ «Անմահները հրամայում են»:

Ամստերդամ-Երեւան

Հ. Գ. Ես այն երջանիկներից եմ, որ անձամբ տեսել եւ խոսել եմ հետը: 1978-ին, երբ Հայաստան էր այցելել, եկավ գեղարվեստաթատերական ինստիտուտ՝ հանդիպման ուսանողության հետ: Ես բակում անհամբեր սպասում էի, մոտեցավ ինձ, մեքենայից իջնելով, հուժկու քայլվածքով, բամբ ձայնով անունս հարցրեց, հետո մականունս եւ կրկնեց հաս-հաս՝ հայացքը հեռուներին հառած: Գուցե ես դարձա հետագայում իր հերոսներից մեկը: Դա կյանքիս երջանիկ պահերից էր: ■

Tate

Բ էջից

Գորկին, «Ջրվեժը»: Արյունս քաշեց, ինչպես ասում է ժողովուրդը: Հրաշալի կարմի՞ն էջ, հայկական կարո՞ցը, արյունոտ մահի՞կը: Չգիտեմ: Նա այդ պահին միակ հարազատ էր: Ու ես երկար զուցեցի հետը...

▼▼▼

Թեյթից դուրս գալուց, հակառակ որ արդեն օրը երեկոյանում էր, մարդկային նույն հոսքը մտնում էր ներս: Երիտասարդ զույգերը հատկապես, ոմանք՝ երեխաներով, մտնում էին արվեստի հետ նոր հանդիպման ակնկալությամբ: Երեխաները աստիճանների փոխարեն Հերցոգի ու դը Մյուռոնի սարքած զառիվայր իջնող հատակին, տոտիկները չկարողանալով համաչափ գցել, վայր էին ընկնում եւ հանկարծ զգում, որ կարելի է նաեւ քայլել, ու խանդավառ՝ փորի վրա սահում դեպի վար, մինչեւ ներքին մուտքը, որտեղից արվեստային որոնումների հեքիաթն է սկսվում: ■

Ռոթքոն իր արվեստանոցում. հետեւում՝ որմնապատկերներից մեկը:



Աղջնակը նկարում է Անիշ Կապուրի «Իշիի լույսը» ինստալացիայի առջեւ:



Չիլդո Մեյրելեզի «Էվրիկա» ինստալացիան:

Սարոյանի 100-ամյակը նշում են նաեւ օտարները

Փաստ է, որ Սարոյանը համաշխարհային մեծություն է: Նրա կարճ պատմվածքներն արդեն քանի տասնամյակ ընդգրկված են ամերիկյան ֆուեջների համար նախատեսված դասագրքերում: Եվ ուրախալի ու հպարտության առիթ է այսօր տեսնել, թե ինչպես մեզ՝ հայերիս հետ միասին օտարներն էլ են նշում նրա ծննդյան 100-ամյակը: Այսպես, «Արմինյն միտոր-տիեթեյթր» շաբաթաթերթի հոկտեմբերի 25-ի համարում կարդալով Թոմաս Նեշի գրախոսականը, տեղեկանում ենք, որ ամերիկյան «Լինդոն Փաբլիշինգ» հրատարակչությունը լույս է ընծայել «Վիլյամ Սարոյան: Վայրեր՝ ժամանակի մեջ» ալբոմը, որտեղ ամփոփված են նկարիչ Պեթ Հանթի 55 ջրաներկ կտավների գունավոր լուսապատճենները, որոնք ուղեկցվում են գող Ջենիս Սթիվընզի ներածականով:

Նկարչուհին իր աշխատանքներով ծանոթ է Կալիֆոռնիայի Սան Խոակին վելլիում: Նա ընտրել է ութ վայրեր, որոնցում Սարոյանը եղել է տարբեր առիթներով եւ ջրաներկով կտավին հանձնել այն բեմերը, որոնք ինչ-որ ձեւով առնչվում են Սարոյանի կենսագրության հետ: Ներածականում Սթիվընզը Սարոյանի կյանքն է նկարագրել՝ հարցազրույցներ ունենալով նրան ճանաչած մարդկանց հետ:

Նաեւ «Արմինյն միտոր-տիեթեյթր» շաբաթաթերթի մեզ հասած վերջին համարներից տեղեկանում ենք, որ նոյեմբերի 15-ին, 16-ին, 22-ին եւ 23-ին Բոստոնի ժամանցի տիրված վայրերից՝ «Լաֆիզ Լաունջ»-ում Ֆորտ Փոյնթ թատերական խումբը ներկայացրել է Սարոյանի «Քո կյանքի ժամանակը» պիեսը, որը ժամանակին արժանացել է Նյու Յորքի դրամատիկական գործերի քննադատների եւ Պուլիցեր մրցանակների: Սարոյանը հրաժարվել է վերջինիս 1000 դոլարի պարգեւատումից, ասելով, որ արվեստը առեւտրի չպետք է վերածվի:

«Հակառակ որ պիեսը 1930-ականների մասին է, երբ երկիրը խրված էր տնտեսական ճգնաժամի մեջ, այն նույնքան այժմեական է այսօր», նշել է այդ առթիվ Ֆորտ Փոյնթ թատերական խմբի հիմնադիր եւ տնօրեն Մարկ Միլլերը, ավելացնելով, որ ներկայացման վայրն անգամ «շատ տազական է պիեսի մթնոլորտին»: Դերասանների ընտրությունը կատարել է Բոստոնում ճանաչված դերասան-ռեժիսոր Ռոբերտ Մերֆին:

Սարոյանի փիլ բեմադրված, բայց չափազանց ջերմ զգացմունքներով գրված պիեսն արդարացի հույսի եւ հավատի ներբողականն է. «Արթնացու առաքինությունը, ում տրտում էլ որ նա գաղտնի ու տրտում թաքնվելիս լինի աշխարհի սարսափներից ու ամոթից... Ու քանի դեռ ապրում ես, այնպես ապրիր այդ ողջ հրաշալի ժամանակը, որպեսզի ոչ մի բան չավելացնես աշխարհի աղետներին ու տխրությանը», պատգամում է Բարի հսկան այդ պիեսում:

Հեռավոր Ռեյկյավիկում (Իսլանդիա) աշխարհի ամենահյուսիսային մայրաքաղաքի համալսարանի Վիգդիս Ֆինբոգադոտիրի անվան օտար լեզուների ինստիտուտում կազմակերպված հայ մշակույթի օրերի շրջանակներում սեպտեմբերին Կալիֆոռնիայի պետհամալսարանի (Ֆրեզնո) վարչակազմի դասախոսներից դոկտ. պրոֆ. Տիգրան Գույումճյանը ընթերցել է Սարոյանի գրական գործերը: Այնուհետեւ Փարիզում Սորբոնի համալսարանում, Հայկական ուսումնասիրությունների միջազգային ասոցիացիայի հովանաւորությամբ գիտաժողովում նա զեկուցում է կարդացել «Սարոյանը որպես նկարիչ» թեմայով:

Այս ամիս, դեկտեմբերի 1-ին, «Ռոմանտիկ կյանքի թանգարանում» հիշատակի երեկո է նա կազմակերպել «Սարոյանը Փարիզում» ընդհանուր խորագրի ներքո, որի ընթացքում թատերական ընթերցանությամբ Ռեն Պարբելը ներկայացրել է Սարոյանի «Հայկական մուկը» պիեսը՝ Վահան Մարտիրոսյանի դաշնամուրային նվագակցությամբ, եւ ցուցադրվել է Սարոյանի «Լավ գործը» ֆիլմը: Ավելացնենք, որ թատրոնի բեմը գտնվում է այն տան կողքին, որտեղ 1960 թվից Սարոյանը մնացել է ամեն տարի մի քանի ամիս:

Մինչեւ տարեվերջ Ստամբուլում (Թուրքիա) Գույումճյանը նախատեսել է կազմակերպել սարոյանական թեմաներով լուսանկարների ցուցահանդես (ի դեմ, Սարոյանի պարենական տունը Բիբլիտում կվերածվի թանգարանի), իսկ առաջիկա մարտին՝ Ամստերդամում հուշ-երեկո:

Եվ վերջապես բրազիլական Սան Պաուլո նահանգի գրականության ակադեմիայում Հայաստանի գլխավոր հյուպատոսության հովանավորությամբ, հոկտեմբերի 2-ին կայացել է Սարոյանի 100-ամյակին նվիրված հիշատակի հանդիսություն, որի բացման խոսքը կատարել է գրականության ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս Խոսե Ռենատո Նալինին: Ելույթ է ունեցել նաեւ ՀՀ գլխավոր հյուպատոս Վալերի Մկրտումյանը, որն անդրադարձել է տաղանդավոր գրողի գրական ժառանգությանը, որտեղ արտացոլված են տրամալ-հոգեբանական թեմաներ: Բրազիլահայ գրականագետ պրոֆ. Սոսի Ամիրալյանն իր բանախոսության ընթացքում անդրադարձել է Սարոյանի ստեղծագործություններում արտահայտված փիլիսոփայությանը:

Հանդիսությանը ներկա են գտնվել Սան Պաուլոյի գրականության ակադեմիայի պատվավոր անդամներ, տեղի հայ համայնքի ներկայացուցիչներ եւ գլխավոր հյուպատոսության աշխատակիցներ:

Քչերը գիտեն, երեւի, որ Սարոյանն իր գրական գործունեությունը սկսել է 1930-ական թվականներին եւ առաջին անգամ տպագրվել է 1933-ին ամերիկահայ «Հայրենիք» շաբաթաթերթում Միրակ Գորյան ստորագրությամբ: Նրան լայն ճանաչում է բերել, 1934-ին լույս տեսած առաջին գիրքը՝ «Խիզախ պատանին թռչող ձոճաձողի վրա եւ այլ պատմվածքներ» խորագրով: Այս մասին հիշեցրել է ճանաչված ամերիկահայ էսսեիստ Շաղղ Գասպարյանը՝ Սբ. Վարդան աստվածների Բագրատունի օթյակի եւ Սբ. Վարդան դուստրերի Սահականուշ մասնաճյուղի հովանավորությամբ կազմակերպված ճաշկերույթ-հանդիսության ժամանակ: Նա ունկնդիրների ուշադրությանն է հանձնել այդ ժամանակներում «Հայրենիքի» խմբագիր Ջեյմս Մանդալյանի 1971 թվին արված 11 տողե տեղողությամբ ձայնագրություն-մեկնաբանությունը, որ նա պատրաստել էր Նյու Յորքի հայկական գրական ընկերության նախաձեռնած «Ողջույն Սարոյանին» միջոցառման համար:

ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆ

Սկիզբը՝ նախորդ N167, 177 եւ 187, 197, 207, 217 համարներում

Վիլյամ Սարոյան-

Ֆրեզնոյում երկու հայեր

Իրա՞ք է

Սարոյանի ընտանեկան տունը Կարլ փողոցում (Սան Ֆրանցիսկո)

Վիլյամ Սարոյան.- Սիրելիս, մարդկային մտքի ամենաարդարական հիմարություններն անգամ ժամանակի ընթացքում չեն կորցնում իրենց «վավերականությունը», իրենց «կենսունակությունը»: Դեռեւս գործում, ուժի մեջ լինելու հատկությունները մենք կարող ենք տեսնել բնության մեջ ամեն ինչում: Բայց ինչքան ես հասկանում եմ, քո մտահոգությունը, նաեւ ինքը, հետեւյալն է. արվեստը պետք է ծառայի կյանքն առաջ տանելուն, ժամանակի տեղողությունը առավել տանելի դարձնելուն, այլանդակություններից զերծ պահելուն, կյանքը «շնորհալի իրադարձության» վերածելուն: Դժբախտաբար «շնորհազրկությունը», այլասերվածությունը» հարատեւ երեւույթներ են կյանքում...

Մանուել Թոլեգյան.- Մեր ժամանակների արվեստո՞ւմ եւս...

Վ. Ս.- Մեր ժամանակների արվեստում եւս եւ մյուս բոլոր բնագավառներում. Շնորհի հայտնությունը սովորաբար կամ «ձեռքերում է, նվաճում», կամ «պատահականություն»: Իսկական արվեստագետի համար դա նվաճում է անշուշտ, վայ-արվեստագետի համար՝ պատահականություն: Քանի որ արվեստի եւ ընդհանրապես մեր բոլորի կողմից գործադրված ջանքերի վերջնական նպատակն է կյանքն ինչքան հնարավոր է գեղեցիկ դարձնելը, ապա մարդկանց հրամցված «շնորհը» չի կարող շատ փչ կամ չափից ավելի շատ լինել: Ամեն ինչ հարաբերական է: Ոչ մի բան մարդկանց համար «շատ լավ» չէ, ոչ էլ «շատ վատը»...: Վատությունն ու այլանդակությունը վերջ չունեն: Ուզում եմ ասել...

Մ. Թ.- Վատ միջավայր, վատ ազդեցություն, տգեղ դրսեւորումներ...

Վ. Ս.- Այո, թեկուզ անցողիկ լինեն դրանք: Եվ կարծես դրանցից փախուստ տալ հնարավոր չէ: Լավի ու վատի համաչափությունները միշտ էլ ծայր աստիճան տրված են եղել: Եվ դժբախտաբար կշիռն ի նպաստս շնորհի բացակայության է, քան շնորհի գոյության:

Մ. Թ.- Պետք է խոստովանեմ, որ գեղեցիկին հասնելու ճանապարհը նույնքան փշոտ է ու դժվարին, որքան սովորական այլանդակություններից ու տգեղ երեւույթներից փախուստ տալու ճանապարհը: Տգեղը, սովորականը, այլանդակը՝ (ցավը, մահը, դժբախտ պատահարը, անհամաչափությունը եւ այլն) մշտապես առկա են մարդու կյանքում, կարծես կրկնակրկին հետեւում են նրան: Մենք ամեն քայլափոխին հանդիպում ենք դրանց: Այդ պատճառով էլ արվեստում եւ կյանքում գեղեցիկի առկայությունը կարեւոր է դառնում, եւ մենք փայփայում ենք այն: Բայց խնդիրն այն է, որ սովորականն ու այլանդակը անընդհատ նոր սովորական ու այլանդակ երեւույթներ է ծնում, մինչդեռ գեղեցիկը հազվադեպ է, որ նոր գեղեցիկ երեւույթ ծնի: Սա է երեւի պատճառը, որ արվեստն ու արվեստագետի աշխատանքը գնահատվում, արժեւորվում է: Նա փորձում է դուրս բերել մեզ այդ սովորական այլանդակություններից, փոխարենը մատուցելով բարեփոխված, թարմ մի «տեսիլ», որը մենք անվանում ենք «գեղեցկություն»:

Վ. Ս.- Լրիվ հասկանում եմ քեզ...

Մ. Թ.- Սակայն կարծում եմ՝ գեղեցկությունն ամեն անգամ, ամեն ժամանակաշրջանի համար տարբեր ձեւով է «վերածնվում», ինքնուրույն դրսեւորում է ունենում: Անցյալի գեղեցկությունը չի կարող կրկնվել մեր օրերում, բայց մենք չենք կարող ամբողջովին անտեսել այն: Մենք կարող ենք ստեղծել մեր դարի գեղեցկությունը: Իմ փորձառությունից ելնելով պարզել եմ մի շարք ձեւեր, միջոցներ, որոնցով հնարավոր է արտահայտել մեր ժամանակների գեղեցկությունները: Եթե մենք, օրինակ, լուրջ քննության ենթարկենք այն ամենը, ինչ սովորական է, տգեղ, անճաշակ ու այլանդակ եւ մեր կյանքին վտանգ է սպառնում, ապա կարծում եմ այդ քննության արդյունքում մենք կպարզենք, թե ինչն է գեղեցիկը:

Որքան հետաքննությունը խորը լինի, այնքան մեծ կլինի գեղեցիկի հայտնաբերման հնարավորությունները: Գաղափարը հին է: Բոլորս գիտենք, որ «չկա չարիք առանց բարիք» կամ «չկա լավ առանց վատի», բայց ես այն նորովի եմ մեկնաբանում:

Հիշում եմ՝ իմ ցուցահանդեսներից մեկի ժամանակ, խնձորներով նայոտմորսի մի կտավ դիտելուց հետո ինձ ասացիր.«Մանուել, քո խնձորները չափազանց կատարյալ են, ինչո՞ւ, օրինակ, դրանցից մեկի միջից դուրս եկող որդ չես նկարել»: Ես անմիջապես տուն տարա նկարը եւ խնձորներից մեկում նկարեցի ամենաագեթ որդը, որ կարող էի երեւակայել: Կտավն ամբողջովին փոխվեց, դեռի լավն անշուշտ: Որդը գեղագիտական նոր որակ հաղորդեց դրան: Որդոտ խնձորի առկայությունը մյուս խնձորներին դարձրեց է՛լ ավելի գեղեցիկ: Վատը հակադրվեց լավին, գեղեցիկին՝ ավելի մեծ տեղ տալով վերջինիս:

Վ. Ս.- Դու հենց նոր խոսեցիր ամենակարեւոր նշանակություն ունեցող մի բանի մասին: Քիչ առաջ նշեցի, որ տեսողությունն է գեղեցկությունը: Երբ տեսողությունը հստակ է, կայուն, հավասարիմ, ոչ մի բան չի կարող շարունակել մնալ կամ թվալ այնպիսին, ինչպիսին առաջ էր:

Մ. Թ.- Ճիշտ է: Եվ հենց դա չէ՞ պատճառը, որ մեր այսօրվա «տեսողությունը» տարբեր պետք է լինի նախորդներից, որ մեր ներկայի կտավները պետք է տարբեր գեղագիտական գաղափարներ, մտքեր, պատկերներ առաջացնեն, քան մեր նախորդների կտավները: Չէ՞ որ մենք մե՛ր «եզակի» աչքերով ենք նայում իրերին:

Իհարկե, հետաքրքիր է անցյալի որոշակի գաղափարների, գեղագիտական արժեքների հետ հաշտվելը եւ լավ է դրանց մասին իմանալը, բայց պետք է գիտակցենք միշտ, որ դրանք արդեն անցյալ են եւ չեն համապատասխանում մեր օրերի պահանջներին: Այս առնչությամբ կարծում եմ տեղին էր իշ առաջ նկարների գեղեցկությունը կամ գեղագիտական արժեքը որոշելու վերաբերյալ իմ արտահայտված միտքը: Մենք պետք է թողնենք, որ մեր սեփական աչքերը որոշեն ինչը լավ է, ինչը վատ, ինչը արվեստի գործ է, ինչը՝ ոչ: Նկարչությունը «տեսողական» արվեստ է, եւ եթե ինչ-որ մի կտավ չի «հաղորդակցվում» մեզ հետ կամ օտար է թվում մեզ, եւ «անընթեռնելի», աշխարհի բոլոր գեղագիտական տեսությունները չեն կարող օգնել մեզ հասկանալու այն: Այդ պատճառով էր, որ ես իշ առաջ խոսեցի կուբիստների, էքսպրեսիոնիստների, պատկերազուրկ նկարիչների եւ մյուսների մասին: Այդ ուղղությունների գեղագիտական հասկացությունները ծնունդ են առել ավելի քան վաթսուն տարիներ առաջ եւ «վավերական» են այդ ժամանակների համար: Այդ ուղղությունները «հեղափոխական» էին համարվում եվրոպական ակադեմիական կամ կամերային նկարչության համեմատությամբ եւ « հեղափոխությունն» սկսող արվեստագետներն, անշուշտ, ամեն իրավունք ունեին այդ քայլերին դիմելու: Բայց դրանք անցյալ են արդեն: Իսկ անթիվ-անհամար գրքեր, բրոշյուրներ եւ ֆիլմեր դեռեւս պրոպագանդում են այդ գեղագիտական գաղափարները, հասկացությունները, նույնիսկ փորձում են մեր ուղեղները «լվանալ» դրանցով: Եթե մենք, ինչպես հարկն է առաջնորդվենք մեր «տեսողական» սկզբունքներով եւ զոհ չդառնանք նման քարոզչության կամ կարողանանք մեզ հեռու պահել ընդհանուրի մաքված «ճիշտ քայլերից», կտեսնենք, որ այդ «ճիշտ» ասվածը պարզապես իլյուզիա է, մշակութային խաբկանք, որովհետեւ դրա

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԵԿԱՑՆՈՒՄ Է

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ «ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ԱՃՈՒՐԴԻ, ՈՐԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ՝

2008Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-ԻՆ, 2009Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 8-ԻՆ, 23-ԻՆ, ԺԱՄԸ 12:00-ԻՆ «ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ, ՀԱՍՑԵՆ՝ Ք.ԵՐԵՎԱՆ, Դ.ԱՆՀԱՂԹԻ 23 /4-ՐԴ ՀԱՐԿ/

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

ՀՀ կառավարության 17.10.02թ. N1833-Ա որոշմամբ լուծարվող «Նաիրի» ԲԲԸ-ի (հասցեն՝ Ք.Երևան, Վռամական 16) հաշվեկշռում գտնվող գույքը՝

N	Գույքի անվանումը	Շահագործման տարեթիվ	Քանակ	Մաշվ. %-ը	Մեկնարկային գինը (ներառյալ ԱԱՀ-ն) դրամ
	Հիմնական միջոցներ				
1	Ագրեգատ	1985	1	100	335390
2	Ագրեգատ	1987	1	100	611155
3	Ավտոաղուշիկ	1979	1	100	52170
	Կառուցվածքներ				
4	Ցանկապատ	1990		48.5	972380
5	Ցանկապատ	1969		91.8	486930
	Անավարտ շինարարության օբյեկտներ				
6	Օժանդակ տնտեսություն /Աշնակ գյուղ/	1991	Շին.աշխ.դադ.ժամկ.		279410

Աճուրդը կանցկացվի դասական (գնի ավելացման) եղանակով:

Աճուրդին կարող են մասնակցել ֆիզիկական եւ իրավաբանական անձինք, ինչպես նաեւ հայաստանցիները, որոնք մինչեւ յուրաքանչյուր աճուրդի նախորդող օրը, ժամը 17:00 աճուրդային հանձնաժողովին են ներկայացրել.

-աճուրդի նախավճարի մուծման անդորրագիրը, որի չափն է 26085 դրամ, մուտքագրման հաշիվն է «ՎՏԲ-Հայաստան Բանկ» թիվ 160006651014 դրամային հաշիվը: Նախավճարը կարող է վճարվել նաեւ կանխիկ «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի դրամարկղ.

-անձնագիրը, իսկ իրավաբանական անձինք՝ հիմնադիր փաստաթղթերի պատճենները եւ լիազորությունները հաստատող փաստաթղթերը:

Աճուրդին չեն կարող մասնակցել այն անձինք, որոնք վաճառվող լոտի նկատմամբ չեն կարող ունենալ սեփականության իրավունք:

Վերը նշված փաստաթղթերի առկայության դեպքում աճուրդային հանձնաժողովը մասնակցին տրամադրում է մասնակցի վկայական:

Աճուրդին կարող են ներկա գտնվել դիտորդներ՝ աճուրդի մասնակից չհամարվող այն անձինք, ովքեր վճարել են մուտքի վճար՝ 3000 դրամ:

Աճուրդի մասնակցի վկայականները տրամադրվում են «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպությունում (հասցեն՝ Ք.Երեւան, Դ.Անհաղթի 23 /4-րդ հարկ/) մինչեւ յուրաքանչյուր աճուրդի նախորդող օրը, ժամը 17:00, իսկ դիտորդի տոմսերը վաճառվում են մինչեւ աճուրդի սկսվելը:

Աճուրդին մասնակցել ցանկացողները վաճառվող լոտ(եր)ին (գույքին) կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից մինչեւ աճուրդի բացմանը նախորդող օրն ընկած ժամանակահատվածը՝ յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին, ժամը 9:00-ից մինչեւ 17:00 (բացառությամբ ժամը 13:00-ից մինչեւ 14:00):

Գույքի պահպանումը իրականացվում է ընկերության հավատարմագրային կառավարչի կողմից:

Նախքան աճուրդի սկսվելը աճուրդային հանձնաժողովը գրանցում է մասնակիցներին եւ յուրաքանչյուր մասնակցին, ներկայացված մասնակցի վկայականի համարին համապատասխան, տրամադրում է քարտ:

Աճուրդը վարում է աճուրդավարը:

Աճուրդավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լոտը (լոտերի վաճառքը իրականացվում է վերը նշված հերթականությամբ): Ցանկացած մասնակից իրավունք ունի, նախքան աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայտ, որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտը՝ նվազագույնը հավելման (քայլի) չափով:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդի հաղթած մասնակից: Եթե մի քանի մասնակից միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, որից հետո ավելի բարձր գնային հայտ չի ներկայացվել, ապա աճուրդի հաղթած մասնակից է համարվում վիճակահանության արդյունքներով ընտրված մասնակիցը:

Աճուրդավարի կողմից աճուրդի հաղթող համարված մասնակիցը պարտավոր է՝ հանձնարարագիր ստանալուց 30 րոպեի ընթացքում, վճարել իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, որը սահմանված ժամկետում (10 օրվա ընթացքում) հետագա վճարումները կատարելու դեպքում նախավճարի հետ միասին հաշվարկվում է վճարման ենթակա գումարի մեջ (մեկից ավելի լոտ ձեռք բերելու դեպքում նախավճարը հաշվարկվում է ամենաբարձր վաճառքի գին ունեցող լոտի վճարման ենթակա գումարի մեջ), իսկ վճարումներից խուսափելու դեպքում չի վերադարձվում եւ տվյալ մասնակիցը զրկվում է աճուրդի մասնակցելու իրավունքից, իսկ լոտի աճուրդը վերսկսվում է մեկնարկային գնից: Եթե աճուրդում հաղթող համարված մասնակիցը սահմանված ժամկետում (հանձնարարագիր ստանալուց 30 րոպեի ընթացքում) վճարում է իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, ապա նա ճանաչվում է աճուրդի հաղթող եւ ստորագրում է աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը:

Աճուրդում չհաղթած մասնակիցներին, մեկ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր դիմումի առկայության դեպքում, մուծված նախավճարը վերադարձվում է աճուրդի ավարտից:

Վաճառվող լոտերին (գույքին) ծանոթանալու համար զանգահարել `52-65-57 հեռախոսահամարով:

Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու (որը տրամադրվում է դիմումի առկայության դեպքում, մեկ օրվա ընթացքում, պատճենահանման ծախսերը վճարելու պայմանով) եւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել Ք.Երեւան, Դ.Անհաղթի 23 /4-րդ հարկ/ հասցեով կամ զանգահարել աճուրդային հանձնաժողովին՝ հեռախոս՝ 23-73-00, ինտերնետ՝ URL: //www.privatization.am:

Հնարավոր փոփոխություններն ու լրացումները կհրապարակվեն այն ձեւով, ինչպես կատարվել է աճուրդի մասին սույն հրապարակային ծանուցումը:

«Աճուրդի կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպություն

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ «ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ԱՃՈՒՐԴԻ, ՈՐԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ՝

2008Թ.ՀՈՒՆՎԱՐԻ 9-ԻՆ, 26 -ԻՆ, ՓԵՏՐՎԱՐԻ 10-ԻՆ, 25-ԻՆ, ԺԱՄԸ 11:00-ԻՆ «ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ, ՀԱՍՑԵՆ՝ Ք.ԵՐԵՎԱՆ, Դ.ԱՆՀԱՂԹԻ 23 /4-ՐԴ ՀԱՐԿ/:

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

ՀՀ կառավարության 19.04.07թ. թիվ 475-Ա որոշմամբ լուծարվող «Շամլոտի ԲԿՏ» ՊՓԲԸ-ի (հասցեն՝ Լոռու մարզ, գ.Շամլոտ) հաշվեկշռում գտնվող գույքը՝

N	Գույքի անվանումը	Ջեռուցման տ/թ.	Քանակը /հատ/	Մաշվածության %-ը	Գնահատված մեծությունը (ներառյալ ԱԱՀ-ն) դրամ	Մեկնարկային գինը (ներառյալ ԱԱՀ-ն) դրամ
1	«Շամլոտի ԲԿՏ» ՊՓԲԸ-ի հաշվեկշռում գտնվող շենքերն ու շինությունները՝ որպես մեկ ամբողջական միավոր				1964200	1964200
	այդ թվում՝					
	Վարչական շենք (96մ.մ.)					
	Պահակատուն (10.2 մ.մ.)					
	Ավտոկայանատեղ (45.4 մ.մ.)					
	Ավտոկայանատեղ (51.6 մ.մ.)					
	Ավտոմեքենաների կայանման ծածկ (255.8 մ.մ.)					
	Լողավազան (18.2 մ.մ.)					
	Պարիսպ (65.1 գ/մ)	1991թ.	1	100	11480	5740
2	Հաշվիչ մեքենա «Էլկա»	1994թ.	1	67	32470	16235
3	Գրամեքենա «Ուկրաինա»	1991թ.	1	100	203705	101853
4	Տրակտոր ԴՏ-75	1991թ.	1	100	122223	61112
5	Բեյորուս ՍՏԶ-50					

* Գնորդը պարտավոր է աճուրդի արձանագրությունն ստանալուց հետո, սահմանված կարգով համապատասխան հաշվին վճարել հողի կադաստրային արժեքը՝ 294816 դրամ (հողամասի մակերեսը՝ 1328.0հա, հողատարածքի 1 մ.մ. կադաստրային արժեքը 222 դրամ):

Աճուրդը կանցկացվի դասական (գնի ավելացման) եղանակով:

Աճուրդին կարող են մասնակցել ֆիզիկական եւ իրավաբանական անձինք, ինչպես նաեւ հայաստանցիները, որոնք մինչեւ յուրաքանչյուր աճուրդի նախորդ աշխատանքային օրը, ժամը 17:00 աճուրդային հանձնաժողովին են ներկայացրել.

-աճուրդի նախավճարի մուծման անդորրագիրը, որի չափն է 1-լոտի համար 98210 դրամ, իսկ 2-րդ - 5-րդ լոտերի համար 5740 դրամ: Մուտքագրման հաշիվն է «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի թիվ 160006651014 դրամային հաշիվը: Նախավճարը կարող է վճարվել նաեւ կանխիկ «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի դրամարկղ.

-անձնագիրը, իսկ իրավաբանական անձինք՝ հիմնադիր փաստաթղթերի պատճենները եւ լիազորությունները հաստատող փաստաթղթերը:

Աճուրդին չեն կարող մասնակցել այն անձինք, որոնք վաճառվող լոտի նկատմամբ չեն կարող ունենալ սեփականության իրավունք:

Վերը նշված փաստաթղթերի առկայության դեպքում աճուրդային հանձնաժողովը մասնակցին տրամադրում է մասնակցի վկայական:

Աճուրդին կարող են ներկա գտնվել դիտորդներ՝ աճուրդի մասնակից չհամարվող այն անձինք, ովքեր վճարել են մուտքի վճար՝ 3000 դրամ:

Աճուրդի մասնակցի վկայականները տրամադրվում են «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպությունում (հասցեն՝ Ք.Երեւան, Դ.Անհաղթի 23 /4-րդ հարկ/) մինչեւ աճուրդի նախորդող աշխատանքային օրը, ժամը 17:00, իսկ դիտորդի տոմսերը վաճառվում են մինչեւ աճուրդի սկսվելը:

Աճուրդին մասնակցել ցանկացողները վաճառվող լոտին (գույքին) կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից մինչեւ աճուրդի բացմանը նախորդող օրն ընկած ժամանակահատվածը՝ յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին, ժամը 9:00-ից մինչեւ 17:00 (բացառությամբ ժամը 13:00-ից մինչեւ 14:00):

Նախքան աճուրդի սկսվելը աճուրդային հանձնաժողովը գրանցում է մասնակիցներին եւ յուրաքանչյուր մասնակցին, ներկայացված մասնակցի վկայականի համարին համապատասխան, տրամադրում է քարտ:

Աճուրդը վարում է աճուրդավարը:

Աճուրդավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լոտը: Ցանկացած մասնակից իրավունք ունի, նախքան աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայտ, որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտը՝ նվազագույնը հավելման (քայլի) չափով:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդի հաղթած մասնակից: Եթե մի քանի մասնակից միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, որից հետո ավելի բարձր գնային հայտ չի ներկայացվել, ապա աճուրդի հաղթած մասնակից է համարվում վիճակահանության արդյունքներով ընտրված մասնակիցը:

Աճուրդավարի կողմից աճուրդի հաղթող համարված մասնակիցը պարտավոր է՝ հանձնարարագիր ստանալուց 30 րոպեի ընթացքում, վճարել իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, որը սահմանված ժամկետում (10 օրվա ընթացքում) հետագա վճարումները կատարելու դեպքում նախավճարի հետ միասին հաշվարկվում է վճարման ենթակա գումարի մեջ (մեկից ավելի լոտ ձեռք բերելու դեպքում նախավճարը հաշվարկվում է ամենաբարձր վաճառքի գին ունեցող լոտի վճարման ենթակա գումարի մեջ), իսկ վճարումներից խուսափելու դեպքում չի վերադարձվում եւ տվյալ մասնակիցը զրկվում է աճուրդի մասնակցելու իրավունքից, իսկ լոտի աճուրդը վերսկսվում է մեկնարկային գնից: Եթե աճուրդում հաղթող համարված մասնակիցը սահմանված ժամկետում (հանձնարարագիր ստանալուց 30 րոպեի ընթացքում) վճարում է իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, ապա նա ճանաչվում է աճուրդի հաղթող եւ ստորագրում է աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը: Աճուրդում վաճառված յուրաքանչյուր լոտի գոյացած գինը նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափը չգերազանցելու դեպքում հաղթող մասնակիցը աճուրդի արդյունքների մասին արձանագրության ստորագրման օրը վճարում է լոտի ամբողջ գումարը:

Աճուրդում չհաղթած մասնակիցներին, գրավոր դիմումի առկայության դեպքում, մուծված նախավճարը վերադարձվում է աճուրդի ավարտից մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

Վաճառվող լոտին ծանոթանալու համար զանգահարել Գ.Դավթյանին (091) 79-69-04 հեռախոսահամարով:

Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու (որը տրամադրվում է դիմումի առկայության դեպքում, մեկ օրվա ընթացքում, պատճենահանման ծախսերը վճարելու պայմանով) եւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել Ք.Երեւան, Դ.Անհաղթի 23 /4դ հարկ/ հասցեով կամ զանգահարել աճուրդային հանձնաժողովին՝ հեռախոս՝ 23-73-00, ինտերնետ՝ URL: //www.privatization.am:

Հնարավոր փոփոխություններն ու լրացումները կհրապարակվեն այն ձեւով, ինչպես կատարվել է աճուրդի մասին սույն հրապարակային ծանուցումը:

«Աճուրդի կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպություն

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը վարձակալությամբ տրամադրում է տարածք

Հասցե	ազատ տարածք	/Ք.մ./
Գեղարքունիքի մարզ, Ք. Վարդենիս Ռոմանի փողոց, վարչական շենք	երկրորդ հարկ	65.8

Անհրաժեշտության դեպքում զանգահարել 58-35-40 հեռախոսահամարով, կամ դիմել ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն՝ Երեւան, Տիգրան Մեծի 4, 4-րդ հարկ, 41սենյակ:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը հրավիրում է Երևան խաղաղի Բյուզանդի 1/3 հասցեում գտնվող շենքի ցոկոլային հարկից 100 ք.մ. ընդհանուր մակերեսով տարածքի հինգ տարի ժամկետով վարձակալության տրամադրման աճուրդի, որը տեղի կունենա 2009թ. հունվարի 12-ին, ժամը 14:00-ին, ք.Երևան, Դ.Անհաղթի 23(IV հարկ) հասցեում:

Տարածքի վարձակալության մեկ ամսվա վարձավճարի մեկնարկային գինը՝ 44000 դրամ:

Վարձակալության ժամկետը՝ վարձակալության պայմանագրի կնքման պահից հինգ տարի ժամկետով:

Աճուրդը կանցկացվի դասական (գնի ավելացման) եղանակով:

Աճուրդին կարող են մասնակցել ֆիզիկական եւ իրավաբանական անձինք, ինչպես նաեւ համայնքները, որոնք մինչեւ 2009թ. հունվարի 12-ը, ժամը 12:00 աճուրդային հանձնաժողովին են (հասցեն՝ ք.Երեւան, Դ.Անհաղթի 23 /4-րդ հարկ/, 7-րդ սենյակ) ներկայացրել՝

-աճուրդի մասնակցության հայտ,

-աճուրդի մասնակցության նախավճարի մուծման անդորրագիրը, որի չափն է՝ 2200 դրամ, մուտագրման հաշիվն է «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի թիվ 160006651014 դրամային հաշիվը,

-աճուրդի մասնակցության վճարի անդորրագիրը, որի չափն է 10000 դրամ (վճարվում է «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի դրամարկղ), գնի մեջ չի ներառվում եւ անկախ աճուրդի արդյունքներից չի վերադարձվում,

-անձնագիրը, իսկ իրավաբանական անձինք հիմնադիր փաստաթղթերի պատճենները եւ լիազորությունները հաստատող փաստաթղթերը:

Աճուրդի մասնակիցների անձնագրի առկայությունը պարտադիր է:

Աճուրդին կարող են ներկա գտնվել դիտորդներ՝ աճուրդի մասնակից չհամարվող այն անձինք, ովքեր վճարել են մուտքի վճար՝ 3000 դրամ:

Դիտորդի տոմսերը վաճառվում են մինչեւ աճուրդի սկսվելը:

Աճուրդի մասնակիցները վարձակալությամբ տրամադրվող տարածքին կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից մինչեւ աճուրդի բացմանը նախորդող օրն ընկած ժամանակահատվածում՝ յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին, ժամը 9:00-ից մինչեւ 17:00 (բացառությամբ ժամը 13:00-ից մինչեւ 14:00) զանգահարելով 56-39-84 հեռախոսահամարներով:

Նախքան աճուրդի սկսվելը աճուրդային հանձնաժողովը գրանցում է մասնակիցներին եւ յուրաքանչյուր մասնակցին, տրամադրում է խրս:

Աճուրդը վարում է աճուրդավարը: Աճուրդավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լոտը: Ցանկացած մասնակից իրավունք ունի, նախքան աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայտ, որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտը՝ նվազագույն հավելման (քայլի) չափով:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդի հաղթող մասնակից:

Աճուրդավարի կողմից աճուրդի հաղթող համարված մասնակիցը պարտավոր է՝ հանձնարարագիր ստանալուց 30 րոպեի ընթացքում, վճարել իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, որը սահմանված ժամկետում հետագա վճարումները կատարելու դեպքում նախավճարի հետ միասին հաշվարկվում է վճարման ենթակա գումարի մեջ, իսկ վճարումներից խուսափելու դեպքում չի վերադարձվում եւ տվյալ մասնակիցը զրկվում է աճուրդի մասնակցելու իրավունքից: Եթե աճուրդում հաղթող համարված մասնակիցը սահմանված ժամկետում (հանձնարարագիր ստանալուց 30 րոպեի ընթացքում) վճարում է իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, ապա նա ճանաչվում է աճուրդի հաղթող եւ ստորագրում է աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը: Աճուրդի մասին արձանագրությունը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում աճուրդի հաղթողը պարտավոր է վճարել վարձակալվող տարածքի համար իր կողմից առաջարկված վարձակալության մեկ ամսվա վարձավճար:

Աճուրդում չհաղթող մասնակցին, մուծված նախավճարը վերադարձվում է վերջինիս մեկ օրվա ընթացքում դիմելուց հետո:

Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու (որը տրամադրվում է դիմումի առկայության դեպքում, մեկ օրվա ընթացքում, պատճենահանման ծախսերը վճարելու պայմանով) եւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել (հասցեն՝ ք. Երեւան, Դ.Անհաղթի 23 /4-րդ հարկ/) հասցեով կամ զանգահարել աճուրդային հանձնաժողովին՝ հեռախոս՝ 24-67-25, ինտերնետ՝ URL: //www.privatization.am:

Հնարավոր փոփոխություններն ու լրացումները կհրապարակվեն այն ձեւով, ինչպես կատարվել է աճուրդի մասին սույն հրապարակային ծանուցումը:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր
պետական գույքի կառավարման վարչություն

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ «ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ԱՃՈՒՐԴԻ, ՈՐԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ Ք.ԵՐԵՎԱՆ, Դ.ԱՆՀԱՂԹԻ 23 /4-ՐԴ ՀԱՐԿ/ ՀԱՍՑԵՈՒՄ

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Համաձայն ՀՀ կառավարության 2008թ. հուլիսի 24-ի թիվ 774-Ա որոշման, «Սդասարկում» պետական ոչ առեւտրային կազմակերպությանն ամրացված օտարման ենթակա գույքը

Հ/Հ	Գույքի անվանումը	Քանակը	Թողարկման տարեթիվը	Գույքի արժեքի որոշման հետ կապված վճարները (ներառյալ ԱԱՀ) /դրամ/	Գնահատման տարեթիվը	06.10.08թ. աճուրդի		21.10.08թ. աճուրդի		05.11.08թ. աճուրդի	
						մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/
1	Սդասարկման գիծ	1	2005թ.		18.06.2008թ.	53138	2657	42511	2126	34009	1701
2	էլեկտրական տիտան	1	2005թ.		18.06.2008թ.	4360	218	3488	175	2791	140
3	Ճարմաջեռոց	1	2005թ.		18.06.2008թ.	4360	218	3488	175	2791	140
4	էլեկտրական վառարան	1	2005թ.		18.06.2008թ.	8120	406	6496	325	5197	260
5	Ցուցափեղկ	1	2005թ.		18.06.2008թ.	8120	406	6496	325	5197	260
6	Վերելակ՝ ադրանքի	1	2005թ.		18.06.2008թ.	40600	2030	32480	1624	25984	1300
7	Խոհանոցային սեղան	9	2005թ.		18.06.2008թ.	7308	366	5847	293	4678	234
8	Մսաղաց	1	2005թ.		18.06.2008թ.	19075	954	15260	763	12208	611
9	Կշեռք՝ սլաքով	3	2005թ.		18.06.2008թ.	3270	164	2616	131	2093	105
10	Գրասեղան՝ 2 տումբ.	1	2005թ.		18.06.2008թ.	1635	82	1308	66	1047	53
11	Օվալաձեւ սեղան	1	2005թ.		18.06.2008թ.	5450	273	4360	218	3488	175
12	Դրամարկղի ադյարաս	1	2005թ.		18.06.2008թ.	38150	1908	30520	1526	24416	1221
13	էլեկտրական վառարան	2	2005թ.		18.06.2008թ.	12263	614	9811	491	7849	393
14	Սառնարան«ШХ-80»	8	2005թ.		18.06.2008թ.	64960	3248	51968	2599	41575	2079
15	Հարիչ	1	2005թ.		18.06.2008թ.	16240	812	12992	650	10394	520
16	Կարտոֆիլամրիչ	1	2005թ.		18.06.2008թ.	8120	406	6496	325	5197	260
17	էլեկտրական կաթսա «КЕ-100»	1	2005թ.		18.06.2008թ.	8120	406	6496	325	5197	260
	ԸՆԴԱՄԵՆԸ			42000							

Հ/Հ	Գույքի անվանումը	20.11.08թ. աճուրդի		05.12.08թ. աճուրդի		22.12.08թ. աճուրդի		07.01.09.թ. աճուրդի		22.01.09թ. աճուրդի	
		մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/
1	Սդասարկման գիծ	27208	1361	21767	1089	17414	871	13932	697	11146	558
2	էլեկտրական տիտան	2233	112	1787	90	1430	72	1144	58	916	46
3	Ճարմաջեռոց	2233	112	1787	90	1430	72	1144	58	916	46
4	էլեկտրական վառարան	4158	208	3327	167	2662	134	2130	107	1704	86
5	Ցուցափեղկ	4158	208	3327	167	2662	134	2130	107	1704	86
6	Վերելակ՝ ադրանքի	20788	1040	16631	832	13305	666	10644	533	8516	426
7	Խոհանոցային սեղան	3743	188	2995	150	2396	120	1917	96	1534	77
8	Մսաղաց	9767	489	7814	391	6252	313	5002	251	4002	201
9	Կշեռք՝ սլաքով	1675	84	1340	67	1072	54	858	43	687	35
10	Գրասեղան՝ 2 տումբ.	838	42	671	34	537	27	430	22	344	18
11	Օվալաձեւ սեղան	2791	140	2233	112	1787	90	1430	72	1144	58
12	Դրամարկղի ադյարաս	19533	977	15627	782	12502	626	10002	501	8002	401
13	էլեկտրական վառարան	6280	314	5024	252	4020	201	3216	161	2573	129
14	Սառնարան«ШХ-80»	33260	1663	26608	1331	21287	1065	17030	852	13624	682
15	Հարիչ	8316	416	6653	333	5323	267	4259	213	3408	171
16	Կարտոֆիլամրիչ	4158	208	3327	167	2662	134	2130	107	1704	86
17	էլեկտրական կաթսա «КЕ-100»	4158	208	3327	167	2662	134	2130	107	1704	86

*Համաձայն ՀՀ կառավարության 2008թ. հուլիսի 24-ի թիվ 774-Ա որոշման՝

-ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետը աճուրդի անցկացման օրվանից մեկամսյա ժամկետում աճուրդի հաղթողի հետ կնքում է առուվաճառքի պայմանագիր՝ դրանում նախատեսելով, որ գնորդը պարտավորվում է իր միջոցների հաշվին վճարել գույքի որոշման հետ կապված վճարը (ներառյալ ավելացված արժեքի հարկը):

Աճուրդի հաղթողը պարտավոր է՝

-աճուրդի արձանագրության ստորագրման օրվանից 10 օրվա ընթացքում վճարումները կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետության արժույթով՝ դրանք ուղղելով «Պետական սեփականություն հանդիսացող հիմնական միջոցների (ֆոնդերի) օտարումից մուտքեր» գանձապետական հաշվին:

Աճուրդը կանցկացվի դասական (գնի ավելացման) եղանակով:

Բոլոր աճուրդները սկսվում են ժամը 11:30-ին:

Աճուրդով չվաճառված գույքի մեկնարկային գինը յուրաքանչյուր հաջորդ աճուրդի ժամանակ նվազեցվում է վերջին աճուրդի գույքի մեկնարկային գնի 20 տոկոսի չափով: Աճուրդը կայանալու դեպքում հաջորդ աճուրդը (աճուրդները) չի (չեն) անցկացվում:

Աճուրդին կարող են մասնակցել ֆիզիկական եւ իրավաբանական անձինք, ինչպես նաեւ համայնքները, որոնք յուրաքանչյուր աճուրդի համար աճուրդի նախորդող աշխատանքային օրը, ժամը 17:00 աճուրդային հանձնաժողովին են (հասցեն՝ ք. Երեւան, Դ.Անհաղթի 23 /4-րդ հարկ/) ներկայացրել.

-աճուրդի նախավճարի մուծման անդորրագիրը, որի չափն է՝ յուրաքանչյուր աճուրդի համար յուրաքանչյուր գույքի մեկնարկային գնի 5 տոկոսը, մուտագրման հաշիվն է «ՎՏԲ Հայաստան Բանկի» թիվ 160006651014 դրամային հաշիվը.

-աճուրդի մասնակցության վճարի անդորրագիրը, որի չափն է 10000 դրամ (վճարվում է «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի դրամարկղ), գույքի գնի մեջ չի ներառվում եւ անկախ աճուրդի արդյունքներից չի վերադարձվում.

-անձնագիրը, իսկ իրավաբանական անձինք հիմնադիր փաստաթղթերի պատճենները եւ լիազորությունները հաստատող փաստաթղթերը:

Աճուրդին չեն կարող մասնակցել այն անձինք, որոնք պետք է կնքեն գնման-վաճառքի պայմանագիր՝ դրանում նախատեսելով, որ գնորդը պարտավորվում է իր միջոցների հաշվին վճարել գույքի որոշման հետ կապված վճարը (ներառյալ ավելացված արժեքի հարկը):

Աճուրդի հաղթողը պարտավոր է՝

-աճուրդի արձանագրության ստորագրման օրվանից 10 օրվա ընթացքում վճարումները կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետության արժույթով՝ դրանք ուղղելով «Պետական սեփականություն հանդիսացող հիմնական միջոցների (ֆոնդերի) օտարումից մուտքեր» գանձապետական հաշվին:

Աճուրդը կանցկացվի դասական (գնի ավելացման) եղանակով:

Բոլոր աճուրդները սկսվում են ժամը 11:30-ին:

Աճուրդով չվաճառված գույքի մեկնարկային գինը յուրաքանչյուր հաջորդ աճուրդի ժամանակ նվազեցվում է վերջին աճուրդի գույքի մեկնարկային գնի 20 տոկոսի չափով: Աճուրդը կայանալու դեպքում հաջորդ աճուրդը (աճուրդները) չի (չեն) անցկացվում:

Աճուրդին կարող են մասնակցել ֆիզիկական եւ իրավաբանական անձինք, ինչպես նաեւ համայնքները, որոնք յուրաքանչյուր աճուրդի համար աճուրդի նախորդող աշխատանքային օրը, ժամը 17:00 աճուրդային հանձնաժողովին են (հասցեն՝ ք. Երեւան, Դ.Անհաղթի 23 /4-րդ հարկ/) ներկայացրել.

-աճուրդի մասնակցության վճարի անդորրագիրը, որի չափն է 10000 դրամ (վճարվում է «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի դրամարկղ), գույքի գնի մեջ չի ներառվում եւ անկախ աճուրդի արդյունքներից չի վերադարձվում.

-անձնագիրը, իսկ իրավաբանական անձինք հիմնադիր փաստաթղթերի պատճենները եւ լիազորությունները հաստատող փաստաթղթերը:

Աճուրդին չեն կարող մասնակցել այն անձինք, որոնք վաճառվող լոտի նկատմամբ չեն կարող ունենալ սեփականության իրավունք:

Աճուրդի մասնակիցների անձնագրի առկայությունը պարտադիր է:

Աճուրդին կարող են ներկա գտնվել դիտորդներ՝ աճուրդի մասնակից չհամարվող այն անձինք, ովքեր վճարել են մուտքի վճար՝ 3000 դրամ:

Դիտորդի տոմսերը վաճառվում են մինչեւ աճուրդի սկսվելը:

Աճուրդի մասնակիցները վաճառվող լոտերին կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից մինչեւ աճուրդի բացմանը նախորդող օրն ընկած ժամանակահատվածում՝ յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին, ժամը 9:00-ից մինչեւ 17:00 (բացառությամբ ժամը 13:00-ից մինչեւ 14:00):

Նախքան աճուրդի սկսվելը աճուրդային հանձնաժողովը գրանցում է մասնակիցներին եւ յուրաքանչյուր մասնակցին, տրամադրում է խրս:

Աճուրդը վարում է աճուրդավարը:

Աճուրդավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լոտը: Ցանկացած մասնակից իրավունք ունի, նախքան աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայտ, որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտը՝ նվազագույն հավելման (քայլի) չափով:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդի հաղթած մասնակից:

Աճուրդավարի կողմից աճուրդի հաղթող համարված մասնակիցը պարտավոր է՝ հանձնարարագիր ստանալուց 30 րոպեի ընթացքում, վճարել իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, որը սահմանված ժամկետում (10 օրվա ընթացքում) հետագա վճարումները կատարելու դեպքում նախավճարի հետ միասին հաշվարկվում է վճարման ենթակա գումարի մեջ, իսկ վճարումներից խուսափելու դեպքում չի վերադարձվում եւ տվյալ մասնակիցը զրկվում է աճուրդի մասնակցելու իրավունքից: Եթե աճուրդում հաղթող համարված մասնակիցը սահմանված ժամկետում (հանձնարարագիր ստանալուց 30 րոպեի ընթացքում) վճարում է իր առաջարկած գնի առնվազն 5 տոկոսի չափով գումար, ապա նա ճանաչվում է աճուրդի հաղթող եւ ստորագրում է աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը: Աճուրդում վաճառված յուրաքանչյուր լոտի գոյացած գինը նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափը չգերազանցելու դեպքում հաղթող մասնակիցը աճուրդի արդյունքների մասին արձանագրության ստորագրման օրը վճարում է լոտի ամբողջ գումարը:

Աճուրդում չհաղթող մասնակցին, մուծված նախավճարը վերադարձվում է վերջինիս դիմելուց հետո եռօրյա ժամկետում:

Գույքը գտնվում է ք.Երեւան, Կառավարական թիվ 1 մասնաշենքի բակում: Վաճառվող լոտերին ծանոթանալու համար զանգահարել 52-63-36 հեռախոսահամարով:

Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու (որը տրամադրվում է դիմումի առկայության դեպքում, մեկ օրվա ընթացքում, պատճենահանման ծախսերը վճարելու պայմանով) եւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ք.Երեւան, Դ.Անհաղթ 23 /4-րդ հարկ/ հասցեով կամ զանգահարել աճուրդային հանձնաժողովին՝ հեռախոս՝ 23-73-00, ինտերնետ՝ URL: //www.privatization.am:

Հնարավոր փոփոխություններն ու լրացումները կհրապարակվեն այն ձեւով, ինչպես կատարվել է աճուրդի մասին սույն հրապարակային ծանուցումը:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի
կառավարման վարչություն

Սարոյան-100

հիման վրա ընտրված եւ մեր դաստերից կախված կտավները բոլորովին կաղ չեն ունենալու մեր այսօրվա մտածողության կամ առօրյա կյանքի հետ: Այսպես է դատահելու ամեն անգամ, երբ մենք ընդունենք մեզ հրամցվածը՝ առանց առարկելու կամ հարցեր տալու, երբ դարզապես նորաձեւության հետեւելու կամ նոր ոտղություններից ետ չմնալու դատվակով մենք շարունակենք համակերդվել մեզ համար օտար, անընթեռնելի գաղափարների կամ հասկացությունների հետ:

Կրկնում եմ, նկարչությունը տեսողական արվեստ է, տեսողության միջոցով է ստեղծվում հաղորդակցությունը, եւ մարդ անհատը կարիք չունի տեղյակ լինելու գեղագիտական բարդ տեսություններին կամ դոգմաներին, որպեսզի հասկանա այս դարզ ճշմարտությունը: Կտավն ինքը դետք է խոսուն լինի, անկախ դրա տակ դրված ճանաչված կամ անծանոթ նկարչի անունից: Լավ է նկարը, թե վատ՝ մեր աչքերն են որոշելու:

Վ. Ս.- Նկարչությունը, այո՛, տեսողական արվեստ է, եւ ադրելու մեզ տրված ժամանակահատվածը նույնպես տեսողական փորձառություն է: Տեսողության «զգացմունքի» (թե կարելի է զգացմունք համարել տեսողությունը) հետեւանքով է, որ ամեն ինչ «գոյություն է առնում», որակավորում ստանում այս կամ այն ձեւով: Դիտելուց, նկատելուց հետո է, որ իրը դառնում է «գեղեցիկ», «տգեղ» կամ մի այլ բան: Ճիշտ չէ մտածել, որ որեւէ իր, ձեւ, կամ առարկաների դատահական համախմբում ինքնին «տգեղ» կարող է լինել: Այդ որակավորումները մենք ենք տալիս, ըստ մեր հայեցողության կամ հաղորդակցության ընթացքում մեր «հարմարությանը»: Շատ դեպքերում այդ հաղորդակցությունն անցողիկ է եւ ճշգրիտ չի արտահայտում մեր զգացածը:

Ֆրեզնոյի տեխնիկական բարձրագույն ուսումնական հաստատությունը, որտեղ Սարոյանը մեքենագրել է սովորել

Մանուել Թոլեգյան.

Զրուցում են արվեստի շուրջը նկարչությունը

Մ. Թ.- Ճիշտ է: Եվ եթե ընդունում ես, որ տեսողության «զգացմունքի» հետեւանքով է, որ ասողության «զգացմունքի» հետեւանքով է, որ ամեն ինչ որակավորում է ստանում, ապա պետք է ընդունես նաեւ, որ բոլորս չէ, որ նույն բանն ենք տեսնում, բոլորս չէ, որ տեսնելու միեւնույն հատկությունը, ճշգրտությունը կամ բծախնդրությունն ունենք: Բոլորս չէ, որ միեւնույն լավաթությամբ, ուշադրությամբ կամ սրությամբ ենք նայում իրերին կամ միեւնույն զգացմունքներով արձագանքում դրանց...

Վ. Ս.- Բացարձակապես ճշմարիտ է... բարեբախտաբար:

Մ. Թ.- Ասացիր բարեբախտաբա՞ր, թե՞ դժբախտաբար:

Վ. Ս. Բարեբախտաբար, որովհետեւ դրանում հրաշք է ներառված: Չէ՞ որ ինչպես մարդ անհատն է յուրահատուկ, տեսողությունը՝ դիտարկումը նույնպես յուրահատուկ է, ինչքան էլ որ ուրիշների՝ մեզանից դուրս գտնվողների համար ընդհանուր լինենք, որպես ամբողջություն:

Մ. Թ.- Կարծում եմ՝ դրանով մեր ինքնարկման բուն էությանը, հիմնական հարցին՝ «դիտարկումը եւ գեղագիտական ֆորմոպանները» թեմային անդրադարձար: Կարծում եմ՝ ժամանակակից մարդու դիտարկումները, եթե դրանք լուրջ են ու հավատով արված, ավելի արժեքավոր են մեր ժամանակների համար, քան անցյալի դիտարկումներն ու ֆորմոպանները: Չեմ կարծում, որ որեւէ մեկը կարող է թարմ, կենսական «ընչող» արվեստի մի գործ ստեղծել կրկնօրինակելով անցյալի հասկացություններն ու ֆորմոպանները: Ես ոչ մի խնդիր չունեմ գեղագետների կամ ինքնատների հետ, որոնք անցյալում որոշակի տեսություն կամ փիլիսոփայություն են ստեղծել եւ հետեւել դրանց, բայց հավատացած եմ, որ մենք էլ մեր հերթին պարտավոր ենք մեր ժամանակներին հատուկ փիլիսոփայություն ստեղծել: Անցած 50 տարիների ընթացքում սոցիալական, քաղաքական եւ գիտական մեծ փոփոխություններ են կատարվել, որոնք այսօր էլ շարունակվում են: Դրանք, ինչ խոսք, անպայման իրենց ազդեցությունը թողնելու են մեր այսօրվա հասկացությունների վրա եւ ուղղորդելու են դրանց:

Մենք այսօր, օրինակ, տեսնում ենք փոփոխություններ ընտանեկան կյանքում, հատարակության մեջ կանանց գրաված դիրքի եւ դերի ասպարեզում, մարդկանց աշխատանքային սովորություններում եւ բազմաթիվ այլ բնագավառներում: Այսօր մենք կարետր եւ լուրջ խնդիր ունենք՝ կաղված ատոմային էներգիայի, ատոմային ռումբի հետ: Եվ սա միայն գիտական խնդիր չէ, այլեւ սոցիալական, քաղաքական: Մարդիկ ամբողջ աշխարհում առաջին անգամ սկսել են գիտակցել իրենց իրավունքները եւ պայքարել դրանց համար: Այս փոփոխություններն իրենց հետքը թողել են նաեւ կոնական եւ բարոյական հասկացությունների վրա: Այսօր ավելի քան մեկ միլիարդ մարդ իրեն աթեիստ է համարում, ոչ թե որովհետեւ իրք չի հավատում Աստծուն, այլ որովհետեւ կոնական հին գաղափարներն ու հասկացություններն այլեւս չեն բավարարում նրան: Նա նոր, առավել կենսունակ խթանիչ ուժ է փնտրում:

Արվեստն էլ բացառություն չէ: Այդ բոլոր փոփոխություններն իրենց զգաստացնող ազդեցությունը թողել են գեղագիտական հասկացությունների վրա: Այդ պատճառով էլ անցյալի տեսությունները չեն կարող բավարարել ժամանակակից մարդուն: Սրա լավագույն ապացույցը մենք կտեսնենք, երբ այցելենք ժամանակակից ցուցահանդեսներ, որոնցում ներկայացված էքսպրեսիոնիստական կամ աբստրակտ կտավները շատ քիչ ընդհանրություններ ունեն անցյալի իրենց նմանակների հետ: Ավելին, դրանցից մի քանիսը՝ «ամենաանընթեռնելիները» նույնիսկ «հեղափոխական» կոչ են հնչեցնում հին գաղափարների դեմ: Չեմ ասում, որ արժեքավոր մի նոր գաղափար արդեն առաջ է եկել այս «հեղափոխության» արդյունքում, բայց որ գործընթացը առկա է, փաստ է: Արվեստագետները փորձում են գտնել մեր ժամանակներին ավելի «հարմար» մի նոր ֆորմոպա: Որեւէ վերջնական գաղափար դեռ չի ձեւավորված եւ իր բնույթով ժխտողական կամ մերժողական ժամանակակից արվեստի վերջնականապես ձեւավորված լինելու վերաբերյալ բոլոր ասեկոսեները պարզապես անհեթեթություններ են:

Վ. Ս.- Մենք պետք է ընդունենք, որ բոլոր խոսակցություններն են անհեթեթություններ: Վերջնական ճշմարտություն ասվածն էլ է անհեթեթություն: Սա, իհարկե չի նշանակում խոսելու կամ գրելու, քարոզելու իրավունքի բացառում, բայց չկա մի բան, որ կարելի է վերցնել որպես բացարձակ ճշմարտություն: Եվ «բարեբախտաբար» բառն օգտագործեցի, որովհետեւ ուրախ եմ, որ ամեն մեկի «տեսողությունը», «դիտողականությունը» տարբեր է մյուսներից: Հենց այս որակական տարբերությունն է, որ հետաքրքրական, հրաշալի եւ անսպառ աղբյուր է դարձնում մարդկային փորձառությունն ինչպես արվեստագետի, այնպես էլ ոչ արվեստագետի համար: Պատկերացրու, թե ինչ կլիներ, եթե բոլորս նույն բանը տեսնեինք, զգայինք, երաբոլորս նույն բանը տեսնեինք, զգայինք, եւ ոչ զգինք կամ նույն բանին հավատայինք, եւ ոչ մեկս մյուսից ավելի «ճշգրիտ» կամ ավելի «խորը» եւ առավել «մանրամասն» չկարողանար տեսնել բնությունը կամ պատկերված իրը: Բարեբախտաբար այդպիսի բան հնարավոր չէ: Ոչ մեկը չի կարող ասել «իմ տեսածը միակ ճշմարտությունն է», որ «ուրիշ տեսածը միակ ճշմարտությունն է»: Ոչ ոք: Ձեւ, քան ես եմ տեսնում հնարավոր չէ»: Ոչ ոք:

Մ. Թ.- Ճշմարիտ է: Դա մոտավորապես այն է, ինչ ես ուզում էի ասել: Ոչ ոք իրավունք չունի թելադրելու ուրիշին կամ պահանջելու նրանից գեղեցիկի վերջնական սահմանումը:

Վ. Ս.- Տղամարդն իր կնոջը կարող է թելադրել այդ բանը, եթե, անշուշտ, ցանկանում է առնվազն կես ժամ վիճել նրա հետ: Բայց ընդհանուր առմամբ ոչ ոք իրավունք չունի մի բան առանց մտածելու, առանց շնորհի, կամ առանց հոմորի անելու: Իհարկե, նա կարող է անել, բայց դա չի նշանակում, որ իր այդ արածը որեւէ նշանակություն կամ կարեւորություն կունենա: Դա ամենաաչը կարող է ժամանակավոր նշանակություն կամ կարեւորություն ունենալ մարդկանց մի որոշակի խմբի համար:

Մ. Թ.- Բայց, Բիլ, չեմ կարծում, որ կժխտես այն փաստը, որ ժամանակին չափազանց վատ ու անհամոզիչ գեղագիտական տեսություններ մեծ ազդեցություն են թողել մարդկանց վրա, եւ այդ ազդեցությունը երբեմն դարեր է տեւել: Հիշենք նախառաֆայելյան շարժումը, կամ նեոկլասիկ ժամանակաշրջանները: Կամ Հռոմի անկումից հետո՝ 5-8-դ դարերում ստեղծված անբովանդակ արվեստի նմուշները: Այս բոլորն այժմ մոռացության են մատնված:

Վ. Ս.- Այո, մեծ ազդեցություն, որը կարող էր լինել դրական, եթե տեղին լիներ: Բայց հաճախ այդ ազդեցությունները հիմարների կողմից են տարածում գտնում: Նրանք են «ընկնում դրանց ազդեցության տակ»: Ինքնուրույն «տեսողություն» կամ «մտածողություն» ունեցող որեւէ մեկը կարիք չունի նման ազդեցությունների, բացի եթե դրանք ընդհանուր գործին են վերաբերում:

Մ. Թ.- Ուզում ես ասել, որ արվեստագետը ցանկանո՞ղ է ազդեցություն գործած լինել, նա դրանո՞ւ է ձգտում:

Վ. Ս.- Եթե դա ընդհանուր գործին է վերաբերում: Կարող է պատահել, որ իր հաճույքի կամ ասպիճանական կատարելագործման համար արվեստագետն իր կարիերայի սկզբնական շրջանում հետաքրքրվի ուրիշների տեսակետներով կամ գաղափարներով: Սա դեռ չի նշանակում, որ նա տուժելու է դրանից: Չեմ կարող մտաբերել առաջնակարգ մի նկարչի, որը համբավավոր դարձած լինի ազդեցությունների գերակայության հետեւանքով: Ազդեցությունները տարբեր են լինում՝ ուժեղ, նուրբ, խորը: Արեւի ազդեցությունն, օրինակ, իմ կյանքում մեծ դեր է խաղացել: Ես խորապես ազդված եմ եղել արեւից: Վստահ եմ , որ դու եւս : Արեւը ամեն օր լուսավորում է աշխարհը, եւ սա հրաշալի մի ազդեցություն է, որ ընդունում եմ: Ուրիշ ազդեցություններ ավելի թույլ են եղել: Վստահ եմ՝ շատ գրողներ եւ նկարիչներ գուցե աննշան, բայց որոշակի ազդեցություն թողել են ինձ վրա, որովհետեւ մենք ոչնչից չենք առաջանում եւ մեր ձեռքբերումները հենց այնպես ոչնչից չէ, որ առաջանում են:

Մ. Թ.- Անշուշտ: Մենք բոլորս ենթակա ենք ազդեցությունների, մի շարք ազդեցությունների տակ լինելու: Նկարչի համար գույնը մեծ ազդեցություն ունի, նկարչության դասատուները ազդեցություն ունեն: Սրանք օգտակար ազդեցություններ են: Անձամբ ես ճանաչարհորդելը բարեւար ազդեցություն եմ համարում, քանի որ դրանով ես կարող եմ վերստուգել, ճշգրտել եւ անընդհատ բարելավել իմ աշխատանքները:

Վ. Ս.- Լավ է ասված: Ընդունված ճշմարտություն է եւ կարծեմ ամեն մեկս էլ իր փորձառությունից պարզած կլինի, որ շատ բան կարելի է ձեռք բերել այսպես կոչված ժխտումից կամ մերժումից, բացասումից: Դրա միջոցով, առավել ճշգրիտ մոտեցման, կենտրոնացման միջոցով կարելի է հասնել ավելի արդյունավետ փորձառության որեւէ բնագավառում, քան ցրված, շփոթ իրավիճակում կամ ծայրահեղ ազատ պայմաններում գործելու միջոցով: Ազատության պատրանքը, որ մենք բոլորս փայփայում ենք...

Մ. Թ.- Ազատության պատրանքը...

Վ. Ս.- Չափազանցված զգացմունքներ, անսահման ազատություն, մարմնի, հոգու եւ մտքի հարակցման, համագործակցության պակաս, անտեսում: Մինչդեռ այդ երեքի խոհեմ համագործակցությամբ անձը մեծապես շահում է եւ ձեռք բերում այն, ինչը փայփայում է: Կարծում եմ՝ այդպիսին է եղել լավ մարդկանց փորձառությունը: Բացառություններ եղել են, անշուշտ, բայց քիչ:

Մ. Թ.- Արվեստագետը պետք է կարգապահ լինի, պարտավոր է իրեն վարժեցնել կարգապահության, եթե, անշուշտ, մտադիր է նշանակալի նվաճումներ ունենալ: Նա պետք է իր անձնական կյանքը, աշխատելու սովորությունները որոշակի կարգ ու կանոնի ենթարկի, զգացմունքները՝ կատարյալ, հնարավորինս կշռադատված պետք է լինեն, դատողությունը՝ առողջ: Արվեստը լուրջ գործ է, եւ ինչքան շուտ արվեստագետը հասկանա դա, այնքան լավ, եթե իհարկե չի ցանկանում, ինչպես ասում են, բոհեմական կյանք վարել:

Վ. Ս.- Կարծում եմ՝ ճշմարիտ պարզ կան որ ասածի մեջ, բայց մենք երեւի այս կետ պետք է ձեւակերպենք: Զգացմունքների կատարելություն չի կարող լինել: Զգացմունքները չեն կարող կատարելագործվել: Բայց կարելի է հնարավորինս չափավորել դրանք: Կատարելությունը մարդու համար, ընդհանրապես որպես կայացած էակ, անհասանելի է եւ լավ է, որ այդպես է: Բարեբախտություն է: Սովածություն, հոգնածություն զգալով՝ մենք մի որոշ անգամ չենք կարող «կատարյալ զգացմունքներ» ունենալ: Բայց կարող ենք ուղղորդել դրանց, առավել սուր կամ «արձագանքող» դարձնել, քան եթե ասենք անտարբեր լինեինք արտելու ամբողջ պրոցեսի նկատմամբ:

Արվեստը կյանքի մի կողմին, մի մասին չէ, որ վերաբերում է, այլ կյանքին ընդհանրապես՝ ամբողջությամբ վերցրած: Արվեստի նպատակը, ֆունկցիան ուրիշների մեջ ձգտում արթնացնելն է՝ ադրելու այդ կյանքի ամբողջական հաճույքն ու մեզ տրված հնարավորությունը: Եթե այդպես չլիներ, մարդկությունն ընդամենը մեկ դարից էլ պակաս ժամանակահատվածում ճանճրույթից կխորտակվեր...

Մ. Թ.- Այո, իհարկե: Ես էլ էի ուզում ասել, որ մենք մեր զգայարանները միշտ «խորաթափանցելու» պատրաստ վիճակում պետք է պահենք:

Վ. Ս.- Կատարելության վիճակը մահ է նշանակում, ավարտ...

Մ. Թ.- Դու դրանով արվեստների գոյության հիմնական պատճառն ես նշում: Նշում ես, թե ինչու մենք արժեւորում ենք դրանց, ինչով են պիտանի մեզ: Չէի ցանկանա նույնիսկ մտածել, թե ինչ կպատահեր մեզ հետ, եթե չլինեին արվեստները:

Վ. Ս.- Շատ հավանական է, որ պարզապես ճանճրույթից տառապեինք: Դու մի հարց ունեիր, Մանուել, որին արժի վերադառնալ: Ինչ է գեղեցկությունը: Կարծում եմ՝ հետաքրքրական կլինի լսել քո կարծիքն այդ մասին՝ որպես նկարչի:

Մ. Թ.- Նկարչության մեջ գեղեցկությունը կարելի է բաժանել երկու կատեգորիաների: Առարկայի, իրի՝ այսինքն նկարի ֆիզիկական, մատերիական կողմի գեղեցկությունը եւ նկարում արտահայտված գաղափարի կամ գաղափարների գեղեցկությունը: Որքան հասկանում եմ, կտավում դրանք անբաժանելի են: Գաղափարի եւ այդ գաղափարը ներկայացնող ֆիզիկական նյութի համաձուլումից է, որ ստեղծվում է գեղեցիկ կտավը:

Գրականության մեջ այս հանգամանքը գոյություն չունի: Մենք նյութական կողմին, ասենք գրքի շապիկին կամ տպագրությանը նայելով միայն չենք որոշում, որ գիրքը «գեղեցիկ է»:

Եթե այդպես ենք բնութագրում, ուրեմն նկատի ունենք գրքի բովանդակությունը, նյութը, ոճը: Նկարչության մեջ առարկան, ֆիզիկական նյութն ինքնին կարող է հիացմունք առաջացնել, ճիշտ այնպես, ինչպես, ասենք, աղամանդը, տերեւը, ծովախեցին եւ այլն: Բայց նշեմ նաեւ, որ կտավի այս լոկ ֆիզիկական, «արտաքին» կողմի գնահատումը շատ հաճախ կարող է մոլորեցնել դիտողին: Գույների, տոնի, ձեւի, կտավի գործվածքի մատերիալիստական կողմը գեղեցիկ կարող է լինել անշուշտ, բայց այդ գեղեցկությունը «անհոգի» է, անկայուն, անդեմ: Նման է երեւի աղամանդի արձակած փայլին: Այսօր անթիվ-անհամար օրինակներ կարելի է բերել, երբ կտավները գնահատվում են լոկ իրենց ֆիզիկական հատկանիշների համար: Վերցնենք, օրինակ, կոնկրետ պատկերներից զուտ էքսպրեսիոնիստական այն կտավները, որոնցում գույների կուտակումներ են, կամ կոլաժները, որոնցում համադրված իրերը ինքնանպատակ են եւ մեկը մյուսին անհամապատասխան: Հավատացած եմ, որ նկարչության արվեստը վաղուց վերացած կլիներ, եթե այս տեսակի մատերիալիստական մոտեցումը լիներ նրա գլխավոր նպատակը: Մեծ նկարիչների կտավները գոյատեւել են մինչեւ օրս ոչ թե լոկ այդ ֆիզիկական հատկանիշների, այլ մանավանդ դրանց ուղեկցող, դրանց միաձուլված, դրանց արտահայտած գաղափարների շնորհիվ: Դա տարբեր ձեւեր կարող է ունենալ, քանի որ դարերի ընթացքում գեղեցկությունն հասկացությունը տարբեր իմաստներ է ունեցել տարբեր մարդկանց համար: Ամեն մի քաղաքակրթություն իրեն համար ձեւով է ներկայացրել գեղեցկությունը: Դա մենք կարող ենք նշմարել մ. թ. ա 500 թվականի Պլատոնի եւ Արիստոտելի կամ համեմատաբար արդի ժամանակների՝ 18-19-դ դարերի գերմանացի եւ ռուս ներկայացուցիչների՝ Կանտի, Հեգելի եւ Տոլստոյի արտահայտած գեղեցիկի վերաբերյալ արտահայտություններում: Հիշում ես մեր նախորդ զրույցներից մեկում խոսեցի նախնադարյան նկարչության մասին եւ ասացի, որ նկարն այդ ժամանակ բնավ էլ գեղագիտական նշանակություն չուներ, այլ բացառապես գործնական, կիրառական նպատակ էր հետապնդում, այն է մտքեր, գաղափարներ հաղորդելը ուրիշներին, լինի դա չար ոգիներին հետ պահելը, թե որեւէ իր պատշամունքի առարկա դարձնելը:

Շարունակելի

Թարգմանությունը՝
ՎԱՀԱՆ ՕՍԻԼԻԿՅԱՆԻ

Գերմանական մասնակ

ՕՐՀԱՆ ՓԱՄՈՒՔ.

«ԵՍ ԿՈՂՄՆԱԿԻՑ ԵՄ ԵՎՐՈՊԱՅԻՆ ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒՆ, ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ԵՒ ԲԱԶՄԱԿԱՐԾՈՒԹՅԱՆԸ»

Անհանդուրժողականությունը թունավորում է ամբողջ մթնոլորտը

Գրականության ասպարեզում 2006 թվին Նոբելյան մրցանակի արժանացած թուրք վիպասան Օրհան Փամուքը «Դեր Շպիգել» թերթին տված սոորեւ թարգմանաբար ներկայացվող հարցազրույցում խոսում է իր նոր՝ «Անմեղության թանգարանը» վեպի, Եվրոպային մաս կազմելու Թուրքիայի ձգտումների, իր հայրենիքում ժողովրդավարության եւ բազմակարծության հաստատման եւ այն գնի մասին, որ մարդիկ վճարում են դրանց համար: Հարցազրույցը վարել են Դիտեր Բեդնարզն ու Դիտմար Պիրերը:

Մաս Ա.

Գրականություն, մշակույթ, սովորույթներ

«Շպիգել»- Պրն Փամուք, Ձեր նոր ստեղծագործության մեջ Դուք խոսում եք 70-ական թվականներին կատարված իրադարձությունների, գործարար մի մարդու որդու ուրախությունների եւ տխրությունների մասին: Նկարագրելով Քեմալի՝ ձեր երկի գլխավոր հերոսի սերն իր երիտասարդ ազգակցուհու հանդեպ, Դուք միաժամանակ ենթադատում եք Թուրքիային: Ավելի քան 500 էջ կազմող «Անմեղության թանգարանը» Ձեր ամենածավալուն վեպն է: Կարո՞ղ ենք ասել, որ դա ձեր գլուխգործոցն է:

Օրհան Փամուք- Իմ նախկին կինը, որի հետ լավ հարաբերությունների մեջ եմ, կարդալով գիրքն ինձ ասաց.«Դու գրել ես այն ամենի մասին, ինչին լավատեղյակ ես»: Ես համաձայն եմ նրա այդ կարծիքին:

Շ.- Դուք նկարագրում եք Ստամբուլի վերին դասի՝ բուրժուազիայի կյանքը, միջավայր, որտեղ դուք մեծացել եք:

Օ. Փ.- Գիրքը ներկայացնում է այդ միջավայրի 50 տարիները: Ցածր խավի մասին էլ է խոսք գնում, բայց հիմնականում նյութը Թուրքիայի իշխող բուրժուազիայի մասին է: Թուրքիայում մի տեսակ «կոտրված», տատանվող, տարօրինակ բուրժուազիայի տարբերակ գոյություն ունի, որը կիսաճնշված է, կիսաարտված, բայց միաժամանակ նաեւ ամբարտավան ու ագրեսիվ: Այդ խումբը մեծաթիվ չէ: Ես նրանց եմ ներկայացրել, եւ նրանց միջոցով նաեւ ժողովրդի ոգին եւ Թուրքիայի առաջ ծառացած մշակութային խոշոր հիմնահարցերը:

Շ.- Հերոսի կերպարում Դուք ձե՞զ ի նկատի ունեք:

Օ. Փ.- Եթե դուք ձախակողմյան եք, կամ ընդհանրապես քաղաքական մոտեցումներ ունեցող անձնավորություն, պիտի նախընտրեիք մոռանալ նման կյանք ապրած լինելը: Ես վիպասան եմ եւ գրելով այդ ամենի մասին հաճույք եմ ստացել ամեն մի մանրամասնից: Այո, ես էլ, ընտանիքս էլ եւ հատկապես հայրս էլ է անցել այն ամենի միջով, ինչ Քեմալն է անցնում գրքում: Կան նաեւ Քեմալի նոր ընկերները՝ նոր սերնդի ներկայացուցիչները, որոնց հիմքում ընկած են Ստամբուլի Ռոբերտ քոլեջի իմ բուրժուա ընկերները, որոնք իրենց հոր ավտոմեքենաներով գիշերային ակումբներ եւ այլ տարօրինակ վայրեր են հաճախում:

Շ.- Որքանո՞վ է Քեմալի մեջ արտացոլված Օրհան Փամուքը:

Օ. Փ.- Սոցիալական անցյալից շատ բան: Բայց Քեմալը ավելի հարուստ ընտանիքի զավակ է: Փամուքները կարող են վատ զգալ իրենց, քանի որ կորցրել են ինչ ունեին, մինչդեռ Քեմալները շռայլ են եւ վայելում են կյանքը: Ես եղել եմ այն բոլոր վայրերում, որ Քեմալն է այցելել, միայն թե որպես անդամը մի ընտանիքի, որն իր ունեցվածքը կորցրել է երկու-երեք սերունդ առաջ: Ես նման եմ հատկապես մանուկ հասակի Քեմալին, մոր, խոհարարների եւ ծառաների հետ՝ նրա հարաբերություններում: Դա կարծես իմ ընտանիքը լինի: Ինչ վերաբերում է նրա գործարար շրջանակներին, կարող եմ ասել, որ բոլորովին անծանոթ աշխարհ է ինձ համար: Ես գրող եմ եւ գաղափար չունեմ բիզնեսից: Քեմալի կյանքի այդ մասը հիմնված է հորս փորձառության վրա:

Շ.- Ձեր պատմության մեջ ադրեցնող մանրամասներ կան: Դուք չափազանց զգայուն եք ամենօրյա իրերի եւ դեպքերի նկատմամբ:

Օ. Փ.- Այո, մանրամասնությունները շատ են. գնումներ կատարելը, նոր խանութների կամ նոր՝ արեւմտյանի ընդօրինակությունը հանդիսացող ապրանքների վերաբերյալ ասեկոսեները եւ այլն: Բայց Քեմալի ներքին աշխարհում ավելի մեծ տեղ ունեն ոճիրն ու պատիժը, հանցանքն ու պատասխանատվությունը: Սրանք են վեպում քննարկված հիմնահարցերը, բայց ոչ այնքան ոտղակիորեն կամ բացահայտորեն, որ ես հիմա նկարագրում եմ: Քեմալի հարաբերությունները իր ընտանիքի հետ փխրուն են, դյուրաբեկ եւ չափազանց խնդրահարույց: Իմն էլ է եղել այդպիսին, բայց ես չեմ ցանկանում բարձրաձայնել դրանց մասին: Ես դա կատարում եմ գրքերիս միջոցով, դիմակներ կրելով: Այդպես ավելի լավ է:

Շ.- Դո՞ւք էլ էիք տառապում միեւնույն հոգսերով: Ձե՞զ էլ էին պատում Քեմալի կասկածները:

Օ. Փ.- Քեմալի կյանքում պրոբլեմները շատ են, եւ նա հեռանում է սովորական բուրժուական միջավայրից: Այստեղ ինձ նման է: Ընտանիքս ակնկալում էր, որ ես էլ կմտնեմ բիզնեսի աշխարհ, կդառնամ հարուստ բուրժուա: Բայց ես դարձա գրող: Ես էլ եմ զգում այն մեղավորությունը, որ Քեմալն է զգում բուրժուական հասարակությունից դուրս գալու համար: Թոմաս Մանն էլ էր նշում այդ մասին «Տոնիո Կրեգերում»:

Շ.- Դուք նման եք նաեւ Քեմալին թանգարանների հանդեպ ունեցած իր սիրո հարցում:

Օ. Փ- Օհ, այո: Ես թանգարանի մարդ եմ: Քեմալը շատ բաներով նման է ինձ, երբ գրի վերջավորության այցելում է բոլոր թանգարանները: Ես էլ եմ սիրում այցելել փոքր թանգարաններ, որտեղ կարող ես խաղաղ մթնոլորտում բացահայտել քո կրքերն ու քո ներաշխարհը՝ հեռանալով ամբողջ աշխարհից ու ներկայից: Ժամանակից դուրս՝ մեկ ուրիշ միջավայրում գտնվելը, բոլորովին այլ ճաճանչներում հայտնվելը այնպիսի մի զգացողություն է, որն ինձ դուր է գալիս: Չգիտեմ ինչու: Բայց դա շատ կարեւոր էր գրի ստեղծման գործում:

Շ.- Գրականությունը կարո՞ղ է թանգարան դառնալ թեկուզ որոշակի մի խմբավորման համար:

Օ. Փ.- Երբ ես թանգարան բառն եմ օգտագործում, ես հենց դա՛ էլ ի նկատի ունեմ: Ոչ Անդրե Մալռոյի նման, որ խոսում է այլաբանական, «երեւակայական թանգարանի» մասին, որտեղ թանգարան չկա, միայն թղթեր են: Ես իրապես մտածում եմ Ստամբուլում մի թանգարան հիմնելու մասին, որտեղ գուցե 2-3 տարի հետո, այս գրի ընթերցողը կգտնի այն ամենը, ինչ նկարագրված է դրանում: Արդեն կահավորանքի որոշ իրեր գնել եմ, եւ նախագիծն էլ պատրաստ է: Նույնիսկ առագա հնարավոր կոտրատորների հետ էլ եմ զրուցել:

Շ.- Զանազան իրեր հավաքելու Քեմալի մեծ սերը՝ կիրքը, կարծես նույնիսկ ֆետիշացվում է:

Օ. Փ.- Գրքում այն միտքն է թեւածում, որ մենք իրեր, առարկաներ պահում ենք, որովհետեւ զգացական նշանակություն ենք տալիս նրանց, ուրախություն, ընկերություն, անվտանգություն կամ որեւէ այլ զգացմունք ենք վերագրում դրանց: Իմ հերոսը կուրորեն սիրահարված է Ֆուսունին: Նա երջանիկ է: Սկսում է հավաքել իրեր, որոնք նրան են հիշեցնում: Առաջին անգամը չէ, որ այս թեմային անդրադառնում եմ: Իմ «Նոր կյանքը» եւ «Սեւ գիրքը» վեպերում նույնպես գրել եմ, որ իրեր, որոշակի առարկաներ պահում ենք, որովհետեւ դրանք ինչ-որ երջանիկ ոգեներ են հիշեցնում մեզ:

Շ.- Ձեր նոր գիրքը Ֆուսունի հանդեպ Քեմալի տածած սիրուց բացի պատմում է նաեւ Թուրքիայի՝ Ձեր ծննդավայրի մասին:

Օ. Փ.- Այո, գիրքը ձգտում է ներկայացնել նաեւ երկիրը, խնդիրները, որոնք ծառացած են երկրի առաջ, ժողովրդի ոգին, պատմությունը եւ ինքնությունը: Այս բոլորը բուրժուական բարձր խավի նկարագրության եւ ոչ թե բյուրոկրատական եւ քաղաքական հարաբերությունների միջոցով է տրված: Փորձել եմ ցույց տալ երկրի սոցիալ-բարոյական կառուցվածքը:

Շ.- Դրա՞ համար չեք խուսափում սեփի տեսարաններից:

Օ. Փ.- Դրանք առկա են, բայց ոչ գայթակղելու նպատակով: Սեքսն այստեղ Ֆուսունի հանդեպ Քեմալի ունեցած անկեղծ զգացմունքների արտահայտությունն է: Գրականության մեջ դժվարագույն խնդիրը հետեւյալն է. գրել բացահայտորեն սեքսի մասին, բայց չլինել գայթակղող կամ դրդող: Այլ ներկայացնել այդ բոլորը որպես հոգեւոր տեսարան: Դա մաս է կազմում սեքսի բարոյականության վերաբերյալ իմ համոզմունքներին: Դրա համար է նաեւ, որ անդրադառնում եմ կուսության եւ անմեղության թեմաներին:

Շ.- Դրանք արդեն քաղաքական թեմաներ են Թուրքիայի նման մահմեդական մի երկրում, չէ՞:

Օ. Փ.- Գիրքս, այո, քաղաքական է, բայց առավել խորը եւ մշակութային-դաստիարակչական առումով: Դա քաղաքական է հիմնականում կանանց ճնշումների վերաբերյալ քննարկումներ ծավալելու տեսակետից: Այդ ճնշումները կատարվում են երբեմն նուրբ ձեւով, այսպես կոչված՝ «արեւմտամետների», «արդիականության ջատագովների» կամ իշխող «քաղաքակրթվածների» ձեռքով:

Շ.- Դատելով այդ բոլորից, ընթերցողը կարող է այն տպավորությունն ստանալ, որ դուք անդամակցում եք ֆեմինիստական շարժմանը:

Օ. Փ.- Այդ բնորոշումը ես չէ, որ պիտի տամ, բայց եթե նույնիսկ այդպես է, ես դեմ չեմ: Իմ հերոսը 30 տարեկանին մոտ միայն հասկանում է, թե տղամարդիկ ինչպես են վարվում կանանց հետ: Իմ տղամարդ ընկերները հավաստում են, որ իմ նկարագրությունները այդ թեմայի վերաբերյալ ճնշաղ են, հավաստակերված եւ բոլորովին էլ չափազանցված չեն: Ես նկարագրել եմ այն, ինչ իրոք տեղի է ունեցել այդ տարիներին կանանց հետ Թուրքիայի փողոցներում: Ես գրել եմ ճշմարտությունը, անկեղծորեն:

Շ.- Իսկ հիմա կանանց վիճակը Թուրքիայում բարելավվե՞լ է:

Օ. Փ.- Վստահ չեմ: Գիրքը գրելուց մտածում էի, որ այդ թեման երեւի 70-ականներին էր բնորոշ եւ արդեն հաղթահարված է, սակայն երբ երիտասարդների հետ զրուցեցի, պարզեցի, որ դեռ այժմեական է եւ «մաչիզմո» (ուժեղ տղամարդ լինելու հատկություն) ասվածը շարունակում է մնալ գերխնդիր երիտասարդ տղաների շրջանում, ինչպես կուսության խնդիրը՝ աղջիկների շրջանում: Սրանք խնդիրներ են, որ արդիականացումն ու տնտեսական զարգացումը չեն կարողացել լուծել:

Մաս Բ.

Թուրքիա, Եվրոպա եւ դասակարգային հարցեր

Շ.- Գրքի տարբեր հատվածներում խոսք է գնում Եվրոպային միանալու Թուրքիայի դեռեւս չիրականացած ձգտումների մասին:

Օ. Փ.- Թուրքիայի եւ Եվրոպայի վերաբերյալ խոսակցություններն ավելի հին են, քան Թուրքիայի նորագույն պատմությունը: Այդ հարցը քննարկվել է նաեւ Օսմանյան կայսրության ժամանակ: Դա թուրքական ինքնության մաս է կազմում: Առաջին մեծ արեւմտամետը թուրքական հանրապետության հիմնադիր Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքն էր: Ժողովրդին դիմելով նա ասաց. «Փոխեք ձեր հագուստները, խնդրում եմ հանեք գլխաշորերը, փոխեք օրացույցը եւ փոխեք նաեւ ձեր այբուբենը»: Այս բոլորը նա խնդրեց անել, որպեսզի ավելի «արեւմտյան» տեսք ունենանք:

Շ.- Առանց այս պարտադրված արդիականացմանը հնարավո՞ր չէ անդամակցության բանակցություններ վարել Եվրամիության հետ:

Օ. Փ.- Հնարավոր է գուցե, բայց իշխող էլիտան մտածում է, որ դա այն ամենն է, ինչ հնարավոր է անել: Արեւմտյան մշակույթի այդ խորհրդանշաններով նրանք փորձում են իրավական հիմքերի վրա դնել իրենց իշխանությունը: Այդ իշխող էլիտայից շատերն են ասում ժողովրդին. «Դուք լիս է հնարավորություն, որ մարդիկ խաբեն, խարդախությունների դիմեն, մի կլորիկ գումար գրպանեն եւ վերջ:

Շ.- Սա արդեն լուրջ սոցիալական ճնշադատություն է, որը տեղ է գտել սիրային համարվող վեպում:

Օ. Փ.- Այդպես է: Միշտ էլ ճնշադատական գրքեր եմ գրում (ծիծաղում է): Մտահոգվելու կարիք չունեմ: Ցեմ վախենում (քաղաքական թեմաներից): Բայց գիրքս նաեւ մի փորձ է՝ գրականության միջոցով քաղաքականությունից այն կողմ գնալու: Կաբառակերությունը, զինվորական հեղաբերությունները, քաղաքականությունը (լինեն դրանք իսլամիստական, թե աշխարհիկ) թեմաներ են, որոնցից Թուրքիան «կշտացել» է: Ես իմ գիրքը շատ եմ սիրում եւ չեմ ուզում այդ կեղտի մեջ տեսնել այն:

Շ.- Մտահոգվա՞ծ եք տեսնելով, որ երկիրը (Թուրքիան) թույլ է տալիս դատական հայց հարուցել իշխող կուսակցության դեմ եւ փորձում է մեկուսացնել նրան: Դուք դրանում դեպի Եվրոպա ճանապարհ տեսնո՞ւմ եք:

Օ. Փ.- Խոստովանեմ, որ ձեր խոսքերը լսելով՝ ինձ հպարտ եմ զգում: Իրո՞ք մարդիկ այդպես են խոսում մեր մասին: 50 տարի առաջ ոչ ոք չէր խոսում մեր մասին, այնպես որ մեծ առաջընթաց կարելի է համարել այդ երեւույթը: Ուրախ եմ դրա համար:

Շ.- Ընդհանուր առմամբ կարելի է՞ ասել, որ ուրախ եք Թուրքիայում կատարվող ներկա զարգացումներից:

Օ. Փ.- Կարծում եմ՝ տնտեսական առումով Թուրքիան լավ ցուցանիշներ է արձանագրում, բայց քաղաքական առումով հսկայական խնդիրներ կան, որոնց մեծ մասը, դժբախտաբար, առնչվում է իշխող դասակարգի սահմանափակ մտածողության հետ: Նրանք ազատամիտ չեն եւ անընդհատ կռվում են մեկը մյուսի դեմ:

Շ.- Դուք ի նկատի ունեք նախկին ֆեմալական էլիտայի եւ նորաթուխ պահպանողական-կրոնական միջին խավի (վարչապետ Էրդողանի առաջնորդությամբ) հակամարտությո՞ւնը:

Օ. Փ.- Վերջին հաշվով այս դասակարգերը նույնանում են, երբ խոսքը գնում է ամբողջատիրության կամ անհանդուրժողականության մասին: Դժբախտաբար, երկու խմբավորումներն էլ չեն հասկանում, որ իրական արժեքները խոսքի ազատության եւ բաց հասարակություն ունենալու իրավունքներն են: Սա է մեր ողբերգությունը: Նրանք վախենում

Տես էջ 4 ➤

ԱԶԳԱՅԻՆ ՊԵՐՍՊԵԿՏԻՎ

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԳԱԼՅԱՆ

ՀԻՆ ՔԱՂԱՔԻ ՆՈՐ ՍԵՐԸ

Գյումրին՝ ուշադրության գոտում

Իր հազար ու մի եկեղեցիներով հռչակված Անիի հարեւանությամբ, հայկական բնօրրանի ամբողջականությունը զատող սահմանի ձախակողմյան ափի բնակավայր Գյումրին հազար ու մի արհեստների ու արվեստների խաղաք է հնուց ի վեր՝ հարուստ ավանդույթներով, բանաստեղծներով, գուսաններով, փայտագործ, խարտոց, երկաթագործ վարպետներով, ոսկերիչներով, նկարիչներով ու բանաստեղծներով, հումորիստներով: Այսպես է պատկերացնում Գյումրին ամեն հայ՝ խաղաք անգամ չմտածը: Այդպիսին է գյումրեցին՝ իր խաղաքը սիրող, մեծարող ու հետն էլ՝ մեծամտացող: Արհեստների ու արվեստների մոտան հաճախ է այս խաղաք այցելում: Գյումրեցի խարագործ վարպետը խին ոգի է տալիս, մատների ջերմությունը փոխանցում անշունչ մետաղին. արհեստն ու արվեստն այստեղ ծուլված են՝ արհեստագործ-վարպետի նրբագեղության հաստատած առարկան արվեստ դարձած: Այդպես է բոլոր այն բնակավայրերում, ուր գեղեցիկի հանդեպ նախասեղծ սեր կա, ու այդ սերը կյանքը վերածում է ստեղծագործության ու կերտում միջավայր, որն էլ կրթում, հոկում է մարդուն, համենայն դեպս գեղեցիկի հանդեպ վերաբերմունք մշակում: Դա այն զգացողությունն է, երբ առաջին անգամ մտնում ես խաղաք ու շոշափում տարբերությունը մյուսներից, կարդում խաղաքի ինքնահատուկ դիմանկարը: Սա ենթադրում է ոչ միայն ձեւավորված ավանդույթների, պատմության, ճարտարապետական միջավայրի, խաղաքային մշակույթի գոյություն, այլեւ ընդհանուր խաղաքային ոգու ներկայություն: Այդպիսին էր Գյումրին խան տարի առաջ, մինչեւ սոսկալի աղետը, մինչեւ 88-ի դեկտեմբերի 7-ի անասելի ողբերգությունը, որ պորեց հարյուրներ գյումրեցին, պորեց ամեն հայ, ամեն մարդ:

Իմ այսօրվա զրուցակիցը ծագումով գյումրեցի է, մշակույթի մեկնաբան, գեղագետ Լեւոն Լաճիկյանը, որ 1992-94-ի դժվարին տարիներին աշխատել է «Ազգ»-ում, եղել մշակութային էջի պատասխանատու եւ իր հայացքով այդ շրջանի մշակութային կյանքի վավերագրություն ստեղծել: Դրանք նա հետագայում ամբողջացրեց «Անլույս օրերի ոգեղեն դողանջներ» գրքում, իսկ ավելի ուշ տարբեր երկրների ուղեւորությունների տպավորությունները իր գծանկարներով հրապարակեց «Խաչվող ճանապարհներ» գրքով: Վերջին շրջանում Լեւոնի հայացքը կրկին դարձել է հայրենի խաղաքին ու որոնում է հին Գյումրու գեղեցկություններն ու մթնոլորտը, պատմա-մշակութային միջավայրը՝ «Իմ Գյումրի» գծանկարչական շարքով:

Վիրավոր Գյումրին

Անցյալման տարելից, խաներորդը, թե որեւէ մեկ այլը չէ, որ պիտի հիշեցնի մեզ Գյումրու վերը: Գյումրին աղետի գոտուց զարգացման գոտի վերածելու հոչակած ծրագրի ձեւակերպման մեջ Լեւոնը շատ կարեւոր ճշգրտում է անում՝ Գյումրին նախեւառաջ դարձնել ուշադրության գոտի եւ «համապատասխան վերաբերմունքից այն վստահաբար կդառնա հայկական Մեքքա: Երեւանյան, նույնիսկ 120 կիլոմետրանոց հեռավորությունից- տարբեր մոլորակների մեջ են պրում խաղաքամայր Երեւանը եւ աղետահար Գյումրին: Երկրաշարժից 20 տարի անց մոտ 4.000 ընտանիք դեռեւս դրամիկներում է պրում: Մի ամբողջ սերունդ խան տարի ծնվեց, մեծացավ ու պրեց այնտեղ, կյանքին ու աշխարհին դրամիկի պատուհանից նայեց: Խեղճացած է Գյումրին այսօր, մարդաթափ եղած: Ասել, թե գոյները պահպանվել են, սխալ կլինի: Մեր պատմությունը երկու շրջանի է բաժանվում՝ մինչեւ երկրաշարժը եւ երկրաշարժից հետո: Երկրաշարժը կարծես շրջանցեց հին Գյումրին. ոչ թե ստորգետնյա ցնցումներն էին թույլ՝ ոչ: Ճարտարապետական գեղեցկությունների հետ գյումրեցի արհեստավորը իր հոգու ազնվությունն էր խառնել շաղախին: Իրենք՝ գյումրեցիք ասում են՝ հինը մնաց, նորը գնաց», ասում է զրուցակիցս: Գնացողը խորհրդային աղետալի շինարարությունն էր, որն իր փլատակների տակ տարավ տասնյակ հազարավոր մարդկային կյանքեր, թաղվեցին միլիոնավոր իղձեր, երազներ...



Հովհ. Շիրազի հուշատուն-թանգարան Հիմնադրվել է 1983-ին: 1988-ի երկրաշարժից անօթեւան մի քանի ընտանիքներ պատսպարած թանգարանը վերաբացվել է 2003-ին:

Մերկուրովի անվան նկարչական դպրոց: Հիմնադրվել է 1921-ին՝ որպես գեղարվեստի ստուդիա. 1936-ին վերածվել է նկարչական դպրոցի, 1947-ին անվանակոչվել Սերգեյ Մերկուրովի անունով:

Սալամազյան քույրերի պատկերասրահ: Կառուցվել է 1880-ին:

Կումայրի-Գյումրի-Ալեքսանդրապոլ

Գյումրին՝ հնագույն այս պատմավայրը հին եւ միջին դարերում կոչվել է Կումայրի, այդ մասին առաջին վկայությունը Ղեւոնդ պատմիչն է տալիս (8-րդ դար): Գյումրին ժողովրդախոսակցական լեզվի՝ ժամանակի ընթացքում հնչյունափոխված ձեւն է, Լեւոնի կարծիքով ավելի կենցաղայնացված է, հասարակացված եւ առաջարկում է պատմությունը չարբագրել եւ խաղաքը կոչել նախնական անունով՝ Կումայրի: Ի դեմ, խաղաքային թերթը կոչվում է «Կումայրի», «Կումայրի» է կոչվում նաեւ պատմա-ճարտարապետական արգելոցը:

Կումայրի բնակավայրի տեղանքում հնագետներ Աշխարհբեկ Քալանթարի, Հ. Մարտիրոսյանի կողմից տարբեր շրջաններում կատարված պեղումներից հայտնաբերել են վաղ երկաթի դարի ձուլման արհեստանոց, կացնի ձուլման կաղապար, բրոնզի, խարի իրերի տեսականի՝ մ. թ. ա. 3-րդ հազարամյակից մինչեւ միջնադար թվագրվող:

Քաղաքի կարգավիճակ Կումայրին ստացավ ռուսական տիրապետության շրջանում, երբ 1837-ին Նիկոլայ ցարը այցելեց Գյումրի եւ բնակավայրի դիրքը հավանելուց հետո այն վերածեց բերդ-ամրոցի, սկսվեց Սեւ բերդի կառուցումը, իսկ խաղաքը իր կնոջ՝ Ալեքսանդրայի անունով կոչեց:

- Գյումրիի լավագույն շրջանը Ալեքսանդրապոլի շրջանն է եղել, հարյուրից ավելի արհեստներ ու արվեստներ են ծաղկել: Այդ շրջանում Արեւմտյան Հայաստանից՝ Կարսից, Էրզրումից, Կարինից ընտանիքներ են տեղափոխվել Գյումրի՝ իրենց հետ բերելով տեղական շատ ավանդույթներ՝ արհեստագործական, շինարարական, ճարտարապետական: Քաղաքային կյանքում արհեստավորական համքարություններ էին ձեւավորվել, որոնք կատարել են տեղական ինքնակառավարման մարմնի դեր: Դրանց գլուխը վարպետաց վարպետն էր, որ պատասխանատու է եղել ոլորտի ապրանքի որակի, հումքի բաշխման, նույնիսկ սոցիալական խնդիրներ են լուծվել: Համքարությունների մեջ ոչ միայն արհեստավորներ էին մտնում, այլեւ իրենց ընտանիքները: Գյումրին թե՛ խաղաքային տնտեսության, թե՛ մշակութային առումով կազմակերպված խաղաք է եղել:

Գյումրեցին շատ ուրույն ձեւով է ընկալել օտար մշակույթը: Առաջին հայացքից խաղաքը գրավում է ճարտարապետական ամենատարբեր ոճերով՝ այստեղ կան թե՛ ռուսական խաղաքաշինության ավանդույթներ եւ եվրոպական կլասիցիզմ, թե՛ նեոկլասիցիզմ, թե՛ XX դարասկզբի մոդեռնիզմ թե՛ խորհրդային շրջանի կոնստրուկտիվիզմ: Ազնվական է համարվել արբաստ, սեւ խարը՝ կարմիրի համադրությամբ: Գյումրեցի արհեստավորները այդ օտար հոսանքներն այնպիսի վարպետությամբ են յուրացրել, տեղայնացրել, որ ստեղծել են ազգային բնիկ ճարտարապետական միջավայր:

Գյումրեցիք հաճախ են ասում, թե Գյումրին աշխարհի կենտրոնն է, իմ կարծիքով, իրենք նկատի ունեն խաղաքի ու նրա մարդկանց բաց լինելը, օտար մշակույթին հաղորդ, ընկալելի լինելը: Գյումրեցին համահարթեցում չի սիրում, ամեն դեպքի մեջ ինքնատիպություն է դնում, շենքի պատուհան կլինի, ճաղաշար, դրվագազարդված դարպաս, թե մի այլ տարր, իրարից պիտի տարբերվեն: Շինությունները կառուցվել են ըստ գեղեցիկի օրենքների: Ամեն մի շենքի վրա թե՛ ճարտարապետների, թե՛ արհեստավոր շինարարի, երկաթագործի, փայտագործի, թե՛ նկարչի համալիր աշխատանք կա: Ու հետաքրքրականը, որ գյումրեցին այսպես է կառուցել ոչ միայն թանգարանները, գիմնազիայի շենքը, կամ նկարչական դպրոցը, այլեւ՝ սովորական բնակելի տները:

Սա բնական վիճակ է, գեղեցիկի բնածին զգացողություն, խաղաքի մշակույթի կարեւոր բաղադրամաս: Այդ միջավայրում ապրողը ոչ այնքան սովորում, որքան կրում է դա ու ինքն էլ դառնում դրա տարածողը: Ես էլ եմ հո ծնունդը Գյումրի ու իմ փոքրիկ պատմությունը վերադարձնում եմ քեզ, իմ տաղը գրում հո պատմության էջերին...

«Իմ Գյումրի» նկարաշարը

- Կարծում էի՝ գիտեի իմ խաղաքը, բայց նորից ու նորից խայլերով սալահատակված փողոցներով, որ շատ նման են Կարինին ու Էրզրումին, ընչահեղձ էի լինում այդ գեղեցկությունից: Հասկացա, որ ապրելով այստեղ՝ մենք չենք ճանաչում մեր միջավայրը: Իմ խաղաքի գեղեցկությունը զգացի նաեւ, երբ Հակոբ Հակոբյանի «Փողոց Լենինականում» նկարը տեսա:

Լեւոն Լաճիկյանի գծանկարների այս շարքը հին Գյումրու ճարտարապետության վերարտադրություններ են, նուրբ ու ճշգրիտ գծագրումներով, որտեղ նա փորձել է պահպանել կառույցի յուրահատկությունը մանրամասն, դեսալ՝ կամարներ, ժանեկազարդ դռվագավոր դռներ՝ փայտե երեսակներով, նախշազարդ խիզեր, դրանցից շատերը ներկայացված են վերականգնած, իրենց նախնական կատարյալ տեսքով, դրանք այդպիսին տեսնելու հեղինակի ցանկությամբ:

Այս նոր հայացքը հին Գյումրուն, նոր խոհեր ու վերաբերմունք են առաջացնում, պարտի նոր զգացողություն ծնում, որ, իհարկե, սիրո արտահայտություն է: Հեղինակը շարքը շարունակելու է՝ խաղաքային ավելի ամբողջական միջավայր ստեղծելու մտադրությամբ: Դրանք բակերի, փողոցների, էլեկտրասյուների, խաղաքի բնակեցված վայրերի վերարտադրություններ են լինելու՝ ավելի զգայուն խաղաքի ներքին կյանքին, այնտեղ ապրող մարդու իրական վիճակներին: Գյումրու մասին պատմելիս՝ Լեւոնը հաճախ իր այցելած արեւմտյան խաղաքներն էր հիշում՝ Վենետիկը, Բուդապեշտը, Փարիզը, Պրահան.

- Սա անվերջ վերադարձ է: Տարիներ անց, ավելի հասուն տարիքում, երբ աշխարհի շատ խաչմերուկներում ես լինում, վերադառնում ես հո խաղաք ու տեսնում, որ նա չի զիջում օտարներին: Շարունակելու եմ այս շարքը՝ ստեղծելով խաղաքի միջավայրը, զգալ ու զգացնել տալ, որ Գյումրին հպարտանալու խաղաք է: Մենք ունենք այս հարստությունը, որը պահպանության, ուշադրության կարիք է զգում»: ■

ՕՐՎԱՆ ՓԱՄՈՒՔ...

Ջ էջից

են ժողովրդավարության ալիքից եւ նոր դասակարգերի ծաղկումից:

Շ.- Ուրեմն դուք էրդողանին եւ նրա աջակիցներին խողարկված իսլամիստներ չե՞ք համարում:

Օ. Փ.- Այդպես են համարում կարծրթեւային ֆեմալիստները: Նրանք չգիտեն ինչ անել նորաթուխ անատոլիական պահպանողական դասակարգերի հետ: Նրանք զինվորականների գիրկն են ընկնում, հույսները դնում ամբողջատիրությունը ամրապնդելու եւ ավելի շատ ուժ բանեցնելու վրա: Որպես հետեւանք, նրանցից ոմանք (ոչ բոլորը) նույնիսկ դեմ են Եվրոմիությանը անդամակցելուն: Նրանք մերժում են Եվրոպային, որովհետեւ վախենում են նոր ազդաջացող պահպանողական անատոլիական բուրժուազիայից: Քեմալ Աթաթուրքը հարյուրներ կլիներ Եվրոմիությանը մաս կազմելուն: Իսկ ներկայիս իշխող էլիտան դավաճանում է նրան, որովհետեւ վախենում է իշխանությունը կորցնելուց:

Շ.- Կարծո՞ւմ եք, որ երկու կողմերը հաշտության եզրեր կգտնեն:

Օ. Փ.- Ես գրող եմ: Գրողներին համարում են մոլագար, ծայրահեղական կամ սատանայական էակներ: Բայց ես համերաշխության, ներդաշնակության կողմնակից եմ: Հույս ունեմ, որ Թուրքիայում այս տարբեր դասակարգերը կկարողանան լեզու գտնել իրար հետ եւ կձեւավորեն նոր «մշակույթ»: Դրանում եմ տեսնում Թուրքիայի ապագան:

Շ.- 1995-ին դուք մի հոդված էիք տպագրել «Շտիգելում» Թուրքիայում տիրող «թունավոր» մթնոլորտի մասին: Կարծես շատ բան չի փոխվել այդ օրվանից:

Օ. Փ.- Կասկած չկա, որ որոշակի առաջընթաց կա: Բայց մենք կարող ենք, պարտավոր ենք եւ պետք է գնանք ավելի առաջ: Այն փաստը, որ քրդական հարցը դեռ լուծում չի ստացել, նյարդայնացնում է իշխող էլիտային եւ դյուրաբեկ դարձնում նրա դիրքերը: Նրանք (վերում նկարագրված այդ մարդկանց որդիներն ու դուստրերը) կորցրել են ինքնավստահությունը, չնայած շատ փող են կարողացել դիզել: Իրենց անհանգիստ վիճակից ելք գտնելու նկատառումներով «իրար միս են ուտում», ամեն մեկը փորձում է մյուսին բանտարկել: Անհանդուրժողականության այս խաղաքականությունը թունավորում է ամբողջ մթնոլորտը:

Շ.- Թուրքիայում բավական մեծ թվով թշնամիներ եք վաստակել Ձեր անկեղծ խոսքերի համար, ներառյալ այն արտահայտությունները, որոնք վերաբերում են Ա. աշխարհամարտի օրերին Հայոց ցեղասպանությանը: Դուք հավանաբար նաեւ էրգենեկոնի՝ այդ ծայրահեղ-ազգայնական խմբավորման սեւ ցուցակի մեջ եք:

Օ. Փ.- Իմ դիրքորոշումը հստակ է: Ես կողմնակից եմ Եվրոպային ինտեգրվելուն, ժողովրդավարության եւ բազմակարծության ամրապնդմանը: Դրա համար էլ ինձ ուզում են սպանել: Թիկնապահներ եմ պահում: Առաջվա նման Ստամբուլի փողոցներում հաճախակի չեմ հայտնվում: Սա է այն գինը, որ ես ստիպված եմ վճարել:

Շ.- Ձեր երկրի այս մութ ծալքերը նույնպե՞ս տեղ են գտնելու ձեր ծրագրած իրական «Անմեղության թանգարանում»:

Օ. Փ.- Գիրքը կյանքն է ներկայացնում ընդհանրապես, իսկ երջանկությունը կյանքի հիմնական էությունն է: Սա է իմ գրքի սյուժեն եւ դա կլինի նաեւ գլխավոր թեման իմ ապագա թանգարանում այստեղ՝ Ստամբուլում:

Թարգմ.՝
ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ

Մտորումներ

Կանչելու համարձակությունը

Լորի Պեսիկյանը ամերիկահայ անգլիագիր լուսագրող-բանաստեղծուհի է: Այս մտորումները՝ տպագրված «Արմինյն Ռիփորթեր» շաբաթաթերթում, ԱՄՆ նախագահական վերջին ընտրություններին երկրում տիրող մթնոլորտի ու տրամադրությունների ազդեցության՝ հույսի ու կանչի որոնումներ են: Թերեւս իր բանաստեղծական խառնվածքից՝ նա խաղաղական-հաստատական մթնոլորտի շիկացումներին զուգադրում է բանաստեղծական պատկերաձեւեր: Ու հետաքրքրական է, որ իր որոնումներին համահունչ տրամադրություններ գտնում է Յուրի Սահակյանի բանաստեղծություններից մեկում՝ Դայանա Տեր-Հովհաննիսյանի թարգմանությամբ:

Մեծ իրադարձություններից կամ փոքր տնակատարություններից, մեծ խոչընդոտներից կամ փոքր փորձություններից հետո ես դիմում եմ պոեզիային: Դիմում եմ պոեզիային, ինչպես մարդ գնում է մեծ եղբոր կամ քրոջ մոտ, նստում ու լսում եմ անհամբեր ունկերով, խոնարհ աչքերով: Պատանեկության տարիներից սկսած՝ ես դիմում եմ գրադարակիս գրքերին, իմ սիրած բանաստեղծներին՝ տեսնելու, թե նրանց գրվածքներն ինչ-որ կերպ կարտացոլե՞ն այն, ինչ որ ես մտածում եմ կամ զգում եմ: Թերեւս դա մի ուղի է՝ հավատիանալու, որ մենք մենակ չենք մեր զգացմունքների կամ ռեակցիաների մեջ, եւ որ մենք կարող ենք առնչվել մեզնից առավել, ավելի մեծ մի բանի:

Նոյեմբերի 4-ի նախագահական ընտրությունը, թվում է, ոչ միայն այս տարվա, այլեւ մեր պատմության ամենակարեւոր իրադարձություններից է: Ափխարհի մեծ մասը ցնծաց, մինչ, անշուշտ, ուրիշները հիասթափվեցին, որ իրենց թեկնածուն չհաղթեց: Մի բան հաստատ է, եւ դա այն զգացումն է, որ

կար մի կանչ եւ պատասխան՝ մի որոշակի կամ մեկ այլ ձեւի մեջ:

Քարոզարշավի ողջ աղմուկ-աղաղակի մեջ այնքան շատ եզրեր եւ ուղերձներ էին շարունակաբար օգտագործվում, այդ թվում՝ «Հույս», «Փոփոխություն», «Առաջադիմություն» եւ այլ լավատեսական ընդհանրացումներ: Արդյունքները հայտարարելուց հետո սովորականի պես սկսեցի աչքի անցկացնել իմ հավաքածուները՝ տեսնելու համար՝ կա՞ մի բանաստեղծություն կամ բանաստեղծություններ, որ կարտահայտի այն, ինչը, թվում է, առկա է օդում՝ Միացյալ Նահանգներից մինչեւ հեռավոր երկրները:

Անշուշտ, ես շատ բանաստեղծություններ գտա, որ ճնարկում են հույսը եւ հաղթանակը եւ նման լավ զգացումները, սակայն Յուրի Սահակյանի ներքոբերյալ բանաստեղծությունն ինձ կարծես հիշեցրեց այն, ինչը ես ուսանել էի այս ժամանակամիջոցում: (Իհարկե, ես գաղափար չունեմ, թե Սահակյանն ինչ կզգար այս ընտրությունների վերաբերյալ): Սա մի բանաստեղծություն է, որը հիշեցնում է ընթերցողին, որ երբ մենք ուզում ենք, որ ականջալուր լինեն մեր կանչին, մենք ընդամենը պիտի կանչենք եւ համբերատար սպասենք պատասխանին.

Կանչիր, անպայման մեկը կլսի:
Ծառերը ծաղկում են գարնանը:
Գետերը վարարում են:
Կանչիր, անպայման մեկը կլսի...

Վերադառնում են թռչունները չվող,
Վերադառնում է շոգը արեւի
Վերադառնում են երազները
նույնպես:
Կանչիր, անպայման մեկը կլսի...

Ճանապարհներն են երկարում
անվերջ,
Բոլորն էլ սեր ու տուն են երազում:
Կարոտն է շրջում մայրամուտի մեջ:
Կանչիր, անպայման մեկը կլսի...

Բանաստեղծ եւ թարգմանիչ Յուրի Սահակյանը ծնվել է 1937-ին, Լեռնային Ղարաբաղում: Այս կարճ բանաստեղծության մեջ մենք տեսնում ենք, որ Սահակյանը գործածում է «կանչիր» բառի կրկնությունը՝ ստեղծելու համար մեզ՝ ընթերցողներիս ուղղված կանչելու սեփական տարբերակը: Եվ խոսողը, յուրաքանչյուր տան մեջ, հավատացնում է, որ «անպայման մեկը կլսի» այդ կանչերը, այդ գոչյունի ձայնը: Թեեւ Սահակյանը չի հենվում սոսկ ընդհանրացումների վրա: Նա մեզ տալիս է նաեւ հատուկ պատկերներ, ինչպիսիք են «ծառերը» եւ «գետերը»: Նա մեզ հիշեցնում է բաներ, որոնցից մենք միշտ կախված ենք եղել, լինի հարավ չվող թռչունների վերադարձը կամ մայր մտնող արեւը: Այլ կերպ ասած, եթե մենք վստահում ենք նման բաների, մենք պետք է վստահենք նաեւ, որ կանչն, ի վերջո, պատասխան կստանա:

Երբ կարդացի Սահակյանի «Կանչիրը», ես զգացի նրա աջակցությունն ինձ՝ որպես բանաստեղծի: Այս գրվածքն առաջարկում է, որ մեկ անգամ կանչելը բավարար չէ: Շատ ինչպես կյանքի փուլերն են կրկնվում, մենք նույնպես պետք է կրկնենք մեր կանչերը՝ մեր ցանկացածին հասնելու համար: Լուռ մնալով՝ ոչնչի չես հասնի: Մեկ անգամ եթե մենք կաղ ենք ստեղծում մյուսի հետ, հույսն է ներխուժում եւ սկսվում է հաղորդակցության պրոցեսը:

Սահակյանի բանաստեղծությունից իմ ձեռքբերումը նման է այն բանին, թե ես ինչ սովորեցի՝ դիտելով եւ մասնակցելով այս վերջին քարոզարշավին եւ ընտրություններին: Համարձակություն կա մեր որոշում կայացնելու մեջ, որ մենք չպետք է հանգիստ մնանք ոչ միայն որպես այս պետության, այլեւ աշխարհի քաղաքացիներ: Կարեւոր չէ, թե ում ենք քվեարկել կամ ում ենք ծափահարել, ինչ-որ բան պետք է ասել՝ ձայնելու համար այն անունը, որը մենք ցանկանում ենք, այն արդյունքը, որին մենք սպասում ենք: Թեեւ նախագահական քարոզարշավն այժմ ավարտված է, ես համոզված եմ, որ կա մի ավելի մեծ քարոզարշավ, որը շարունակական է եւ կայուն՝ մարդկային ցեղին մաս կազմելու քարոզարշավը: Բարեբախտաբար, ես շատ «ծառեր» եւ «արշավներ» ունեմ ինձ մոտ՝ բանաստեղծությունների տեսքով, եւ օրեցօր նրանք կանչում են ինձ տարբեր լեզուներով, տարբեր ձեւերի մեջ, բայց միշտ համարձակությամբ՝ տողերի արանքում...

The Armenian Reporter
Անգլերենից թարգմանեց
ԱՐԾՎԻ ԲԱԽՇԻՆՅԱՆԸ

Երբ ցինիզմը, իրոք, սահմաններ չի ճանաչում

Ղարաբաղի գրական ջոկատի ղեկավարի նախաձեռնությամբ վերջերս արշավ է սկսվել ԼՂՀ բարձրագույն պարգեւի՝ «Մեսրոպ Մաշտոց» շքանշանի արժանացած, Արցախում հարգված եւ սիրված գրող Վազգեն Օվյանի անվան ու գրական վաստակի դեմ: Օգտագործելով իր անձնական-մտերիմ կապերը՝ ԼՂՀ ԳՄ նախագահը զրպարտագիր է տպագրել տվել նաեւ «Գրական թերթ»-ում: Արցախում ճանաչված ու հարգված մտավորականների ստորագրությամբ սույն հոդվածը պատասխանն ու գնահատականն է կատարվածին:

Արցախի գրողների միության նախագահությունը վերջերս մի աննախադեպ արշավ է սկսել գրող, հրապարակախոս Վազգեն Օվյանի գրական ժառանգության դեմ:

Եթե փորձենք վերհիշել, թե վերջին անգամ երբ է որեւէ ստեղծագործական կազմակերպության ղեկավար մարմին քաղաքական բնույթի գնահատականներ տվել որեւէ հեղինակի վաստակին, ապա ցավով պիտի արձանագրենք, որ նման բան եղել է միայն անցյալ դարի խորհրդային իրականության մեջ: Մեր գրական եւ ստեղծագործական կոչվող կազմակերպությունն, այսպիսով, անկախ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային կյանքում փորձել է վերականգնել «հին, բարի ժամանակների ավանդույթը»:

Այս պարագային, սակայն, համեմատությունը տեղին չէ, քանի որ նախկինում ամեն ինչ արվում էր իշխանությունների եւ կոմունիստական կուսակցության պարտադրանքով. Բերիայի անմիջական ցուցումով էր, որ Հայաստանի գրողների միությունը «նացիոնալիստական» էր որակում Չարենցի «Գիրք ճանապարհի» ժողովածուն, իսկ Պաստերնակի «Դոկտոր Ժիվագո» վեպը «հակախորհրդային» ճանաչվեց նախ ԽՄԿԿ Կենտկոմի, ապա նոր՝ ԽՍՀՄ ԳՄ նախագահության կողմից:

Որեւէ իշխանական ասյան, որքան հայտնի է, ԼՂՀ անկախությունից ի վեր Վազգեն Օվյանի գրական վաստակը վերանայելու խնդիր չի հարուցել: Ընդհակառակը, ծննդյան 70-ամյակի կապակցությամբ գրողը հետմահու արժանացել է պետական բարձրագույն պարգեւի՝ «Մեսրոպ Մաշտոց» շքանշանի, մայրաքաղաքի փողոցներից մեկը կրում է նրա անունը: Գուցե այստե՞ղ է Վազգեն Օվյանի հանդեպ անհանդուրժողականության իրական պատճառը: Չենք ուզում կանխակալ եւ աչառու լինել, բայց ստիպված ենք ընդգծել, որ, այո, ի տարբերություն որոշ «կենդանի մեռյալների», Վազգեն Օվյանը այսօր էլ ապրող հեղինակ է, նրան կարդում են, նրա հեղինակած բանաստեղծությունները՝ արտասանում: Եւ եթե դա հարուցում է ոմանց զայրույթը, ապա գրողը մեղք չունի. «ծանիր զքեզ»՝ ասում էին հները: Նշանակում է՝ ընթերցող հանրությունը ներկա գրական գործունեությունից վեր է դասում անցյալի իրական արժեքները եւ իմաստ չունի «սուր ճոճել». ժամանակը ամեն ինչ իր տեղն է դնում: Պետք է հուսալ, որ Վազգեն Օվյանի դեմ այսօր «սուր ճոճողները» վաղը նույնպես հիշվելու են, եթե կարողանան հասու լինել մի ճշմարտության. գրականության արժեքը ոչ թե պարտադրվում, այլ նվաճվում է:

Հարցազրույցներից մեկում Հրանտ Մաթեւոսյանը ասում է. «Գրականությունը պետք է լինի իմ մասին, պիտի հասցեագրված լինի ինձ՝ Երեւան, Պուշկինի փողոց, թիվ երեք, Հրանտ Մաթեւոսյանին...»: Վազգեն Օվյանը ստեղծել է հասցեական, հասցեագրված, հասցեատեր գրականություն: Գուցե հասցեատերերից են նաեւ Արցախի ԳՄ նախագահության որոշ անդամնե՞ր: Գուցե կարդում եւ ճանաչո՞ւմ են իրենց: Գուցե ոմանք հասկանում են, որ Վազգեն Օվյանի ուրիշ հասցեատերը նույնպես Վազգեն Օվյանի երկերում ճանաչո՞ւմ են իրենց, տեսնո՞ւմ են իրենց իրական դեմքը: Գուցե այդպես է, բայց ի՞նչ կարող ես անել, եթե գրողը լավ է տեսել իր ժամանակը եւ իր ժամանակի մարդուն: Անմնելի է գրողի տեսողականության գաղտնիքը: Եւ հենց դրանով է նա անհատականություն:

Խելամիտները սովորաբար նման դեպքերում կամ լռում են, կամ «հագնում այլ հասցեատիրոջ քողամիդ»: Արցախի ԳՄ նախագահությունը, ցավոք, այնքան խելամիտ չգտնվեց, որպեսզի Վազգեն Օվյանի հետմահու ժողովրդականության «տերը դառնար»: Նա, ընդհակառակը, «պատերազմ հայտարարեց» Վազգեն Օվյանին: Եւ, բնականաբար, չարաչար պարտվեց: Ու թեեւ իր «կորպորատիվ» եւ «համմարային» մամուլում նա աղաղակում է, թե Դավիթ Միքայելյանի «Երբ ցինիզմը սահմաններ չի ճանաչում» կեղծագրությունը «լայն արձագանք է գտել» հայ մտավորականության եւ հանրության շրջանակներում, փաստն այն է, որ երեւույթի հանդեպ ընդհանրական վերաբերմունքը մերժողական է:

Ցմանրանանք, չիջնենք Արցախի ԳՄ նախագահության, «Եղիցի լույս» պատշտոնաթերթի գլխավոր խմբագրի ու ԳՄ վարչության քարտուղարի պատշտոն սացած մակարդակին եւ ավելի խիստ բնութագրումներ չանենք: Բավարարվենք նրանով, որ Արցախի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ուսանողները գրադարաններում այսօր փնտրում են Վազգեն Օվյանի գրքերը: Եւ դա այն դեպքում, երբ պետական միջոցներով տպագրված բազմաթիվ հաստափոր հատորների կողքից նույն ուսանողությունն անցնում է անտարբերությամբ:

Սա է, ահա, իրողությունը: Եւ այս վերաբերմունքն է թույլ տալիս հուսալ, որ «գալիքի գանգրահեր տղան» լինելու է ավելի ազատամիտ, անաչառ ու անկեղծ եւ իր գնահատականները տալիս ելնելու է ոչ թե սոցիոլոգական նոպատակահարմարությունից, ինչպես այսօր, դժբախտաբար, իրենց թույլ են տալիս որոշ տիտղոսակիր «գրականագետներ», այլ՝ իրական արժեքներից:

Պետք է խորապես ափսոսալ, որ Վազգեն Օվյանի դեմ այս արշավի ընթացքում նրա գրական վաստակին, նրա հանրային անբասիր անվանը հրապարակավ պատշտպան չկանգնեց ավագ սերնդի եւ ոչ մի գրող ու մտավորական: Բացառությունը Եղիշե Սարգսյանն էր: Էլ ավելի ցավալի է, որ Արցախի ԳՄ նախագահության քարոզարշավին միացան գրական-ստեղծագործական հավակնություններ ունեցող որոշ անձինք, ինչը նշանակում է, որ երկրի անկախության, ազատության եւ ազատամտության հետ նրանք դեռ հարաբերվում են ըստ «գրական կյանքի հիերարխիայի»՝ մեռցնելով սեփական անհատականությունը, իրենց դատապարտելով ամլության. որովհետեւ ինչ ստեղծագործական երկուսի մասին կարող է խոսք լինել, եթե մարդը գրիչ է վերցնում եւ կատարում «վերեւից» իջեցված պատվերը, զրպարտագիր գրում կամ ստիպված ստորագրում մի տեքստի տակ, որ ուրիշն է հեղինակել. «Եղիցի լույս» պատշտոնաթերթի՝ Վազգեն Օվյանի ստեղծագործության եւ անձի մասին բոլոր հրապարակումներում ուշադիր ընթերցողը կգտնի մի շարք կրկնվող ձեւակերպումներ, թեեւ դրանց տակ դրված են տարբեր ստորագրություններ:

Այս ամենից կարելի է հանգել միայն մի հետեւության. Արցախի գրական անդամատանում «փչում են խորշակաբեր քամիներ», որ ամլացնում են բոլոր ծիլերը: Եւ անտրամաբանական ու հանրայնորեն դատապարտելի է հատկապես այն, որ այդ ամենը, կամա թե ակամա, արվում է նորանկախ երկրի պետական սուղ միջոցների օգտագործմամբ. ԳՄ ղեկավարն այսօր ստանում է նախարարական, վարչության քարտուղարը՝ փոխնախարարական աշխատավարձ, բյուջեն ֆինանսավորում է «Եղիցի լույս» եւ «Պըլը Պուտի» պարբերականները, որոնք իրականում, բացի նոմենկլատուրային հեղինակների «ներքին գրաքննություն անցած» ստեղծագործություններից ու «հրապարակախոսական հոդվածներից», ուրիշ ոչինչ չեն տպագրում:

Հանրությունը կարող էր հասկանալ Արցախի ԳՄ նկատմամբ առանձնահատուկ վերաբերմունքի կարեւորությունը, եթե կազմակերպության նախագահությունը չանցներ «թույլատրելի բացառիկության» սահմանները: Վազգեն Օվյանի դեմ նրա կազմակերպած անփառունակ արշավը ապացուցեց, որ Արցախի ԳՄ նախագահությունը սեփական ցինիզմը փորձում է պարտադրել հանրությանը, ուստի վերջինս, որպես այդ ճնշումը արժանապատվորեն դիմագրավող ընդհանրություն, փորձում է իրավասու է իր ներկայացուցիչների միջոցով ԼՂՀ իշխանություններին հորդորել, որպեսզի դադարեցվեն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գրողների միությունը՝ անվանապես հասարակական, իրականում՝ նեղ կորպորատիվ կազմակերպությանը պետբյուջեից տրվող հատկացումները՝ մինչեւ, ինչպես հայտնի երգում է ասվում՝ «կբացվի առավոտը»:

ԼՂՀ հասարակական եւ մտավորական շրջանակների անունից՝

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ, բանաստեղծ,
ԼՂՀ կառավարության, Եղիշեի անվան մշակութային դափնեկիր, ՆՎԱՐԴ ԱՌԱՏՐՅԱՆ, Հանրապետության ժող. արտիստուհի, Ռոմելա Դաղայան, վաստակավոր մանկավարժ, ԼՂՀ ԱԺ պատգամավոր, ՄԻԼՎԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ, բանաս. գիտութ. թեկնածու, ԱՐՊՀ-ի դոցենտ, ԱՐՏԱԿ ԳՈՒԼՅԱՆ, կենս. գիտութ. դոկտոր, պրոֆեսոր, ՍՎԵՏԼԱՆԱ ԴԱՎԹՅԱՆ, հայոց լեզվի եւ գրակ. ուսուցչուհի, վաստակավոր մանկավարժ, ՄԵՐԳԵՅ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ, գեղանկարիչ, ԼՂՀ կառավարության, Եղիշեի անվան մշակութային դափնեկիր, ՅՈՒՇԱ ՂԱՀԱՐՅԱՆ, մշակույթի վաստակաշատ աշխատող, Արցախյան շարժման ակտիվիստ, ԱՐՄԱՆ ՂԱՆԻԵԼՅԱՆ, բանաստեղծ, Արցախյան պատերազմի վետերան, ՀՐԱՉԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, պատմաբան

Մինչեւ ուր կիջնեն նավթի գները

Համաշխարհային ֆինանսական ճգնաժամին, ինչպես եւ սպասելի էր, հետեւեց տնտեսականը: Եթե ֆինանսական ճգնաժամի հետեւանքները հաղթահարելի են, ապա տնտեսական ճգնաժամը խորացման միտում ունի: Պատճառը ֆինանսական ճգնաժամի հետեւանքով տուժած բանկային համակարգն է, որը բերել է վերջինիս ակտիվների կրճատմանը, ինչն էլ իր հերթին հանգեցրել է վարկավորման համակարգի թանկացմանը: Այսինքն՝ բանկային էժան վարկեր այլեւս չկան, հետեւաբար վարկային առեւտրի ծավալների անկում է գրանցվում աշխարհի բոլոր երկրներում, հատկապես զարգացած այն երկրներում, ուր բանկային համակարգը լուրջ դերակատարում ուներ սպառողական ապրանքների առեւտրի ծավալների ավելացման գործում: Հետեւաբար բանկային վարկերի տոկոսների ավելացումը եւ դրանց տրամադրման պայմանների խստացումը, ինչը զանգվածային բնույթ է կրում, գումարած ամերիկյան եւ եվրոպական խոշոր մի շարք ընկերությունների սնանկացումը, հանգեցրել են զանգվածային գործազրկության, ինչն էլ բերել է մի շարք ապրանքների պահանջարկի կրճատմանը: Ինչպես նշում են եվրոպական եւ ամերիկյան խոշոր ավտոարդյունաբերողները, էականորեն նվազել է ավտոմեքենաների պահանջարկը, ինչն էլ իր հերթին հանգեցրել է նավթամթերքների պահանջարկի նվազմանը: Այսօր արդեն մեկ բարել նավթի գինը հասել է վերջին 2 տարիների իր նվազագույնին՝ 40 դոլարի, սակայն, կարծում եմ, սա նավթի գնի անկման միայն սկիզբն է, քանի որ եթե Արեւմուտքի տնտեսության վրա ֆինանսական ճգնաժամի ազդեցությունն արդեն պարզ է, հետեւաբար դրա հետեւանքները՝ կանխատեսելի, ապա համաշխարհային տնտեսության մյուս հսկաների՝ Չինաստանի, Հնդկաստանի եւ Բրազիլիայի տնտեսություններում ֆինանսական ճգնաժամի հետեւանքները դեռ մինչեւ վերջ հայտնի չեն: Այսինքն՝ եթե այստեղ էլ սպառողական ապրանքների վաճառքի լուրջ կրճատում նկատվի, ապա բացառված չէ, որ նավթի գների անկումը կշարունակվի՝ հասնելով 20-30 դոլարի մեկ բարելի դիմաց: Հիշեցնենք, որ եթե այս տարվա հունիսին նավթի գինը հասել էր իր պատմական առավելագույնին՝ 147 դոլարի, ապա 2002-ին արժեր ընդամենը 25 դոլար մեկ բարելի դիմաց: Հասկանալի է, որ նավթի գների աննախադեպ անկումից առաջին հերթին տուժում են այն երկրները, որոնց տնտեսությունները լրջորեն կախված են նավթային սեկտորից: Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադն արդեն իր անհանգստությունն է հայտնել նավթի գների անկման կապակցությամբ: Այս պայմաններում ՕՊԵԿ-ը (Նավթ արտահանող երկրների կազմակերպություն) ստիպված էր 2 անգամ որոշում ընդունել կրճատելու նավթի արդյունահանման ծավալները, սակայն դրանք միայն ժամանակավոր միջոցառումներ են, որոնք ընդհանուր սպառման ծավալների անկման պայմաններում չեն կարող կասեցնել նավթի գների անկումը:

Գների անկմանը նպաստում են նաեւ Արեւմուտքում եւ զարգացած մի շարք երկրներում մշակված էներգախնայողական համակարգերը, նաեւ անցումը բիովառելիքի օգտագործման, օրինակ, Բրազիլիայում մեքենաների 60%-ը օգտագործում է հենց այդ տիպի վառելիք, եւ այլն: Ինչպես, նավթի գների անկումը հատկապես ուժեղ հարված կլինի Ադրբեջանի տնտեսության համար, քանի որ վերջինիս ներքին համախառն արդյունքի մեջ այս սեկտորը հասնում է 65%-ի, իսկ արտահանման ծավալում՝ 88%-ի: Նշենք, որ այդ երկրի բյուջեն ամբողջովին կախված է համաշխարհային շուկայում նավթի գների ձեւավորումից, հետեւաբար գների բարձրացումը եւ նավթի արդյունահանման ծավալների աճը նպաստում էին, որ այդ երկիրը հայտարարի տնտեսական աննախադեպ աճի մասին: Նշենք, որ այս տարի, ըստ ադրբեջանական աղբյուրների, նավթի արդյունահանման ծավալներն այդ երկրում կհասնեն տարեկան 50 մլն տոննայի, ինչն աննախադեպ է այդ երկրի նավթարդյունաբերության պատմության մեջ: Սակայն նավթի բարելի թեկուզեւ 1 դոլարի անկումը լուրջ կերպով հարվածում է այդ երկրի ողջ արդյունաբերությանը, քանի որ վերջինիս, նույնիսկ ոչ նավթային սեկտորում, օրինակ, շինարարության մեջ, առկա տնտեսական աճը նույնպես կապված է նավթադոլարների հետ, հետեւաբար այդ դոլարների հոսքերի նվազումը հարցականի տակ կդնի նաեւ այդ երկրի տնտեսության մյուս ճյուղերում առկա աճը: Ինչպես, կարող ենք կանխատեսել, որ նավթի գների հիմնական անկումը կարող է գրանցվել մոտակա օրերին՝ դեկտեմբեր-հունվար ամիսներին, իսկ հետագա հնարավոր աճը կախված է, թե տարվա վերջին տնտեսական ինչ ցուցանիշներ կգրանցվեն նավթ սպառող հիմնական երկրներում՝ ԱՄՆ-ում, Եվրոպայում, Չինաստանում, Հնդկաստանում եւ այլն: Նավթի գների անկումը պետք է ազդի նաեւ Հայաստանում բենզինի եւ մյուս վառելիքների գների վրա, ինչը առայժմ նկատելի չէ, մինչ օրս միայն արձանագրվել է բենզինի գնի 10 %-ի անկում, ինչը բավարար չէ, եւ հասկանալի է, որ գների նման դանդաղ իջեցումը կախված է միայն այդ ոլորտում առկա մենաշնորհներից: Թեեւ «Զվարթնոց» օդանավակայանն արդեն հայտարարել է մոտ 30%-ով ավիավառելիքի գների նվազեցման մասին, սակայն այստեղ եւս նվազեցնելու հնարավորությունները դեռ սպառված չեն:

Ինչպես, սկսված տնտեսական նոր զարգացումները կարող են ոչ միայն էականորեն փոխել տարածաշրջանում առկա տնտեսական հավասարակշռությունը, այլեւ քաղաքական իրավիճակը հօգուտ այն երկրների, որոնց տնտեսությունը կախված չէ նավթարդյունաբերությունից կամ դրա արտահանումից, որոնք կարող են պահպանել տնտեսական զարգացման իրենց տեմպերը հատկապես նավթի ցածր գների պայմաններում:

ԱՐՄԵՆ ՍՈՒՎԱՐՅԱՆ

Դանիական նավը փրկեց ծովահեններին

Հինգ ծովահենության դեմ պայքարի եվրոպական կենտրոն

Ադենի ծոցում դանիական ռազմանավերից մեկը օգնության է հասել եւ փրկել է աղետի ենթարկված ծովահեններին, հաղորդում է Ֆրանսիայի գործակալությունը:

Դանիական հեռուստատեսությանը վկայակոչելով՝ գործակալությունը նշում է, որ ծովահեններին փրկելուց հետո դանիական «Աբսալոն» ռազմանավը խորտակել է նրանց նավը: Ծովահեններից առգրավվել են նռնականետներ, «Կալաշնիկով» հնաձիգներ եւ այլն:

Դանիացիները կերակրել են 8 օր բաց ծովում մնացած ելուզակներին, բայց նավ չեն բարձրացրել, այլ տեղավորել են փչովի նավակներում: Մոտ ժամանակներս դանիացիները ծովահեններին կհանձնեն Եմենի իշխանություններին:

Այս տարվա սեպտեմբերից ծովահեններն Ադենի ծոցում բազմաթիվ բեռնանավեր են առեւանգել, չնայած վերջերս այնտեղ մի շարք երկրների ռազմանավերի ներկայությանը: Ելուզակների ամենամեծ ավարը սաուդյան նավթատար խոշոր նավի առեւանգումն է, որի վրա մոտ 100 մլն դոլարի նավթ կա:

Ծովահենության դեմ մղվող պայքարը հետզհետե ավելի կազմակերպված բնույթ է ստանում: Լոնդոնի արվարձաններից մեկում հինգշաբթի օրն իր աշխատանքն է սկսել ծովահենության դեմ պայքարի ԵՄ համակարգող կենտրոնը: Ֆրանսիրեսը հաղորդում է, որ կենտրոնի բացման արարողությանը ներկա են գտնվել Ֆրանսիայի եւ Մեծ Բրիտանիայի ռազմական գերատեսչությունների ղեկավարները: Արդեն դեկտեմբերին այդ կենտրոնից կհամակարգվեն ԵՄ ծովային գործողությունները Ադենի ծոցում, որտեղ սոմալեցի ծովահեններն առավել մեծ վնաս են հասցնում միջազգային նավագնացությանը եւ ծովային առեւտրին:

Սպասվում է, որ համատեղ պարեկությանը կմասնակցեն Եվրոմիության ծովուժի 5-6 ռազմանավեր: ԵՄ համատեղ ծովային գործողությունը նախատեսված է սկսել դեկտեմբերի 8-ին:

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

Գերմանացի պրոֆեսորը նսեմացրե՞լ է Աթաթուրքին

«Համբուրգեր աբենդբլաթը», վկայակոչելով թուրքական լրատվամիջոցներին, ծանուցում է, որ Թուրքիայի դատախազությունը գործ է հարուցել Բրեմենը ներկայացնող պրոֆեսոր Ռոնալդ Մյունխի դեմ՝ հանրապետության հիմնադիր Մուստաֆա Քեմալ Աթաթուրքին վիրավորելու համար: Մյունխը մեղադրվում է Եվրոխորհրդարանում անցկացված, Թուրքիայի արեւելքում տեղի ունեցած եղեռնի վերաբերյալ նիստում հնչեցրած ելույթում Աթաթուրքին նսեմացնելու համար:

Եթե Մյունխը Թուրքիա ուղեւորվի եւ նրան դատապարտեն, ապա գերմանացի պրոֆեսորին սպառնում է մինչեւ 3 տարվա բանտարկություն:

Մյունխն ասել է, թե ինքը խոսել է այժմյան Թունչելի գավառի (նախկինում՝ Դերսիմ) դեպքերի մասին, որտեղ գլխավորապես հայեր ու ալեւիներ էին ապրում: Ժամանակի ընթացքում նրանցից հազարավորներն արտաքսվել են: 1937-ին ապստամբություն եղավ, ինչը կառավարությունը արյունոտ ճնշման ենթարկեց: 10 հազարից ավելի մարդ զոհվեց:

Հիշատակված ելույթում Մյունխը դեպքերին արդարացի գնահատական է տվել եւ եզրակացրել, որ կատարվածի համար պատասխանատվություն են կրում նախկին նախագահ Մուստաֆա Քեմալ Աթաթուրքը եւ նրա վարչակազմը:

Եթե կատարվածն այսօր ինչվեր դատարանում, ապա մեղադրանքը կձեւակերպվեր որպես մարդկության դեմ կատարված ոճիր եւ մասնակի ցեղասպանություն, հայտարարել է Մյունխը:

Հետազոտության մեջ բնական է, որ պատմությունը արդի չափորոշիչների համաձայն նոր արժեւորման ենթարկվի: «Թուրքիայում պատմության վերանայում ընդհանրապես գոյություն չունի, ինչը տեսնում ենք Հայոց ցեղասպանության հարցում, ասել է Մյունխը: Բայց երկիրն ինքը պետք է պատասխանատվություն ցույց տա: Սա կարելի էր ակնկալել նաեւ մի երկրից, որը եվրոմիության անդամ է ուզում դառնալ», ասել է Մյունխը:

ԼՈՒՍԻՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

Օբամայի ընտրարշավի ընթացքում հանգանակվել է 750 մլն դոլար

Մակֆեյնը 34 միլիոն ստացավ պետությունից

ԱՄՆ Դաշնային ընտրական հանձնաժողովին երեկ ներկայացված հաշվետվությունը վկայակոչելով՝ «Նյու Յորք թայմս» թերթը գրում է, որ նորընտիր նախագահ, դեմոկրատների թեկնածու Բարաք Օբամայի ընտրարշավի ժամանակ կատարվել է 750 մլն դոլար նվիրատվություն: 2004 թ. նախագահական ընտրարշավի ժամանակ բոլոր թեկնածուները միասին այդքան գումար չէին հանգանակել:

Չնայած ընտրարշավի վերջին փուլում կատարված մեծ ծախսերին, Օբամայի ընտրարշավի հաշվի վրա դեռ մնում է 30 մլն դոլար:

Հանրապետականների թեկնածու Ջոն Մակֆեյնի ընտրարշավի ֆինանսավորումն ավելի «համեստ» է եղել: Եթե Օբաման հույսը դրել էր միայն հովանավորների նվիրատվությունների վրա, ապա Մակֆեյնն ընտրարշավի աշնանային փուլում 34 մլն դոլար պետական օժանդակության, իսկ ծախսերի հարցում բավական կաշկանդված է եղել: Այսպես, հոկտեմբեր-նոյեմբերին Օբաման ծախսել է 136 մլն, Մակֆեյնը՝ 26,5 մլն դոլար: Մակֆեյնի հաշվի վրա մնացել է 4 միլիոն, բայց միեւնույն ժամանակ նա պարտք է 4,9 միլիոն:

Առայժմ հայտնի չէ, թե Օբաման ինչպես կծախսի իրեն մնացած 30 միլիոնը: Նա կարող է այն հանձնել Դեմոկրատական կուսակցության ազգային կոմիտեին կամ կուսակցական այլ մարմինների, կամ էլ այդ գումարը պահել 2012-ի նախագահական ընտրարշավի համար: Հնարավոր է, որ այդ գումարի մի մասն օգտագործվի Օբամայի կուսակից եւ նախկին մրցակից Հիլարի Քլինթոնի 7,5 միլիոնանոց պարտքը մարելու նպատակով: Սակայն Օբամայի շտաբն իրավասու է Հ. Քլինթոնին հանձնելու առավելագույնը 2 հազար դոլար:

Երեկ հրապարակված ֆինանսական հաշվետվության մեջ հերթական անգամ ուշադրություն է հրավիրված փոխնախագահության հանրապետական թեկնածու Սառա Պեյլինի հագուստի եւ դիմահարդարման վրա կատարված անչափ մեծ ծախսերի վրա: Ընտրարշավի միայն երկու ամսվա ընթացքում Մակֆեյնի շտաբն այդ նպատակով վճարել է 110 հազար դոլար:

Ավտոարդյունաբերողներն ընդունեցին իրենց մեղքը ճգնաժամի մեջ

Ամերիկյան ավտոմոբիլաշինական խոշորագույն ընկերությունների ղեկավարները Կոնգրեսում խոստովանել են, որ «Ջեներալ մոթորսը», «Քրայսլերը» եւ «Ֆորդ մոթորսը» մեղքի իրենց բաժինն ունեն ներկայիս համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի մեջ:

«Ազգը» գրել էր, որ դեռ մի քանի օր առաջ խոշոր ընկերությունների ղեկավարները հանդես էին գալիս որպես ճգնաժամի «զոհեր» եւ Կոնգրեսից ընդհանուր առմամբ 34 մլրդ դոլար էին խնդրում իրենց գործունեությունը շարունակելու համար:

Վաշինգտոնում կոնգրեսականների հետ հերթական հանդիպման ժամանակ ավտոմոբիլաշինական ընկերությունների ղեկավարները խոստովանել են, որ մեղքի բաժին ունեն իրենց ընկերությունների ճգնաժամային վիճակի համար եւ պատրաստ են ապագայում ուղղել իրենց սխալները: Բայց «այդ ապագան հնարավոր է միայն 34 մլրդ դոլար վարկի հատկացման դեպքում»: Ավելի վաղ այդ նույն անձինք պնդել էին, թե իրենց ընկերությունները որեւէ կապ չունեն ֆինանսական ճգնաժամի հետ, նշում է «Վեստի» գործակալությունը:

«Այսօր մենք այստեղ ենք, քանի որ սխալներ ենք գործել: Բայց դրանց շնորհիվ մենք սովորում ենք, քանի որ զորավոր հանգամանքները մեզ հաստատել են անդունդի եզրը: Իսկ գլխավորն այն է, որ արժե ջանք թափել «Ջեներալ մոթորսը» փրկելու համար», իր ելույթում հայտարարել է այդ ընկերության ղեկավար Ռիկ Վագոները:

«Անցյալում մենք գնորդների հանդեպ ունեինք այսպիսի մոտեցում. եթե ստեղծենք ավտոմեքենաներ, ապա դրանք կգնեն: Մենք արտադրում էինք ավելի շատ, քան պետք էր մեր գնորդներին, իսկ հետո կտրուկ իջեցրինք գները, ինչն ազդեց փոխադրամիջոցների մնացորդային արժեքի վրա եւ վնասեց դրանց տերերին: Այժմ մենք վարում ենք ագրեսիվ քաղաքականություն, որի նպատակն է արտադրության ծավալները համապատասխանեցնել գնորդների պահանջմունքներին», խոստովանել է «Ֆորդի» ղեկավար Ալան Մուլալին:

Իրականացող երազանքը

«Մոսկվայի վիրտուոզներ» նվագախումբը իր գոյության 30-ամյակը նշում է համերգաշարով: Այն ընդգրկում է ինչպես Կանադան ու Միացյալ Նահանգները, Հունաստանն ու Ֆրանսիան, այնպես էլ հայրենի երկրի՝ Ռուսաստանի Դաշնության հեռավոր բնակավայրերը՝ Սախալինն ու Ցուկոտկան...

Երազանքս էր գնացքով անցնել երկրով մեկ ու ամենահեռավոր բնակավայրերում էլ համերգներ տալ: Համերգները մնացին, փոխադրամիջոցը փոխվեց՝ Ցուկոտկա հասանք, ինքնաթիռով, հետո ուղղաթիռով: Ցուկոտկան, որ Մստիսլավ Ռոստրոպովիչն ուղղակի զարհուրանք էր համարել ու հրահանգել իր դաշնակահարին այնքան բարձր նվագել, որպեսզի Միացյալ Նահանգներում էլ լսվի, հիմա ուրախացնում, զարմացնում է առաջընթացով եւ՝ տպավորիչ լինելու չափ: Ամենակարեւորը ճիշտ ուղղությամբ ընթանալն է:

Միջավայր ստեղծող մարդը

Սպիտակի երկրաշարժի 20-ամյա տարելիցին, ինչպես եւ անմիջապես երկրաշարժից հետո, Հայաստանում է Վլադիմիր Սպիվակովը: Նրա ներկայությունն իմքնին ի բարին գործելու միջավայր է ստեղծում եւ լսելու, ընդ որում ոչ միայն երաժշտություն, այլեւ հենց նրա խոսքը լսելու ցանկություն առաջացնում: Ու երեւի հենց դա էլ նպաստեց, որ երեկ «Էրեբունի» հյուրանոցում կայացած ասուլիսին նրա ասելիքը, որքան էլ ուղղորդվեց հարցերով, այնուամենայնիվ նմանվեց երկար սպասված մենախոսության: Այն սկսվեց Համայն Ռուսիո պատրիարք Ալեքսի Երկրորդի հիշատակը հարգելու լռության րոպեից: Մնացյալը, որը խմբագրմամբ, ներկայացնում ենք ուղիղ խոսքով:

ԴՈՍՏԼՈՒԵ

Հոռետեսական իմացություն եւ լավատեսական հավաս

Երկրաշարժից հետո Գյումրիում կյանքի մնացորդների ականատեսը եղանք...

Այն վերքերը, որ Գյումրին տվեց, որքան էլ աղաղինվում, միեւնույն է՝ շարունակում են հիշեցնել իրենց գոյությունը: Ուրախությանը սրտակից լինելը հազարապատկում է ուրախությունը, ցավին սրտակցելն, իրոք՝ մխիթարում: Ի վերջո մարդկային ողբերգությանը սրտակից լինելը Հայաստանն ինձ համար հայրենիքի վերածեց:

Տպավորվեց, այս անգամ էլ տեսանս Գյումրին վերականգնված թե համարեմ՝ սխալված կլինեմ, բայց որքան էլ իմացությունս հոռետեսական, այնուամենայնիվ հավաս լավատեսությամբ է լի: Այնտեղ շատ տաղանդավոր երեխաներ տեսա: Նրանցից շատերը համերգի ընթացքում բեմում նստած ունկնդրեցին եւ համերգից հետո էլ նվագեցին մեզ համար: Իսկ նրանց՝ երեխաներին հարկավոր է մշտապես հավատացնել, որ օտարներն էլ իրենց սիրում են եւ յուրաքանչյուրի մեջ հանճար տեսնում: Փորձում եմ իմ գործունեությամբ էլ դա աղացուցել: Միջակություններ հենց մեծերն են ստեղծում: Չէ՞ որ ասում են՝ դեռ չծնված յուրաքանչյուր երեխայի հրեշակն այցելում ու ամեն ինչի մասին շշնջում է նրան: Հարկ է, որ բարի էներգետիկան էլ սնուցվի:

Բարձրաձայնելն ավելորդ է

Իսկական արվեստագետի կողքով ոչինչ հենց այնպես, անհետ չի անցնում: 1988-ի դեկտեմբերի 9-ին «Մոսկվայի վիրտուոզները» Ֆլորենցիայի Սան Լորենցո եկեղեցում համերգ պետք է տար: Մինչ այդ քայլում էի քաղաքում եւ տեսա «Կարիտաս» ընկերության երկու կանանց, որոնք ցուցանակ էին փակցրել. «Հանգանակություն ենք հավաքում Հայաստանի երկրաշարժից տուժածներին օգնելու համար»: Պարզվեց՝ ընդամենը 10 հազար լիրա, այսինքն համարյա ոչինչ չի հավաքվել: Երեկոյան եկեղեցում կայացած համերգին, որ կազմակերպել էր հնագույն տիտղոսներից մեկի ներկայացուցիչը՝ Ստեֆանո Բալեսկին, իմ խնդրանքով տեղեկացրեց հանգանակության եւ այն մասին, որ նվագախումբը հասույթից ոչինչ չի վերցնելու: 50 հազար դոլար ստացվեց, որ «Կարիտասի» միջոցով ուղղեցինք աղետի գոտի: Սա առաջին նախաձեռնությունն էր, որ հաջորդվեց նմանատիպ բազում ձեռնարկներով, բայց այդ մասին բարձրաձայնելն ավելորդ է:

Հայկական ներկայությունը անձնական հավաքածուում

Ֆրանսիացիները շատ հաճախ դրախտում են ապրում ու միաժամանակ գործադուլ անում: Հենց այդպիսի մի պահի էլ Փարիզում էինք տիկնոջս՝ Սաթիի հետ: Ժամ ու կես քայլել պետք եղավ հասնելու աճուրդի սրահ, ուր վաճառվում էին Գառզուի 2 վաղ շրջանի եւ 1 համեմատաբար հին գործերը: Չկարողացանք աճուրդում հաջողել, մի ծերուկ բավական բարձր գնով ձեռք բերեց վաղ շրջանի երկու գործերը: Հույսս կտրել էի, բայց որքան էլ զարմանալի էր, վերջին՝ երրորդ գործի հանդեպ նա հետաքրքրություն չդրսեւորեց, մյուս գնորդներն էլ իմ առաջարկած գնից, որ Սաթին էր ներկայացնում, քանի որ լավ է խոսում ֆրանսերեն, ավելին չասացին: Հաջորդ օրը Սաթին վարսավիրանոցից զանգեց ու տեղեկացրեց, որ ամսագիրը թերթելիս տեսել է Գառզուի՝ վաղ շրջանի երկու գործերը գնած մարդուն:

Արդեն արխայիկ թվացող «Մոսկվայի վիրտուոզները հայ աշխատավորներին» անվանումով փառատոնին, որ 24 տարի առաջ էր, Մարտիրոս Սարյանի թանգարանին նրա գործերից նվիրեցի: Լազար Մարտիրոսիչը շատ հուզվեց, եւ տարիներ անց Սարյանի մի գործ նվիրեց: Մինասն էլ նախընտրած նկարիչներից է:

Իսկ հայկական երաժշտությունը մասն է իմ բոլոր համերգների: Այն ունկնդիր ունի եւ բացի այդ հայաշատ վայրերը միշտ չեն: Տարիներ առաջ ընկերոջս՝ Գրիշա Կովալեւսկու հետ Բուենոս Այրեսում զբոսնելիս մոլորվեցինք ու մինչ մեզ անհրաժեշտ ուղղությունն էինք փորձում գտնել, մոտակա շենքից մի մարդ դուրս եկավ ու թե՝ Վլադիմիր ջան ցավդ տանեմ: Հետո թեյ հյուրասիրեց եւ ուղեկցեց մինչեւ հյուրանոց: Տեսնում եք, որքան տարածված ու խորն են հայկական արմատները:

Մարդ մնալու կարեւորությունը

Երաժշտությունից զատ ինձ համար մեծ կարեւորություն է մարդ մնալը՝ Աստված հիշում է ամենը: Մարդկության ցավոտ կետերն ընդհանուր են: Եվ եթե այս գիտակցմամբ քաղաքական գործիչները աշխատեն, երեւի հնարավոր լինի միավորվել հանուն արարման:

Փորձում եմ այնպես անել, որ այն, ինչով զբաղվում եմ, լույս սփռի: Չէ՞ որ երաժշտությունը մարդկային սրտին, հոգուն ուղղված կոդավորված էմոցիաների հանրագումար է: Մարդիկ ոգեւորություն պետք է զգան ու արարման մղում ունենան:

Կարոտել էինք Հայաստանը: Եվ Երեւանում, էլ չեմ խոսում Գյումրիում կայացած համերգների էներգետիկայի զորությունից՝ կրկնաելույթների ցանկությունը չէր լրում: Մարդիկ հոսնկայս էին լսում: Երբեմն, հատուկ դեպքերում հիշողությունը կարող է հաղթել ժամանակին:

Պատրաստեց՝
ՆԼՌԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ

Հայ-թուրքական երկրորդ կինոսեմինարը Երեւանում

Դեկտեմբերի 4-8-ը Երեւանում անցկացվում է հայ թուրքական երկրորդ կինոսեմինարը «Կինոն որպես երկխոսության եւ փոխըմբռնման միջոց» խորագրով: «Ոսկե ծիրան» կինոփառատոնի հրավերով կինոսեմինարին մասնակցում են 10 երիտասարդ թուրք ռեժիսորներ՝ Չիզգդեմ Մաքեր Ուսկու, Արին Ինան Ասլանը, Էզել Ակայը եւ այլք: Միջոցառման գլխավոր նպատակն է ուսումնասիրել հայ եւ թուրք ռեժիսորների եւ պրոդյուսերների համատեղ ֆիլմարտադրության հնարավորություններն ու խթանել Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ մշակութային երկխոսության խթանմանը, «Կինոյի լեզվով» աջակցել հայ եւ թուրք կինոգործիչներին: Սեմինարի ժամանակ «Ոսկե ծիրան» կինոփառատոնի գեղարվեստական ղեկավար **Սուսաննա Հարությունյանը** վստահեցրեց, որ «Կինոն որպես երկխոսության եւ փոխըմբռնման միջոց» թեմայով սեմինարը մոտ ապագայում կնշանավորվի արդյունավետությամբ: Նմանատիպ կարծիք հայտնեց նաեւ թուրք ռեժիսոր **Սենեմ Թուզենը**:

Երեւանում է գտնվում նաեւ սամբուլահայ ռեժիսոր Լուսին Դինքը՝ Հրանտ Դինքի եղբոր դուստրը, Հրանտ Դինքի մասին ֆիլմ նկարահանելու նպատակով:

Հ. Հ.

«Հայերը Թուրքիայում 100 տարի առաջ» գրքի շնորհանդեսը Երեւանում

Դեկտեմբերի 11-ին, ժ. 18:30-ին Հայաստանի Ամերիկյան համալսարանի փոքր դահլիճում հանրաճանաչ լրագրող Օսման Քյոքերը կներկայացնի իր «Հայերը Թուրքիայում 100 տարի առաջ» գիրքը: Շնորհանդեսը հնարավոր է դարձել Հայաստանի ամերիկյան համալսարանի եւ Եվրասիա համագործակցություն հիմնադրամի աջակցությամբ:

«Հայերը Թուրքիայում 100 տարի առաջ» գիրքը լույս է տեսել 2005 թվականին Թուրքիայում եւ պարունակում է բացիկներ Օրլանդո Կալումենոյի հավաքածուից: Գրքի մեջ հավաքված են հարյուր տարվա պատմություն ունեցող օսմանյան ժամանակաշրջանի բացիկներ, որոնք արտացոլում են հայկական համայնքի խաղաղ եւ, շատ դեպքերում, բարգավաճ կյանքը Օսմանյան կայսրության ժամանակաշրջանում: 500 բացիկների միջոցով ալբոմում ներկայացված են օսմանյան կայսրության տարածքում հայ համայնքի բնակության վայրերը քաղաք առ քաղաք՝ համապատասխան թվերով, եւ հայ համայնքի դերը հասարակության մեջ: Զուգահեռ Ստամբուլում եւ մի շարք այլ եվրոպական քաղաքներում անցկացվել է «Սիրելի եղբայրս» խորագրով բացիկների ցուցահանդես:

«Թուրքիայում մի ազգի՝ թուրքերի պատմությունն է միշտ ուսուցանվել, ասես երկրում երբեք այլ ազգեր չեն բնակվել: Երբ մենք խոսում ենք հայերի մասին, նրանք չեն ընկալվում որպես հասարակության մի մաս, նրանք խնդիրների աղբյուր են: Ես որոշեցի այս գիրքը հրատարակել այդ բացերը լրացնելու համար», ասել է Քյոքերը «Ֆրանսպրես» գործակալությանը տված հարցազրույցում:

Օսման Քյոքերը «Բիրգամանլար Յայընջըլըք» հրատարակչության հիմնադիրն ու գլխավոր խմբագիրն է, որը հրատարակում է գրքեր Թուրքիայի բազմազգ ժառանգության եւ այդ ժառանգության անհայտացման վերաբերյալ: Նա ծնվել է Մարաշում եւ տարիներ շարունակ աշխատել որպես թղթակից, խմբագիր եւ հրատարակիչ: Իր աշխատանքի ընթացքում նա կենտրոնացել է պատմական թեմաների վրա. 1997-2001 թթ. ընթացքում եղել է Պատմության հիմնադրամի կողմից հրատարակվող «Հասարակական պատմություն» պարբերականի խմբագիրը: Թուրքիայի տարբեր քաղաքներում եւ այլ երկրներում նա ներկայացրել է Թուրքիայում բնակվող հայ ազգի պատմությունը:

Սագրադա Ֆամիլիան մի ոչնչացրեք վերականգնումկառուցումով

Պահանջում է Իսպանիայի մտավորականությունը

Տխուր վարորդը անթափույց զգվանքով էր մի պահ հայացքը հառել արնաշաղախ դեմքով ծերունուն, որին տրամվայը մի քանի մետր քաշ էր տվել, եւ հրաժարվել հիվանդանոց հասցնել: Նրա վարմունքը միայն իր հիշողությանը չի թողնվել, քանի որ ընդամենը 5-օր անց՝ 1926 թվականի հոկտեմբերի 12-ին կիլոմետրերով ձգվող թաղման թափորը քայլում էր Բարսելոնի Սագրադա Ֆամիլիա (Սրբազան զարմ) տաճար հրաժեշտ տալու այն ծերուկին, որին դեմքով չէր ճանաչում, սակայն որի արվեստը հավերժի համար որոշել է քաղաքի դեմքը: Ծերուկը 20-րդ դարի հանճարեղ ճարտարապետ Անտոնիո Գաուդին էր, որին Բարսելոնի համալսարանի ճարտարապետական սեմինարիայում սովորելու տարիներին ղեկավարը չգիտեր հանճա՞ր, թե՞ խելացնոր համարել:

Ժամանակն, իհարկե ճարտարապետի հանճարեղությունը հաստատեց եւ այսօր էլ Իսպանիայի մտավորականությունը մտահոգ է նրա գլուխգործոցի՝ Սագրադա Ֆամիլիա տաճարի գաուդիական ոգին պահպանելու խնդրով: Ինչպես տեղեկացանք Թայմս օնլայնից, 400 իսպանացի մտավորական հռչակագիր է ստորագրել Սագրադա Ֆամիլիայի վերականգնման եւ կառույցը ավարտին հասցնելու աշխատանքները դադարեցնելու պահանջով: Նրանք հավատացած են, որ վերականգնման աշխատանքները տաճարը զրկում են Գաուդիի ներդրած ոգուց, ոչնչացնում ճարտարապետի հանճարը, որ արդեն համամարդկային մշակութային ժառանգություն է:

Իսկ Սագրադա Ֆամիլիայի շինարարությունը մեկնարկել է 1882-ին: 1891-ից կառույցի գլխավոր ճարտարապետն է եղել Անտոնիո Գաուդին, որի մահից հետո շինարարությունն ընթացել է դադարներով: Ավարտին չհասցված կառույցի շինարարությունը շարունակելու հարցը 20-րդ դարի 90-ականներին դարձել է մեծ քննարկումների առիթ եւ հայտարարվել է լիովին դադարեցնելու մասին: Այնուամենայնիվ որոշվել ու ձեռնարկվել է տաճարի կառուցումը ավարտին հասցնել 2026-ին՝ ճարտարապետի մահվան 100-ամյակի կապակցությամբ: Սակայն դժվարություններ շարք է ստեղծվել, քանի որ Անտոնիո Գաուդին աշխատել է ոչ թե նախագծային, այլ իմպրովիզի հիմքով: Իր մտահղացումներն իրականացնելու համար ճարտարապետն ի վերջո բնակություն է հաստատել կառուցվող տաճարի սենյակներից մեկում եւ մահից հետո էլ հանգրվան գտել նույն տաճարի տարածքում:

Ն. Պ.

«Արարատը» Մոսկվայում արդացուցելու բան ունի

«Կազանը», «Պախտակորն» ու «Ակտոբեն» մեր թիմի մրցակիցներն են

Ինչպես տեղեկացրել ենք, հունվարին Մոսկվայում կայանալիք ֆուտբոլի «Համագործակցության գավաթի» մրցաշարում Հայաստանը ներկայացնելու է Երևանի «Արարատը»: Երեկ Մոսկվայում կայացած վիճակահանությամբ հայտնի դարձան «Արարատի» մրցակիցները: Մեր հանրապետության փոխչեմպիոնն ու գավաթակիրը հանդես կգա «Ա» խմբում, որտեղ նրա մրցակիցները կլինեն ՌԴ չեմպիոն Ռուբինի «Կազանը», Ղազախստանի ուժեղագույն ակումբ «Ակտոբեն» եւ Ուզբեկստանի փոխչեմպիոն Տաշքենդի «Պախտակորը»: Հարկ է նկատել, որ «Արարատին» բավական ուժեղ մրցակիցներ են բաժին ընկել:

Մյուս խմբերի կազմն այսպիսին է.

«Բ» խումբ. «Աշգաբադ» (Թուրքմենստան), ՍՏԶ-ՌԻՊՈ (Բելառուս), «Էկրանաս» (Լիտվա), ՌԴ երիտասարդական հավաքական:

«Շ» խումբ. «Շախտյոր» (Ուկրաինա), «Շերիֆ» (Մոլդովա), «Լեւադիա» (Էստոնիա), «Ռեգար-Թադազ» (Տաջիկստան):

«Դ» խումբ. «Ինտեր» (Ադրբեջան), «Վենտսպիլս» (Լիտվա), «Դորդոյ-Դինամո» (Ղրղզստան), «Ինտեր» (Ֆինլանդիա):

Ինչպես նկատեցիք, բացակայում է Վրաստանի ներկայացուցիչը: Ռուսաստանի հետ լարված հարաբերությունների պատճառով վրացիները հրաժարվել են մրցաշարի մասնակցությունից: Նրանց փոխարեն հանդես է գալիս ֆիննական «Ինտերը»: «Ֆինանսական ճգնաժամի պատճառով այնքան էլ հեշտ չէ մրցաշարի կազմակերպումը, սակայն կարողացանք հնարավորություններ գտնել մրցանակի խաղարկությունն անցկացնելու: Այժմ բանակցում ենք հեռուստատեսության հետ հանդիպումները ցուցադրելու հարցում: Մրցաշարի կիսաեզրափակիչ եւ եզրափակիչ հանդիպումները ամենայն հավանականությամբ կցուցադրվեն հեռուստատեսությամբ, իսկ մյուսների հարցը դեռեւս պարզ չէ», նշել է մրցաշարի կազմկոմիտեի նախագահ Սերգեյ Կոպիկովը:

Եվ այսպես, արդեն հունվարին «Արարատին» հարկ կլինի մրցասպարեզ մտնել: Առայժմ արարատցիներն արձակուրդում են: Թիմի գլխավոր մարզչի եւ խաղացողների հարցում դեռեւս հստակություն չկա: Հայտնի է միայն, որ բրազիլացի էմիլիոյի պայմանագրի ժամկետը չի երկարաձգվել: Մյուս բրազիլացիները Մոսկվայում կխաղան «Արարատի» կազմում: Իսկ թե ինչպիսին կլինի «Արարատի» կազմը, դժվար է գուշակել: Հայտնի է, որ որոշ ֆուտբոլիստներ (Սարգիս Մովսիսյանը, Էդգարումյան եղբայրները) ցանկանում են այլ թիմեր տեղափոխվել: Բելառուսից վերադարձել է փորձառու Արթուր Ոսկանյանը եւ ամենայն հավանականությամբ կրկին կխաղա «Արարատում»:

«Արարատը» երկրորդ անգամ է հանդես գալու «Համագործակցության գավաթի» խաղարկությունում: Առաջին անգամ «Արարատը» որպես ՀՀ չեմպիոն Մոսկվայում հանդես է եկել 1994-ից: Այդ տարի արարատցիներն Արմեն Սարգսյանի գլխավորությամբ անհաջող խաղացին մոսկովյան մրցաշարում՝ տանով տալով երեք հանդիպումներն էլ: Առաջին խաղում արարատցիները 2-3 հաշվով պարտվեցին Լատվիայի չեմպիոն «Սկոնտոյին», այնուհետեւ զիջեցին Թուրքմենստանի «Կոպետդաղին» (1-4), իսկ ավարտական խաղում 5 անպատասխան գնդակ ընդունեցին սեփական դարպասը Մոսկվայի «Դինամոյի» հետ մրցավեճում:

«Համագործակցության գավաթի» խաղարկությանը մասնակցելն արարատցիների համար ոչ միայն ուժերի լավ ստուգատես է, այլեւ պատվի հարց: Միայն արժանապատիվ ելույթներով նրանք կարող են ապացուցել, որ իրոք արժանի էին ՀՀ չեմպիոնի տիտղոսին: Ճիշտ է, մրցակիցներն իրոք ուժեղ են: Առաջին անգամ ՌԴ չեմպիոն հռչակված Կազանի «Ռուբինը» մտադիր է Մոսկվայում իր մարտական կազմով հանդես գալ: Տաշքենդի «Պախտակորը» մրցաշարի հնաբնակներից է: Անցած տարի թիմը հաջող հանդես եկավ «Համագործակցության գավաթի» մրցաշարում՝ հասնելով մինչեւ եզրափակիչ, որտեղ համառ պայքարում 3-4 հաշվով զիջեց Ադրբեջանի «Խազարին»: Ի դեմ, նախնական փուլում «Պախտակորը» «Բանանցի» հետ ընդգրկված էր նույն խմբում եւ ինչպես նախորդ տարի, այս անգամ էլ հաղթեց 3-0 հաշվով: Ղազախստանի «Ակտոբեի» հետ մեր հանրապետության թիմերը «Համագործակցության գավաթի» մրցաշարերում դեռ չեն հանդիպել: Անցած տարի ղազախներն ընդգրկված էին «Բ» խմբում: Նրանք հաղթեցին «Խազարին» (1-0) եւ «Ռեգար Թադազին» (5-0), պարտություն կրեցին «Կաունասից» (2-4) ու չկարողացան քառորդ եզրափակիչի ուղեգիր նվաճել:

«Համագործակցության գավաթի» մրցաշարերում Հայաստանից հանդես են եկել 6 թիմեր՝ «Փյունիկը», «Արարատը», «Շիրակը», «Երեւանը», «Ցեմենտն» ու «Բանանցը»: Առայժմ բոլորից հաջող է հանդես եկել «Փյունիկը», որը 2006 թ. հասել է մինչեւ կիսաեզրափակիչ: Այդ փուլում «Փյունիկը» հրաժարվեց Բաքվի «Նեֆչիի» հետ խաղալուց, որի համար որակազրկվեց եւ այլեւս չի հրավիրվում Մոսկվա: Ուստի արդեն 3-րդ անգամ Մոսկվայում Հայաստանը ներկայացնում է ոչ թե հանրապետության չեմպիոնը, այլ արծաթե մրցանակակիրը: Նախորդ երկու խաղարկություններին մասնակցել է «Բանանցը», որին չի հաջողվել հաղթահարել նախնական փուլի արգելը:

Բագատուրովը հուսամրցաշարի հաղթող

Հայաստանցի գրոսմայստեր Գեորգի Բագատուրովը հաղթող ճանաչվեց Թբիլիսիում անցկացված Տիգրան Պետրոսյանի հուշամրցաշարում: Նա 53 շախմատիստների մրցավեճում ժյուրիական մրցակարգով անցկացված մրցաշարում 7 հնարավորից վաստակեց 6 միավոր: Մրցաշարը կազմակերպել էր ՆՏՆ շախմատային ակումբը: Այն իր անվան մեջ ներառում է հանրահռչակ շախմատիստներ Նոնա Գափրինդաշվիլու, Տիգրան Պետրոսյանի եւ Նանա Ալեքսանդրիայի անունների սկզբնատառերը:

Պլամեն Մարկովը հեռացվեց պաշտոնից

Բուլղարիայի ֆուտբոլի ֆեդերացիան պաշտոնանկ է արել երկրի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ արել երկրի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Պլամեն Մարկովին: Նրա գլխավորությամբ Բուլղարիայի հավաքականն աշխարհի առաջնության ընտրական մրցաշարում այնքան էլ հաջող չի մեկնարկել: Ջենոգորիայի, Իտալիայի եւ Վրաստանի հավաքականների հետ հանդիպումներում գրանցվել են ոչ-ոքի արդյունքներ: Վերջերս էլ Բուլղարիայի հավաքականն ընկերական մրցախաղում 1-6 հաշվով ջախջախիչ պարտություն կրեց Սերբիայից, որից հետո ֆուտբոլի ֆեդերացիայի ղեկավարության համբերության բաժակը լցվեց:

51-ամյա Պլամեն Մարկովը հավաքականը մարզեց գրեթե մեկ տարի: Նա հավաքականի ղեկը սանձնել էր նաեւ 2002-2004-ին: Այդ ժամանակ հավաքականը բավական հաջող հանդես եկավ Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարում՝ նվաճելով եզրափակիչի ուղեգիր: Մարկովից հետո Բուլղարիայի հավաքականը մարզել են Խրիստո Ստոիչկովն ու Դիմիտար Պենեւը:

Մրցանակների հավակնորդները որոշվել են

Տարին մոտենում է ավարտին եւ եկել է արդյունքներն ամփոփելու ու լավագույններին որոշելու ժամանակը: Իտալիայում էլ արդեն որոշվել են ֆուտբոլային «Օսկարների» հավակնորդները:

Կառլո Անչելոտին, Լուչանո Սպալետտին եւ Չեզարե Պանդեւին լավագույն մարզչի համար սահմանված մրցանակի հավակնորդներն են: Ցուցակում բացակայում է Ռոբերտո Մանչինին, որը անցած մրցաշրջանում պաշտոնանկ էր արվել:

Իտալիայի առաջնության լավագույն լեգեոնականի տիտղոսի թեկնածուներն են բրազիլացի Կական, շվեդ Զլատան Իբրահիմովիչը եւ ռումինացի Ադրիան Մուտուն: Իսկ իտալացի լավագույն ֆուտբոլիստի կոչման համար պայքարում են Ալեսանդրո դել Պիերոն, Դանիելե դե Ռոսին եւ Անդրեա Պիրլոն: Լավագույններին վերակությամբ կորոշեն «Ա» սերիայում հանդես եկող ֆուտբոլիստները: Հիշեցնենք, որ անցած տարի բրազիլացի Կական միանգամից երկու մրցանակի էր արժանացել՝ ճակատագրական միանգամից երկու մրցանակի էր արժանացել՝ ճանաչվելով Իտալիայի լավագույն ֆուտբոլիստ եւ լավագույն լեգեոնական:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Մարդկային հնարավորությունների սահմանագիծն անկանխատեսելի է

Ստենֆորդի համալսարանի պրոֆեսոր Մարկ Դենին տարբեր փորձերի եւ ուսումնասիրությունների արդյունքում եկել է այն եզրակացության, որ 100 մ վազքի աշխարհի ռեկորդը հնարավոր է բավականաչափ բարելավել: Ըստ նրա, մարզիկները հնարավորություն ունեն մրցաշարածությունը հաղթահարել 9,48 վրկ-ում:

Հիշեցնենք, որ 100 մ վազքի աշխարհի ռեկորդը ներկայում պատկանում է ճամայկացի վազորդ Ուսեյն Բոլտին, որը Պեկինի օլիմպիադայում մրցաշարածությունը հաղթահարել է 9,69 վրկ-ում: Մարկ Դենին հայտարարել է, որ իր աշխատանքի արդյունքում պարզվել է, որ մարդու արագությունն իր սահմաններն ունի: Սակայն մինչեւ վերջ պարզված չեն այդ սահմանները:

Դեռեւս սեպտեմբերին նորվեգացի ֆիզիկոս Հանս Էրիկսենն ուսումնասիրելով պեկինյան օլիմպիադայում 100 մ վազքի տեսագրությունը, եկել էր այն եզրակացության, որ եթե Բոլտը ժամանակին շուտ չսկսեր տոնել հաղթանակը, ապա նրա արդյունքը կկազմեր 9,55 վրկ:

Մարկ Դենիի ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ ահա թե ինչպիսի կարծիք են հայտնել մասնագետները:

Վալենտին Մասլակով (ՌԴ հավաքականի գլխավոր մարզիչ)-Կարծում եմ, որ Բոլտն իրոք ի վիճակի է 100 մետրը հաղթահարել 9,48 վրկ-ում: Այդ մասին է վկայում Պեկինում նրա վազքը: Ինձ մոտ էլ այնպիսի զգացում է, որ օլիմպիադայում նա առանձնապես չէր ձգտում աշխարհի ռեկորդը բավականաչափ բարելավել, որպեսզի հետագայում եւս հնարավոր լիներ նոր ռեկորդներ սահմանել: Չի կարելի ժխտել, թե հնարավոր չէ 100 մետրը հաղթահարել 9,30 կամ 9,20 վրկ-ում: Հնարավոր է, որ տարիներ անց ի հայտ գա այնպիսի արագավազորդ, որին հաջողվի նման ֆենոմենալ արդյունքի հասնել:

Ալեքսանդր Պոդխոմովսկի (100 մ վազքի ՌԴ նախկին ռեկորդակիր)-Պեկինում հնարավոր 9,55 արդյունքի մասին համակարծիք չեմ, քանի որ վազքի վերջում բոլորի մոտ էլ տեմպն ընկնում է: Եթե մարդ լարվում է, ապա վերջնագծում արագությունն ավելի է նվազում: Կարծում եմ, որ Բոլտի պարագայում խոսքը

0,01 վրկ-ի մասին է, ինչն այնքան էլ էական չէ: Ինչ վերաբերում է Բոլտի հնարավորությունների սահմանագծին, ապա նա մյուսների կողքին կարծես այլմոլորակային լինի: Իհարկե, օլիմպիադայում նա ֆենոմենալ արդյունքի հասավ: Սակայն նրա հնարավորությունները գնահատելու համար անհրաժեշտ է ներկա գտնվել մարզումներին: Ինչ խոսք, նա ֆենոմենալ մարզիկ է: Հավանաբար նրա մկաններում ինչ-որ առանձնահատուկ գործընթացներ են տեղի ունենում, որոնք հասու չեն մյուսներին:

ԲԿՄԱ-ն հաղթանակով հրաժեշտ տվեց Գազաեւին

ՈՐԵՖԱ-ի գավաթի խաղարկության խմբային մրցաշարում կայացավ եւս 8 հանդիպում, որի արդյունքում գերմանական «Վոլֆսբուրգն» ու «Համբուրգը», իսպանական «Վալենսիան», հոլանդական «Այաքսը», անգլիական «Աստոն Վիլլան» ու պորտուգալական «Բրագան» ժամկետից շուտ 1/16 եզրափակիչի ուղեգիր նվաճեցին:

Վալերի Գազաեւի գլխավորությամբ իր վերջին խաղն անցկացրեց Մոսկվայի ԲԿՄԱ-ն, որը նախորդ հանդիպումներում հաղթանակներ տոնելով, արդեն ապահովել էր իր տեղը հաջորդ փուլի մասնակիցների շարքում: «Նանսիի» հետ արտագնա խաղում էլ ԲԿՄԱ-ն հաղթանակի վճռականությամբ գործեց ու 4-3 հաշվով տոնած հաղթանակով հրաժեշտ տվեց Գազաեւին, որը դեռեւս մրցաշրջանի ընթացքում հայտարարել էր թիմից հեռանալու մասին: ԲԿՄԱ-ի կազմում արդյունավետ խաղով կրկին աչքի ընկավ ՌԴ առաջնության լավագույն ռմբարկու, բրազիլացի հարձակվող Վագներ Լավը: Նա իր օգտին 3 գոլ գրանցեց, որոնցից վերջինը խփեց 88-րդ րոպեին եւ հաղթանակ պարգեւեց իր թիմին: Նույն խմբում կայացած մյուս խաղում «Լեխն» ու «Դեպորտիվոն» մեկական գնդակ փոխանակեցին: «Դեպորտիվոն» ու «Նանսին» վաստակել են 4-ական միավոր, «Լեխն» ունի 2 միավոր: Այս թիմերն էլ ավարտական տուրում կվիճարկեն մնացած երկու ուղեգրերը:

«Ե» խմբից ուղեգիր նվաճեց «Վոլֆսբուրգը»՝ 3-2 հաշվով պարտության մատնելով «Պորտսմուտին»: Պորտուգալական «Բրագան» էլ նույնպիսի բախտի արժանացավ՝ առավելության հասնելով «Հերենվենի» նկատմամբ (2-1):

«Այաքսը» թեեւ այս տուրում խաղադաշտ չմտավ, սակայն ուղեգիր նվաճեց շնորհիվ «Համբուրգի», որը հյուրընկալվելիս 2 անպատասխան գնդակ խփեց «Սլավիայի» դարպասը: Հետաքրքրական է, որ «Սլավիայի» գլխավոր մարզչի որդին՝ Դավիթ Յարոլիմը հանդես էր գալիս «Համբուրգում»:

Պայքարը կշարունակի նաեւ իսպանական «Վալենսիան», որին ուղեգիր նվաճման համար բավարարեց «Բրյուգեի» հետ խաղում գրանցված ոչ-ոքին (1-1): Ի դեմ, վերջերս լրատվամիջոցներում լուրեր էին տարածվել «Վալենսիայի» սնանկացման մասին, սակայն ակումբի ղեկավարությունը հերքել էր դա: Նույնպիսի արդյունքով ավարտվեց նաեւ «Կոպենհագեն»-«Ռուսենբորգ» հանդիպումը:

«Սլավիայի» պարտությունը նպաստեց նաեւ «Աստոն-Վիլլայի» հաջորդ փուլ դուրս գալուն, թեեւ անգլիական ակումբը 1-2 հաշվով զիջեց «Ժիլինային»:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ

Օրվա հետքերով

«Նախաձեռնողներից ոչ ոք «ցեղասպանություն» բառը չի օգտագործում»

Հայտարարում է «հայերից ներողություն խնդրելու» ստորագրահավաքի կազմակերպիչ Բասքին Օրանը

Նախորդ օրը «Նոյյան տապանը», հենվելով պոլսահայ «Մարմարա» եւ թուրքական «Վաքան» թերթերի վրա, տարածել էր հաղորդագրություն հայերից ներողություն խնդրելու թուրք մտավորականների նախաձեռնության մասին: Նույն օրը դրան անդրադարձավ NTV-MSNBC-ին, իսկ երեկ՝ Թուրքիայում հրատարակվող կենտրոնական թերթը: Նախաձեռնությունը ենթադրում է ինտերնետային էջ բացել եւ հունվարի 1-ից ստորագրություն հավաքել:

Ինտերնետային ստորագրահավաքը նախաձեռնել են Անկարայի համալսարանի պրոֆ. Բասքին Օրանը, Ստամբուլի մասնավոր «Գալաթասարայ» համալսարանի պրոֆ. Ահմեդ Ինսելը, ինչպես նաեւ «Բահչեշեհիր» համալսարանի դոց. Ջենգիզ Ափքարը եւ կառավարամետ «Ենի շաֆաք» թերթի Ալի Բայրամօղլուն: Ի դեպ, նախաձեռնող կողմի բոլոր 4 անդամներն էլ եղել են հանգուցյալ Հրանտ Դինքի մերձակա շրջապատում:

Ինչ վերաբերում է ստորագրահավաքի համար ներկայացվող տեքստին, ապա դա ունի հետեւյալ ձեւակերպումը. «Խիղճս չի տանում 1915-ին օսմանցի հայերի ենթարկված Մեծ աղետի նկատմամբ ցուցաբերվող անտարբերությունն ու ժխտումը: Մերժում եմ այս անարդար վերաբերմունքը, վշտակցում իմ հայ եղբայրներին ու քույրերին եւ ներողություն եմ խնդրում նրանցից»:

Այս նախաձեռնությունը Թուրքիայում աննախադեպ է, ինչո՞վ է դա պայմանավորված: Այդ հարցին NTV-MSNBC կայքէջում պատասխանել են նախաձեռնողները: **Բասքին Օրանն** ասել է. «Խղճի տեր յուրաքանչյուր ոք կստորագրի այս տեքստը: Կարող են նաեւ ենթադրել: Սակայն Անատոլիայում 1,8 մլն հայ կար, 60 հազար է մնացել: Այդ մարդիկ, հավանաբար, չգոլորշացան, մեծ ողբերգություն ապրեցին: Ոչ ոք չի կարող դա ժխտել: Սակայն բանավեճի առարկան դա չէ, այլ դրա առնչությունը ցեղասպանությանը: Չորս նախաձեռնողներից ոչ մեկն «ցեղասպանություն» բառը չենք օգտագործում, որովհետեւ իրավաբանական հասկացություն է: Մինչդեռ հայերը դա քաղաքական իմաստով են օգտագործում: Երկրորդ՝ ցեղասպանությունը Եվրոպայում եւ Թուրքիայում տարբեր ձեւով է ընկալվում: Թուրքիայում օգտագործվում է միմիայն հրեաների Հոլոքոսթը արտահայտելու համար: Համոզված եմ, որ այս (1915-ի) իրադարձությունները որպես ցեղասպանություն բնութագրելը եւ գիտականորեն, եւ քաղաքականապես սխալ է: Բանավեճի առարկան հենց «ցեղասպանություն» բառն է: Թեեւ ես պատասխանատու չեմ օսմանյան շրջանում կատարվածի համար, սակայն չեմ կարող պատասխանատվություն չկրել Թուրքիայի Հանրապետության փոխարեն, որն ավելի քան 85 տարի իրողությունը ժխտել եւ քողարկել է»:

Ջենգիզ Ափքար. «Չենք պատրաստվում հավաքված ստորագրությունները ներկայացնել որեւէ հիմնարկի: Սակայն հայերը մեծ վիշտ են ապրել եւ ոչ ոք երկրում չի կարողանում ասել, որ նրանք մեղք են: Արդեն մենք, իբրեւ ազգ, ներողություն խնդրել չգիտենք: Տեսնում նշված «Մեծ աղետ» հասկացությունը հենց իրենք հայերն են օգտագործում: Դա էապես տարբերվում է «ցեղասպանություն» հասկացությունից, որը շրջանառության մեջ է դրվել 1948-ին, մինչդեռ 1915-ին այդպիսի հասկացություն չկար: (Անատոլիայում) այլեւս հայ չկա, սակայն թուրքերն ու քրդերը շարունակում են մնալ իրենց տեղում»:

Ալի Բայրամօղլու. «Ստորագրահավաքի գաղափարը մի քանի տարվա վաղեմություն ունի: Առաջ քաշեց Ջենգիզ Ափքարը: Նրան միացա ես, ապա Ինսելն ու Օրանը, եւ որոշեցինք իրականացնել: Սա չքաղաքականացված անհատական նախաձեռնություն է: Չի կարելի զուգահեռներ անցկացնել ստորագրահավաքի եւ Ֆրանսիայի խորհրդարանի վերջին զարգացումների միջեւ, որոնք, իմ կարծիքով, Թուրքիայի տեսանկյունից դրական են եւ մենք սպասում էինք այդ ընթացքը»:

Ահմեդ Ինսել. «Մեր նպատակը հայ եղբայրներից ներողություն խնդրելու միջոցով նրանց նկատմամբ կրած վշտերի համար խղճի պարտքը կատարելն է: Անտարբերության գլխավոր պատճառը իրազեկության բացակայությունն է: Մեզ տասնյակ տարիներ այնպես են դաստիարակել, թե իբր ցավալի իրադարձություններ չեն եղել: Ուրացումն ինքնին անարդարության դրսեւորում է: Նույնիսկ չգիտենք, հայերը կատարվածի համար ում են մեղադրում. թուրք ազգի՞ն, Թուրքիայի Հանրապետությա՞նը, թե՞ Օսմանյան կայսրությանը: Չենք էլ կարողանում հարցը ենթարկել: Քանի որ վախի երեւակայական աշխարհում մենք չափազանցում ենք մեր խնդիրները, ոսի դրանով ինքներս մեզ կաշկանդում ենք: Ինձ չի հետաքրքրում, թե հայերը ում են մեղադրում: Դա հայերի խնդիրն է: Ես պարզապես անձնական ներողություն եմ խնդրում, այլ ոչ թե թուրք ազգի անունից: Իհարկե, այս նախաձեռնությունը չի նշանակում ժխտել Թուրքիայում մահմեդականների դեմ հայ ավազակախմբերի իրագործած կոտորածները: Սակայն երկրում, ըստ օսմանյան մարդահամարների, ավելի քան 1 մլն հայ էր բնակվում: Նրանց մի մասը սպիտված երկրից հեռացավ, մյուսը՝ սպանվեց, մի մասին էլ քշել են Թուրքիայից: Նույնիսկ փորձել են նրանց հետքը ջնջել»:

Վերոհիշյալ գնահատականները ցույց են տալիս, որ «հայերից ներողություն խնդրելու» այս նախաձեռնությունը, անձամբ հեղինակների խոստովանությամբ, ընդամենը թուրքական ժխտողականությունն ընդունելի դարձնելու փորձ է, ինչը անհամեմատ մեծացնում է հայոց ցեղասպանության միջազգային գործընթացը կասեցնելու թուրքական պետական առաջադրանքի արդյունավետությունը:

Ինչ վերաբերում է նախաձեռնության հեղինակներին, ապա նրանց առաջադրանքը ցեղասպանության ճանաչման գործընթացի վերահսկումն է, վերահսկողության արդյունավետությունն էլ, ինչ խոսք, մեծացնելու է «հայերից ներողություն խնդրելու» ստորագրահավաքը: Չնայած այս ամենին, ստորագրահավաքին կտրականապես հակադրվել է ԱՄՆ-ում Թուրքիայի նախկին դեսպան Ֆարուք Լոջոյլուն, ասելով. «Սահմաններ ունի նաեւ մտքի ազատությունը: Նկատի ունեմ ներողություն խնդրելու կամայականությունը: Կարծում եմ, նրանք այդ իրավունքը չունեն, որովհետեւ ՄԱԿ-ի Ցեղասպանության կոնվենցիան նախատեսում է պատժել մարդկության դեմ հանցագործություն կատարածներին, իսկ չկա մեկը, որ հայերի պնդումների համար դատապարտվի: Ներողություն խնդրել ուրիշներից մի հանցանքի համար, որի մեղավորներն անհայտ են, ճիշտ չէ: Էլ չեմ խոսում այն մասին, որ հայկական կողմը հանցանքի ողջ պատասխանատվությունը բարդում է թուրք ազգի վրա: Այս մտավորականները թուրքական հասարակությունից տարանջատվելու եւ ներողություն խնդրելու ինչ արտոնություն ունեն: Եթե անհրաժեշտ է ներողությունն, ապա դա պետք է փոխադարձ կատարվի: Այս նախաձեռնությունը անփառունակ եմ համարում նաեւ ժամանակացույցի առումով, որովհետեւ բազմաթիվ այլ մտավորականներ համոզված են, որ Թուրքիան մինչեւ ապրիլի 24-ը քայլեր եթե չկատարի, ապա Օբամայի վարչակարգը կճանաչի ցեղասպանության պնդումները: Եթե այս ստորագրահավաքը ԱՄՆ-ում կամ այլ երկրներում խթանի հայկական պնդումներին ցուցաբերվող աջակցությունը, ապա Թուրքիան վերստին կոչ դիրքորոշում կբռնի, իսկ դա, ինչ խոսք, ավարտին կհանգեցնի Թուրքիա-Հայաստան երկխոսությունը, հանդիպումների գործընթացն ու բարենպաստ մթնոլորտի ձեւավորումը»:

Հ. ՉԱՔԲՅԱՆ

ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎՐՈՊԱՅԻՑ

Պրահայում կնշվի երկրաշարժի 20-ամյա տարելիցը

Դեկտեմբերի 8-ին Չեխիայի Սենատի նախագահ Պրշեմիսլ Սոբոտկայի բարձր հովանավորությամբ եւ Հայաստանի դեսպանության կազմակերպությամբ Սենատի դահլիճում կնշվի հայաստանյան երկրաշարժի 20-ամյա տարելիցը: Հայտնի է, որ դեռ նախկին Չեխոսլովակիան առաջին օտարերկրյա պետություններից մեկն էր, որ երկրաշարժից անմիջապես հետո մեծ օգնություն ուղարկեց Հայաստան: Ինչպես մեզ հետ զրույցում նշեց «Արմենիա ակումբ» կազմակերպության նախագահ **Տիգրան Աբրահամյանը**, որն ակտիվ մասնակցություն է ունեցել երկրաշարժից հետո չեխական օգնության ուղարկման հարցում, մի քանի օրում 100 միլիոն կրոնից ավելի գումար է հավաքվել եւ ուղարկվել Հայաստան: «Պրահայում իսկական իրարանցում էր, մարդիկ հագուստ ու տաք վերմակներ էին բերում երկաթուղային կայարան, որպեսզի գնացքներով ուղարկեն Հայաստան, պատմում է Տիգրանը: Այդ ամենը կատարվում էր «Հումանիտար համագործակցության համար» հիմնադրամի միջոցով: Այն օրերին Պրահայից ուղարկվեցին խմելու ջրի մաքրման գործիքներ, դաշտային հիվանդանոցներ, հավաքված գումարով Սոֆիտակում կառուցվեց դպրոց՝ իր կից շինություններով: Այնուհետեւ չեխական մամուլում հայտնվեցին հրապարակումներ, որ ուղարկված օգնությունը ճիշտ ձեւով չի ծախսվում, եւ որոշվեց այլեւս գումար չուղարկել: Լրագրող Դանա Մազալովան եւ Տիգրան Աբրահամյանը կազմակերպել են, որ այդ գումարով գոնե Գյումրիի տուժած երեխաներին մեկ ինքնաթիռով բերեն Չեխիա հանգստի՝ այդպիսով նաեւ հոգեբանական օգնություն ցույց տալով նրանց:

Սենատում կազմակերպվելիք երեկոյին ծրագրվում է ընդհանրական պատվոգրեր հանձնել հատկապես այն չեխերին, ովքեր ակտիվ մասնակցություն են ունեցել երկրաշարժից հետո Հայաստանին օգնելու հարցում: Կլինեն նաեւ այդ տարիներին նկարահանված չեխական վավերագրական ֆիլմի ցուցադրություն եւ դասական երաժշտության համերգ:

Երկրաշարժի 20-ամյակի շրջանակներում արդեն իսկ «Օկո» կինոթատրոնում տեղի ունեցավ «Գյումրի» ֆիլմի պրեմիերան, իսկ դեկտեմբերի 7-ին Պրահայի կենտրոնական Յիլյիի եկեղեցում տեղի կունենա հոգեհանգստյան պատարագ: Դեկտեմբերի 9-ին Պրահայի քաղաքային գրադարանում կբացվի չեխ լուսանկարիչներ Յան Վիշկովսկու, Պավել Կոլինսկու, Լուկաշ Պոսոլդայի ու Կատերինա Լանգրովայի երկրաշարժի գոտում արված լուսանկարների ցուցահանդեսը: Իսկ դեկտեմբերի 10-ին «Վիոլլա» թատրոնում կրկին կներկայացվի սենատոր Յարոմիր Շտեդրոնայի համանուն պատմվածքի բեմադրությունը՝ «Հրաբխների դարը», որը նվիրված է երկրաշարժի ժամանակ տուժած Գյումրիի ընտանիքներից մեկի պատմությանը:

ՀԱՅՈՐ ԱՍՏՂԻԿ
Պրահա

Խտնացած 12 000 ճակատագրեր «կոնտեյներներում»

Գերմանիայի հարավում հրատարակվող «Գյունդեր թագեսփոստը» դեկտեմբերի 5-ի իր համարում անդրադարձել է Գյումրիին՝ գունավոր լուսանկարներով պատմելով դժգույն ճակատագրերի մասին:

Հատկապես տարվա այս եղանակին, երբ Կովկասի հարավում գրտում է, Հայաստանի հյուսիսային քաղաք Գյումրիում կյանքը դժվարանում է: 1988-ի երկրաշարժից ավերված քաղաքում մինչեւ հիմա 12.000 մարդ ապրում է «կոնտեյներներում»: Նրանց մեջ նաեւ՝ 75 երեխա, ովքեր 4 տարի առաջ Գյումրիում գերմանացիների հիմնած «Գթասրտության խոհանոցի» աջակցությունն են ստանում: Քահանա Կարլ-Հայնց Շայդեն Երեւանում գտնվելիս այցելում է նաեւ Գյումրի: Երեխաներին նրա այցը ուրախացնում է՝ գիտեն՝ նվեր է բերելու: Այս անգամ էլ Շայդեն փաթեթներ ունի՝ տաք հագուստ, որ համայնքի աշխատասեր կանանց ձեռքի գործն է: Երեխաների խնամատարությունն իրականացնում է Գեղանուշ Գյունաբյանի ղեկավարած սոցիալական կենտրոնը, ուր աշխատում են իր նման 8 կամավորներ: Այստեղ հոգ են տանում, որ երեխաները դպրոց գնան, ուտեն ու մինչեւ երեկո մնան կենտրոնում, հետո վերադառնան իրենց «կոնտեյներ»՝ ծնողների կամ հարազատների մոտ: Գյունդերի դպրոցները նստարաններ ու համակարգիչներ են առաքել Գյումրի: Թերթի հոդվածագիրը ներկայացնում է երեխաների տխուր ճակատագրերը. Ղերջյանների (գերմաներենից տառադարձելիս հնարավոր է ազգանուններում անճշտություն լինի) ընտանիքում մայրը մահացել է ուղեղի քաղցկեղից, հայրը հարբեցող է, եւ երեխաների խնամքով զբաղվում է կենտրոնը: Տիկին Զաքարյանը միայնակ է մեծացնում իր 3 երեխաներին, որ 1988-ից «կոնտեյներում» են ապրում: Ծառուկյանների գործազուրկ ընտանիքն ապրում է մի վագոնում: Երեխաների մի մասը հաշմանդամ է: 12-ամյա Գոհարիկը մոր հետ ապրում է թիթեղյա տնակում. մինչ կենտրոնի նրան հայտնաբերելը, դպրոց չի հաճախել: Կենտրոնը մորն էլ է աջակցել՝ սնունդ է տվել եւ հոգ տարել, որ Գոհարիկը ուսափույթ դպրոց հաճախի՝ իր հասակակիցներից 5 տարի հետո: Վերջապես Հախվերդյան ընտանիքը. 5 երեխաներին հոգ է տանում 25-ամյա մայրը, հայրը վերջերս է հեռացել: Ահա այս ճակատագրերն են, որ Շայդերին պարտադրում են նորից Գյումրի գնալ՝ այնտեղի ցավը մի փոքր մեղմելու հույսով:

Հոդվածին կցված է մի հաշվեհամար, որին կատարված դրամական փոխանցումն ուղարկվելու է «Գթասրտության խոհանոց»-ին:

Ուզում ես հավատալ, որ հաջորդ տարի՝ երկրաշարժից 20 տարի հետո նման հոդվածներ տեղական ու դրսի մամուլում էլ չես գտնելու:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

ԿՈՐԵԼ Է

«Արդիմփեխ» պետական առեւտրաարտադրական ձեռնարկության «**Այեթալայի առեւտրաարտադրական» ԴՋ-ի** կնիքը եւ պետական ռեգիստրի թիվ 01Ա 018730 վկայականը (գրանցման N96.070.00190): Համարել անվավեր:

ՀՀ կենտրոնական բանկը տեղեկացնում է, որ արժութային շուկայում ձեւավորվել են հետեւյալ արտարժույթների միջին փոխարժեքները. 5.12.2008 թ.

ISO-ի կոդը	Միավոր	Արտարժույթ	Միջին փոխարժեք
USD	1	ԱՄՆ դոլար	307.82
EUR	1	ԵՎՐՈ	392.78
RUR	1	Ռուս. ռուբլի	10.96
GEL	1	Վրաց. լարի	186.56

ՁՈՎԱՅԴԻ ՀԱՄԱՐ ՅԱՆԵՑՔԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունեություն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրած է տպագրության՝ 5.12.2008, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արշակունեաց 2: